



Հերագորական խմբի ղեկավար՝

ԱՐՓԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Կրթության գիտությունների թեկնածու, դոցենտ

Հերագորական խմբի անդամներ՝

ԾՈՎԻՆԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կրթության գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳԱՐԻԿ ՍԻՐՈՅԱՆ

Կրթության գիտությունների թեկնածու, դոցենտ

ԼԻԱՆԱ ՖԻԴԱՆՅԱՆ

Կրթության գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԱՐԻԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

ՀԱՍՄԻԿ ԶԱՐԱՄՅԱՆ

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի ուսանող

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ**

DOI: 10.52174/978-9939-61-252-2

Ե Ր Ե Վ Ա Ն

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2022

ՀՏԴ 338.43:339.137.2
ԳՄԴ 65.32
Գ 680

*Հրատարակության է. երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը*

Մասնագիտական խմբագիր՝

Ս. Ավետիսյան

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գրախոսներ՝

Հ. Մնացականյան

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ռ. Հակոբջանյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝

Դ. Գալոյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Թ. Մկրտչյան

տ.գ.դ., դոցենտ

Դ. Հախվերդյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Գ. Նազարյան

տ.գ.թ., դոցենտ

Գյուղատնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ՀՀ Վայոց
Գ 680 ձորի և Արարատի մարզերում / Ա. Հովակիմյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2022.-
130 էջ.- («Ամբերդ» մատենաշար 54):

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ Վայոց ձորի
և Արարատի մարզերի գյուղատնտեսության մրցունակության հիմնախնդիրները,
իրականացվել է հիշյալ մարզերի գյուղատնտեսության ոլորտի մրցունակու-
թյունն ապահովող արդյունավետության ցուցանիշների վերլուծություն և մրցակ-
ցային ներուժի գնահատում:

Հեղինակները համակողմանիորեն հետազոտել և ներկայացրել են ապահո-
վագրական համակարգի, ինչպես նաև տեխնոլոգիական նորարարությունների
ներդրման ազդեցությունը ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերի գյուղատնտե-
սության մրցունակության ապահովման վրա:

ՀՏԴ 338.43:339.137.2
ԳՄԴ 65.32

ISBN 978-9939-61-252-2

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2022
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
Գլուխ 1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....	7
1.1. Գյուղատնտեսության ոլորտում մրցունակության վրա ազդող գործոնները և պայմանները	7
1.2. Գյուղատնտեսության ոլորտում մրցունակության ապահովման համաշխարհային փորձը	19
Գլուխ 2. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	29
2.1. ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշների վերլուծություն.....	29
2.2. ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական արտադրության մրցունակության բարձրացման հիմնախնդիրների վերլուծություն.....	48
2.3. Գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունն ապահովող արդյունավետության ցուցանիշների վերլուծությունը և գյուղատնտեսության մրցակցային ներուժի գնահատումը Վայոց ձորի և Արարատի մարզերում	55
2.4. Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ և արտահանմամբ զբաղվող կազմակերպությունների գործունեության վերլուծությունը Վայոց ձորի և Արարատի մարզերում	61
Գլուխ 3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ	70
3.1. Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերը՝ որպես մրցունակության բարձրացման գործոն	70
3.2. Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական ապահովագրական համակարգի ներդրման գործընթացը	77
3.3. Տեխնոլոգիական նորարարությունների ներդրման ազդեցությունը ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերի գյուղատնտեսության մրցունակության ապահովման վրա	87
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	107
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	111
ՀԱՎԵԼՎԱԾ	114
ՀԱՄԱՌՈՏԱԳՐԵՐ	122

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտը երկրի տնտեսության առաջատար ճյուղերից մեկն է: Հաշվի առնելով պարենային անվտանգության հիմնախնդիրը, գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը, ինչպես նաև գյուղատնտեսության առջև ծառայած մարտահրավերները՝ առանձնակի կարևորություն է ձեռք բերում այս ոլորտի մրցունակության բարձրացումը:

Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ չկա գյուղատնտեսության մրցունակության գնահատման միասնական մոտեցում: Արևմրտյան հետազոտողները հակված են այս կատեգորիայի քանակական գնահատմանը: Նրանց նպատակն է՝ բացահայտել գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության վրա ազդող գործոնները, քանակապես գնահատել դրանք և հաշվարկել մրցունակության ամփոփ համաթիվը:

Ռուսաստանցի հեղինակները մեծ ուշադրություն են դարձնում գյուղատնտեսության մրցունակության վրա ազդող գործոնների վերլուծությանը: Միննույն ժամանակ, մրցունակության գնահատման հարցում չի անտեսվում վիճակագրական մեթոդների կիրառման կարևորությունը: Առաջարկվում են այս ցուցանիշի գնահատման տարբեր համաթվեր և մեթոդներ:

Գոյություն ունեն մրցունակության մի շարք չափանիշներ, որոնք գրեթե բոլոր երկրներում կարևոր դերակատարություն ունեն գյուղատնտեսության ոլորտում: Միասնական մոտեցման բացակայությունը և բազմաթիվ գործոնների առկայությունը հանգեցնում են այս խնդրի ավելի հանգամանակից ու համակարգված քննարկման անհրաժեշտությանը՝ հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտի զարգացման ժամանակակից միտումները:

Հետազոտության իրականացման ընթացքում օգտագործվել են համակարգային մոտեցման, ինչպես նաև համեմատական վերլուծության ու համադրման, տվյալների բազաների վիճակագրական վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:

Հետազոտության համար տեղեկատվական և մեթոդական հիմք են հանդիսացել գրասենյակային ուսումնասիրությունները, որոնք մասնավորապես ներառել են քաղաքականության փաստաթղթերի, ռազմավարությունների քննություն և վերլուծություն, համապատասխան հետազոտական, վերլուծական նյութերի և գրականության ուսումնասիրություն, արդյունքների համադրում: Կիրառվել է նաև ժամանակային շարքերի վերլուծության և կանխատեսման մեթոդը, որի օգնությամբ հետազոտության շրջանակում դիտարկվել են Վայոց ձորի և Արարատի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշները: Վիճակագրական վերլուծության նկարագրական մեթոդի շտրիկիվ իրականացվել է միջին և հարաբերական ցուցանիշների գնահատում և վերլուծություն, ինչպես նաև ցուցանիշների համախմբի կառուցված-

քի և կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրում: Մասնավորապես, վերլուծությունն իրականացվել է ըստ տեսակների՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների, համախառն արտադրանքի և բերքատվության, անասնաբուծական հիմնական արտադրանքի արտադրության և ըստ այլ ցուցանիշների:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

**1.1 Գյուղատնտեսության ոլորտում
մրցունակության վրա ազդող գործոնները
և պայմանները**


Ագրոարդյունաբերական համալիրն առանձնահատուկ նշանակություն ունի երկրի տնտեսության զարգացման համար: Այն տնտեսության հիմնական ոլորտներից մեկն է, որի դերակատարումը հասարակության բնականոն կենսագործունեության ապահովման առումով մեծապես կարևորվում է: Ագրոարդյունաբերական համալիրը ներառում է գյուղատնտեսությունը, գյուղատնտեսության համար անհրաժեշտ մեքենաների և սարքավորումների արտադրությունը, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակումը և իրացումը, ինչպես նաև այս համալիրի գիտական, ուսումնական և խորհրդատվական ենթակառուցվածքները:

Գյուղատնտեսությունը ագրոարդյունաբերական համալիրի հիմնական բաղադրիչներից մեկն է, որը նպաստում է պատմականորեն զարգացած գյուղատնտեսական լանդշաֆտների պահպանմանը, բնակչության պարենային ապահովվածությանը և գյուղական բնակչության տնտեսական բարեկեցությանը:

Տնտեսության իրական հատվածի ճյուղերի համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի գյուղատնտեսությունը, որը մի կողմից բավարարում է բնակչության կենսական պահանջունքները, մյուս կողմից՝ ստեղծում հումքային բազա սննդի և թեթև արդյունաբերության զարգացման համար:

Անդրադառնալով ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման և ոլորտի մրցունակության բարձրացման հիմնահարցերին՝ անհրաժեշտ է նշել, որ 2020 թ. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալների ամփոփմամբ ստացված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներով՝ տնտեսական ակտիվության մակարդակը, նախորդ տարվա նկատմամբ, կազմել է 92.5%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 101.4%: 2020 թ. տվյալներով՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը Հալաստանի Հանրապետության ՀՆԱ-ի մեջ կազմել է 11,7%¹:


¹ Տե՛ս Տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աշակցության ծրագրեր, 2020, Եր., 2021, էջ 5, https://mineconomy.am/media/14702/%21Programs_Arm4.pdf



Գծապարկեր 1

ՀՀ գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն ավելացված արժեքը ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսով, 2016-2020 թթ.²

Հայաստանում գյուղատնտեսությունը կարող է դառնալ ժամանակակից, բարգավաճող և բազմազանեցված տնտեսության առաջնային հիմնասյուններից մեկը: Այն երկրի տնտեսական աճի, բնակչության կյանքի որակի բարձրացման, աղքատության մեղմման, կայուն և բարձր վարձատրվող աշխատատեղերի և ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ստեղծման մեծ ներուժ ունի: Ինչպես վկայում է ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի և շարժընթացի վերլուծությունը, 1999-2020 թթ. այն աճել է շուրջ 2.6 անգամ:



Գծապարկեր 2

ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի շարժընթացը 1999-2020 թթ., մլն ՀՀ դրամ³

Գյուղատնտեսությունը որպես ոլորտային գերակայություն դիտարկելն ունի երկու սկզբունքային պատճառ: Նախ՝ գյուղատնտեսությունը արտահանման ներուժ ունեցող ենթաճյուղերից մեկի՝ սննդի արդյունաբերության արժեքային շղթայի կարևորագույն օղակն է, և երկրորդ՝ գյուղատնտեսու-

² <https://www.armstat.am/file/doc/99520928.pdf>

³ <https://www.armstat.am/am/?nid=12&id=03001>

թյան զարգացումը այդ ոլորտում արտադրողականության աճի և գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացում ապահովելու առումով չափազանց կարևոր է: Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկն է և հասարակության կեցության հիմքը: Այն նշանակալի է ոչ այնքան և ոչ միայն որպես ոլորտ, որից ստացվում է որոշակի ավելացված արժեք, այլ առաջին հերթին՝ որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից են կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունն ու անվտանգությունը, բնակչության վայրն ու պայմանները, ինչպես նաև բնակչության կյանքի որակն ու տևողությունը⁴:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակը բավականին ցածր է: Այդ մասին է վկայում գյուղատնտեսության արդյունավետության, մշակաբույսերի բերքատվության և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ցուցանիշների համեմատությունը զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրների համապատասխան ցուցանիշների հետ: Այսպես, եթե Հայաստանում գյուղատնտեսությունում մեկ զբաղվածի տարեկան արտադրողականությունը (ստեղծված ավելացված արժեք) 2019 թ. դրությամբ կազմել է 5.393 ԱՄՆ դոլար, ապա Դանիայում այդ ցուցանիշը կազմել է 62.894 ԱՄՆ դոլար, Իսրայելում՝ 94.454 ԱՄՆ դոլար: Մեկ կովի տարեկան կաթնատվությունը Հայաստանում կազմում է 2.615 կգ, մինչդեռ ԵՄ երկրներում միջին ցուցանիշը 7.000 կգ է: Մասնավոր ցորենի բերքատվությունը 2020 թ. կազմել է 22,6 գ/հա⁵, այն դեպքում, երբ համաշխարհային միջին ցուցանիշը կազմում է 34 գ/հա⁶:

Ներկայումս ՀՀ բնակչության ավելի քան 36%-ն (1,07 մլն մարդ)⁷ ապրում է գյուղական բնակավայրերում: Վերջին տարիներին այս ցուցանիշը նվազման միտում ունի, մասնավորապես՝ 2014-2019 թթ. գյուղական բնակչության թիվը նվազել է 3%-ով կամ 30,8 հազարով: Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ոլորտում ՀՀ բնակչության զբաղվածությանը, ապա այն ևս ունի նվազման միտում: Եթե 2013 թ. գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ընդամենը ՀՀ զբաղվածների 35,3%-ը, ապա 2019 թ.՝ 21,9%-ը⁸:

⁴ Տե՛ս Ռ-ազմավարություն ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, 2020-2030 թթ., էջ 3,


<https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>

⁵ <https://www.armstat.am/am/?nid=81&id=2368>

⁶ <https://data.oecd.org/agroutput/crop-production.htm>

⁷ https://www.armstat.am/file/article/sv_12_20a_520.pdf

⁸ https://www.armstat.am/file/article/trud_2020_4.2.pdf, p. 67



Գծապատկեր 3

ՀՀ բնակչության զբաղվածությունը գյուղատնտեսության ոլորտում⁹

Գյուղատնտեսության ոլորտի զարգացմամբ է պայմանավորված ինչպես գյուղական համայնքների, այնպես էլ ողջ հանրապետության սննդի արտադրության այն ենթաճյուղերի զարգացումը, որոնք հիմնվում են տեղական գյուղատնտեսական արտադրանքի վրա և ունեն արտահանման մեծ ներուժ:

Ներկայումս գյուղատնտեսության ոլորտի արտահանման ծավալները բավականին ցածր են: Այսպես, 2018 թ. արտահանման ընդհանուր ծավալի մեջ ագրոպարենային ոլորտի մասնաբաժինը կազմել է ընդամենը 28,9% (697,7 մլն ԱՄՆ դոլար), իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի (892,6 մլրդ ՀՀ դրամ) արտահանման մասնաբաժինը՝ շուրջ 7,8%¹⁰: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ վերջին տարիներին գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալը և վերջինիս մասնաբաժինն արտահանման ընդհանուր ծավալում որոշակիորեն աճել է:


Հարկ է նաև նշել, որ ՀՀ-ում ագրոպարենային արտադրանքի ներմուծման ծավալներն ավելի մեծ են: Մասնավորապես, 2018 թ. ներմուծման ընդհանուր ծավալում ագրոպարենային արտադրանքի մասնաբաժինը կազմել է 16,2% (804,4 մլն ԱՄՆ դոլար): Ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսական որոշ արտադրատեսակների գծով այս իրավիճակը կարող է բացասաբար ազդել երկրի պարենային անվտանգության վրա, քանի որ դրանց գծով ինքնաբավության մակարդակը զգալիորեն ցածր է: Այդ արտադրատեսակներից է ցորենը (33,2% ինքնաբավության աստիճան), խոզի միսը (58% ինքնաբավության աստիճան) և թռչնի միսը (22,5% ինքնաբավության աստիճան)¹¹:

⁹ Տե՛ս Աշխատանքի շուկան Հայաստանում, 2014- 2020 թթ., ՀՀ վիճակագրական կոմիտե:

¹⁰ https://www.armstat.am/file/article/sv_04_20a_411.pdf, էջ 106

¹¹ Տե՛ս Պարենային անվտանգություն և ապահովություն, 2020, էջ 68, ՀՀ վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/file/article/f_sec_3_2020_3.pdf

ՀՀ գյուղատնտեսության ոլորտը կարիք ունի միջոցների ներհոսքի՝ նոր արտադրական կարողություններ ստեղծելու և գործողները նորացնելու, նոր սարքավորումներ և տեխնոլոգիաներ յուրացնելու և սպառման շուկան գյուղատնտեսական արտադրանքով հագեցնելու համար: Ուստի, պայմանավորված գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկություններով, անհրաժեշտ է պետական աջակցություն: Այդ հիմնական առանձնահատկություններին անդրադարձ կատարենք առավել հանգամանորեն (գծապատկեր 4):



Գծապատկեր 4 | Գյուղատնտեսության ոլորտի զարգացման առանձնահատկությունները¹²

Հողը՝ որպես գյուղատնտեսության մեջ արտադրության հիմնական գործոն: Ի տարբերություն այլ արտադրական միջոցների, որոնք օգտագործման ընթացքում մաշվում են, հողի որակը ռացիոնալ օգտագործման դեպքում բարելավվում է: Այնուամենայնիվ, հողի բերրիության պահանջվող մակարդակը պահպանելու համար անհրաժեշտ է փոխհատուցել ոչ միայն բույսերի օգտագործած սննդանյութերը, այլև վերականգնել որակի ցուցանիշները՝ հումուսի պարունակությունը, թթվայնության մակարդակը, ջրօդային ռեժիմի վիճակը և այլն, որոնք կապված են զգալի նյութական, տեխնիկական և ֆինանսական ներդրումների հետ¹³:

¹² St'u Малышева Н. В., Факторы, влияющие на развитие сельского хозяйства с учетом особенностей деятельности сельхозтоваропроизводителей/Современные проблемы науки и образования, 2013, էջ 404:
¹³ St'u Петриков А. В., Личные подсобные хозяйства России: проблемы и перспективы развития. Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий, 2007, № 5, էջ 6:

Բնակլիմայական պայմանները՝ որպես ռիսկային հողագործության գործոն: Գյուղատնտեսական արտադրության գործընթացում մարդկային գործունեությունը կապված է իր վերահսկողությունից դուրս գտնվող բնական պայմանների հետ՝ ցրտահարություն, ջրհեղեղ, կարկտահարություն, երաշտ, և, այս ամենով պայմանավորված, կապիտալի վերականգնման և շահույթի հավանականությունն էլ կապված է մեծ ռիսկերի հետ:

Պերական աջակցությունը՝ որպես գյուղատնտեսության ֆինանսավորման գործոն: Գյուղատնտեսական արտադրության և տնտեսության ճյուղերի (մեծ մասի) տարբերությունն այն է, որ վերջիններիս համեմատ պակաս արդյունավետ է: Այդ իսկ պատճառով ցածր եկամուտ ունեցող գյուղատնտեսությունն ի վիճակի չէ հավասար հիմունքներով, առանց արտաքին օժանդակության, ներառյալ՝ պետական աջակցությունը (համեմատած արդյունաբերության հետ), մասնակցել միջոլորտային մրցակցությանը:

Գիտարեխնիկական առաջընթացը՝ որպես գյուղատնտեսության զարգացման գործոն: Նոր տեխնոլոգիաները այս ճյուղի մեջ ավելի դանդաղ են ներդրվում, քան արդյունաբերությունում, հետևաբար նպատակային ծրագրերը պետք է նորարարական լինեն: Այս խնդրի լուծման համար ներկայումս ՀՀ Կառավարության կողմից իրականացվում են պետական աջակցության մի շարք ծրագրեր («խելացի» անասնաշենք, հիդրոպոնիկ եղանակով ջերմատնային տնտեսություններ, կաթիլային ոռոգում և այլն), որոնց նպատակն է խրախուսել նոր տեխնոլոգիաների կիրառությունը գյուղատնտեսության ոլորտում:

Մրցունակությունը՝ որպես գյուղատնտեսական արտադրանքի շուկայի առաջ մղման գործոն: Գյուղատնտեսությունը բնութագրվում է պահպանողականությամբ և ցածր էլաստիկությամբ, շուկայի պայմաններին և պահանջներին ոչ պատշաճ արձագանքմամբ¹⁴: Ներքին արտադրողի արտադրանքի պահանջարկի անկման դեպքում գյուղատնտեսությունը, իր իներցիոն բնույթով պայմանավորված, չի կարող արագ հարմարվել փոփոխվող իրավիճակին: Այդ իսկ պատճառով կարևորվում է բյուջետային աջակցության անհրաժեշտությունը, ինչը պայմանավորված է նրանով, որ շուկայական պայմաններում գյուղատնտեսությունը չի կարող, իր առանձնահատկություններից ելնելով, հաջողությամբ դիմակայել միջճյուղային մրցակցությանը: Գյուղատնտեսական արտադրությունը բնութագրվում է սեզոնայնությամբ և արտադրական ցիկլի երկարատևությամբ, բնակլիմայական գործոններից մեծ կախվածությամբ: Տնտեսության այլ ճյուղերի համեմատ, ցածր ներդրումային գրավչության և մի շարք այլ բացասական գործոնների պատճառով, գյուղատնտեսությունը համեմատաբար ցածր եկամտաբեր ոլորտ է:

¹⁴ Տե՛ս **Магомедов А. Н.**, Государственное субсидирование как фактор повышения конкурентоспособности сельского хозяйства США / **А. Н. Магомедов, Л. Оверчук, А. Оверчук** // АПК: экономика, управление. 2007, № 8, էջ 61:

Տստեսագիտական գրականության մեջ «մրցակցություն» կատեգորիան նոր չէ: Մերկանտիլիստներն առաջիններից էին, որ այն վերլուծեցին 15-17-րդ դարերում: Այս ֆենոմենի ուսումնասիրության գործում նշանակալի ներդրում ունեցավ ուշ մերկանտիլիզմի դարաշրջանի ներկայացուցիչ Տ. Մենը¹⁵: Ա. Մմիթը համարվում է մրցակցության դասական հայեցակարգի հիմնադիրը¹⁶: Մ. Պորտերն իրականացրել է «մրցակցություն» և «մրցունակություն» կատեգորիաների մանրամասն ուսումնասիրություն¹⁷: Երկրի մրցունակության վերլուծությանը և դրա քանակական գնահատմանը մեծ ուշադրություն է դարձվում Համաշխարհային տնտեսական համաժողովի փորձագետների կողմից մշակված Համաշխարհային մրցունակության զեկույցում¹⁸: Գյուղատնտեսության մրցունակության տեսական սահմանման և քանակական գնահատման մեթոդաբանության խնդիրները դիտարկվում են Լ. Լատրուֆի¹⁹ (Ֆրանսիա) աշխատություններում, Տստեսական համագործակցության և զարգացման կազմակերպության փորձագետների ուսումնասիրություններում²⁰:

Գյուղատնտեսական արտադրության մրցունակության և արդյունավետության վրա ազդող գործոնների վերլուծությունն իրականացվել է Կ. Ռ. Սաուրանովի²¹, Ե. Ա. Յուրկովայի²² (Ռուսաստան), Ջ. Մ. Ալստոնի, Ջ. Մ. Բեդդովի, Ֆ. Գ. Պարդեյի աշխատություններում (ԱՄՆ)²³, ինչպես նաև բելառուս տնտեսագետներ Վ. Գ. Գուսակովի²⁴, Տ. Լենսկայայի²⁵, Ս. Ա. Պելիսայի,

¹⁵ Տե՛ս **Ядгаров Я. С.**, История экономических учений: учеб. для вузов. 3-е изд., М., ИНФРА-М, 2000, էջ 20-21:

¹⁶ Տե՛ս **Смит А.**, Исследование о природе и причинах богатства народов, М., Эконом; Ключ, 1993, էջ 475:

¹⁷ Տե՛ս **Портер М.**, Конкуренция: пер. с англ. М., Изд. дом «Вильямс», 2005:

¹⁸ Տե՛ս **Schwab K.**, The Global Competitiveness Report 2013—2014 [Electronic resource] // World Economic Forum. Mode of access: <http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2013-14.pdf

¹⁹ Տե՛ս **Latruffe L.**, Competitiveness, Productivity and Efficiency in the Agricultural and AgriFood Sectors: OECD Food, Agriculture and Fisheries Papers N 30 / L. Latruffe [Electronic resource] // OECD iLibrary. Mode of access: http://www.oecd-ilibrary.org/agriculture-and-food/competitiveness-productivity-and-efficiency-in-the-agricultural-and-agri-food-sectors_5km9Inkdt6d6-en?crawler=true

²⁰ Տե՛ս **Fostering Productivity and Competitiveness in Agriculture OECD** [Electronic resource] // Organisation for Economic Cooperation and Development. 2011, Mode of access: <http://browse.oecdbookshop.org/oecd/pdfs/product/511131e.pdf>

²¹ Տե՛ս **Саубанов К. Р.**, Конкурентоспособность регионального сельского хозяйства в приволжском федеральном округе: дис., канд. экон. наук: 08.00.05, Казань, 2010:

²² Տե՛ս **Юркова Е. А.**, Конкурентоспособность сельскохозяйственных предприятий и влияние инновационного потенциала АПК на ее повышение: дис. ... канд. экон. наук: 08.00.05. М., 2013,

²³ Տե՛ս **Alston J. M.**, Agricultural Research, Productivity, and Food Commodity Prices / J. M. Alston, J. M. Beddow, P. G. Pardey [Electronic resource] // Giannini Foundation. Mode of access: http://giannini.ucop.edu/media/are-update/files/articles/v12n2_5.pdf

²⁴ Տե՛ս **Гусаков В. Г.**, Новейшая экономика и организация сельского хозяйства в условиях становления рынка: научный поиск, проблемы, решения. Минск: Ин-т системных исследований в АПК, 2008.

²⁵ Տե՛ս **Ленская Т. И.**, Организационно-экономические факторы повышения конкурентоспособности продукции АПК: дис. канд. экон. наук: 08.00.05, Минск, 2013, 152 с. Ленская, Т. И. Организационно-экономические факторы повышения конкурентоспособности продукции АПК: дис. канд. экон. наук: 08.00.05, Минск, 2013.

Վան Յատոյանի²⁶ ուսումնասիրություններում, որոնք հաշվի են առել հայրենական գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները:

Չնայած բազմաթիվ ուսումնասիրություններին՝ ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ չկա գյուղատնտեսության մրցունակության որոշման միասնական մոտեցում և դրա մակարդակի գնահատման մեկ մեթոդաբանություն, այլ ակա են գյուղատնտեսության ոլորտում մրցունակության բարձրացման հիմնական պայմանները վերլուծելու տարբերակներ: Հետևաբար, կարևոր է դառնում այս ուղղությամբ ՀՀ մարզերի ուսումնասիրությունը՝ ընդգծելով գյուղատնտեսության մրցունակության էությունը, վերլուծության տարբեր մոտեցումների հիման վրա բացահայտելով և ներկայացնելով այն պայմանավորող գործոնները:

Մ. Պորտերը զգալի ներդրում ունեցավ մրցունակության վերլուծության մեջ, ներկայացրեց մրցակցային առավելությունների ադամանդի գաղափարը՝ բաղկացած գործոնների չորս խմբերից, որոնք որոշում են ընկերության, արդյունաբերության և երկրի մրցունակությունը: Այս խմբերը ներառում են արտադրության գործոնների, պահանջարկի վիճակի, հարակից և օժանդակ արդյունաբերության, կայուն ռազմավարության, կառուցվածքի և մրցակցության պայմանները: Ըստ Մ. Պորտերի՝ կառավարության քաղաքականությունը և պատահական իրադարձությունները կարող են էական ազդեցություն ունենալ երկրի, ճյուղի կամ ընկերության մրցունակության վրա²⁷:

Համաշխարհային մրցունակության գեկույցի հեղինակների կարծիքով՝ այս ցուցանիշի վրա ազդող էական գործոնները, համաշխարհային համաթիվը հաշվարկելիս, բաժանվում են երեք խմբի՝ *բազային գործոններ*, *արդյունավետության գործոններ* և *գործարար միջավայրի զարգացման և նորարարության գործոններ*²⁸:

Հիմնական (բազային) գործոնները ներառում են ինստիտուցիոնալ միջավայրի վիճակը՝ որպես իրավական և վարչական համակարգ, որի շրջանակներում գործում են ֆիզիկական և իրավաբանական անձինք, ենթակառուցվածքը, քանի որ լավ զարգացած ենթակառուցվածքը էական գործոն է տնտեսության արդյունավետ գործունեության, բիզնեսի տեղակայման և տնտեսության որոշակի հատվածների զարգացման վերաբերյալ որոշումներ ընդունելու համար, մակրոտնտեսական միջավայրի կայունությունը, առողջապահության և կրթության զարգացման մակարդակը:

Արդյունավետության գործոնների շարքում դիտարկվում է բարձրագույն կրթության և մասնագիտական պատրաստվածության զարգացման մակար-

²⁶ Shi'u **Пелих С. А.**, Инновационно-инвестиционная среда в агропромышленном комплексе Китая и Беларуси: анализ, проблемы, решения, Ван Яотьянь. Минск: Право и экономика, 2012:

²⁷ Shi'u **Портер М.**, Конкуренция: пер. с англ. М., Изд. дом «Вильямс», 2005.

²⁸ Shi'u **Schwab K.**, The Global Competitiveness Report 2013-2014 / K. Schwab [Electronic resource] // World Economic Forum, Mode of access: http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2013-14.pdf, p. 4-9

դակը՝ որպես ավելի բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրությունը խթանող գործոն: Կարևորվում է ապրանքային շուկայի արդյունավետությունը՝ որպես ապրանքների և ծառայությունների արտադրություն, որոնք առավել պահանջված են տվյալ երկրի ներքին շուկայում, ինչպես նաև՝ աշխատաշուկայի արդյունավետությունն ու ճկունությունը, ֆինանսական շուկայի զարգացման մակարդակը, տեխնոլոգիական զարգացման մակարդակը, շուկայի չափը:

Գործոնների վերջին խումբը հաշվի է առնում *գործարար միջավայրի զարգացման մակարդակը*, որը ներառում է բիզնես-ցանցի որակը և ռազմավարական պլանավորումն ու կառավարումը առանձին ընկերություններում, ինչպես նաև նորարարական միջավայրը:

Անդրադառնալով գյուղատնտեսության մրցունակությանը՝ հարկ է նշել, որ տնտեսության այս ոլորտն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք թույլ չեն տալիս կիրառել երկրի տնտեսության կամ այլ ոլորտների գնահատման մեթոդները: Այս առանձնահատկությունների թվին են դասվում.

- վերարտադրության ցիկլի տևողությունը և ներդրանքների հետզնման երկար ժամանակահատվածը,
- համախառն ավելացված արժեքի ցածր մակարդակը,
- տնտեսական գործունեության արդյունքի կանխատեսելիության ցածր մակարդակը, որը պայմանավորված է բնակլիմայական փոփոխությամբ,
- շրջակա միջավայրի գործոնը. գյուղատնտեսական արտադրության գործընթացը չպետք է վնասի շրջակա միջավայրին, և պետք է արտադրվի մարդու առողջության համար անվտանգ արտադրանք: Գյուղատնտեսության ճյուղի մրցունակության վրա դրական ազդեցություն ունի գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ պահանջարկի կայուն աճը:

Համաշխարհային բանկի տվյալներով՝ 2030 թ. աշխարհի բնակչությունը կավելանա՝ կազմելով 8219 միլիոն մարդ, իսկ 2050 թ.՝ 9148 միլիոն մարդ²⁹: ՄԱԿ-ի «Պարենի և գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպությունը» կանխատեսում է մեկ շնչի հաշվով վարելահողերի տարածքի էական նվազում (2007-ի 0,24 հեկտարից՝ 2050 թ. 0,18 հա)³⁰:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության փորձագետների կարծիքով՝ առավել նպատակահարմար է գյուղատնտեսու-

²⁹ St'u Population Projection Tables by Country and Group [Electronic resource] // The World Bank. - Mode of access: <<http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTHEALTHNUTRITIONANDPOPULATION/EXTDATASTATISTICSHNP/EXTHNPSTATS/0,,contentMDK:21737699~menuPK:3385623~pagePK:64168445~piPK:64168309~theSitePK:3237118,00.html>

³⁰ St'u **Alexandros N.**, World agriculture towards 2030/2050: the 2012 Revision / N. Alexandros, J. Bruinsma [Electronic resource] // Food and Agriculture Organization of the United Nations. Էջ 10. <http://www.fao.org/docrep/016/ap106e/ap106e.pdf>

թյան ոլորտում մրցունակության գնահատումը ընկերության մակարդակով, այսինքն՝ գյուղատնտեսության ոլորտի դեպքում՝ ֆերմա կամ գյուղատնտեսական կազմակերպություն: Որպես ընկերության մակարդակում գյուղատնտեսության մրցունակության գնահատման գործիք՝ առաջարկվում է օգտագործել ընդհանուր գործոնային արտադրողականությունը, որը արտադրության տեխնոլոգիական և կազմակերպական մակարդակի ցուցիչ է արտադրության ծավալի տեսքով՝ արտադրության գործոնների միավոր ծախսի հաշվով³¹:

Մեր կարծիքով՝ Մ. Պորտերի առաջարկած դասակարգումը՝ կազմակերպության, ճյուղի և երկրի մրցունակության պայմանների վերաբերյալ, ներկայումս գործնականում ամենահարմարն է, քանի որ ընդգրկում է զգալի թվով գործոններ և ավելորդ մանրամասներ չի պարունակում: Հետևաբար, գյուղատնտեսության մրցունակությունը որոշող գործոնները վերլուծելիս հնարավոր է Մ. Պորտերի առաջարկած դասակարգումն ընդլայնել ըստ չորս գործոնների³²՝ հաշվի առնելով այս ճյուղի զարգացման առանձնահատկություններն ու ընթացիկ միտումները: Կարևոր է առավել մանրամասն անդրադառնալ գործոնների խմբերից յուրաքանչյուրին՝ գյուղատնտեսության ոլորտում դրանց ազդեցության առանձնահատկությունները դիտարկելու համար: Այս տեսակետից, ամբողջացնելով³³ մեր դիտարկումները կատարված ուսումնասիրությունների հեղինակների մոտեցումների, Մ. Պորտերի դասակարգման սխեմայի, ՀՀ գյուղատնտեսության ռազմավարական զարգացման դրույթների վերաբերյալ³⁴, փորձել ենք աղյուսակ 1-ում ներկայացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը ձևավորող գործոնները և պայմանները:

³¹ St' u Fostering Productivity and Competitiveness in Agriculture OECD [Electronic resource] // Organisation for Economic Cooperation and Development, 2011 , էջ 20, <http://browse.oecdbookshop.org/oecd/pdfs/product/5111131e.pdf>

³² St' u **Портер М.**, Конкуренция: пер. с англ. / М. Портер. М.: Изд. дом «Вильямс», 2005:

³³ St' u **Ленская Т. И.**, Организационно-экономические факторы повышения конкурентоспособности продукции АПК: дис. ... канд. экон. наук: 08.00.05 / Т. И. Ленская, Минск, 2013:

³³ St' u **Юркова Е. А.**, Конкурентоспособность сельскохозяйственных предприятий и влияние инновационного потенциала АПК на ее повышение: дис. ... канд. экон. наук: 08.00.05 / Е. А. Юркова, М., 2013, **Саубанов, К. Р.**, Конкурентоспособность регионального сельского хозяйства в приволжском федеральном округе: дис. ... канд. экон. наук: 08.00.05 / К. Р. Саубанов, Казань, 2010:

³³ St' u **Schwab K.**, The Global Competitiveness Report 2013-2014 / К. Schwab [Electronic resource] // World Economic Forum. - Mode of access:

<http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2013-14.pdf

³⁴ <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>

Գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը ձևավորող գործոնները և պայմանները

Աղյուսակ 1

Գյուղատնտեսության մրցունակությունը ձևավորող գործոնները	Գյուղատնտեսության մրցունակությունը ձևավորող գործոնների ապահովման պայմանները
<p>Արտադրության գործոններ</p>	<ul style="list-style-type: none"> • հողային պայմաններ՝ հողերի տեսակները, բերրիությունը, վարելահողերի մեծությունը, ջրային ռեսուրսների առկայությունը գյուղատնտեսական գործունեության համար • կլիմայական պայմաններ՝ կլիմայական գոտին, տեղումների քանակը, եղանակային այլ պայմանները • աշխատանքային ռեսուրսներ՝ որակավորումը, աշխատուժի առկայությունը և գինը, աշխատանքի արտադրողականությունը • արտադրության միջոցների վիճակը՝ հիմնական արտադրական ֆոնդերի մաշվածքը և մեքենայացման մակարդակը • կապիտալի հասանելիություն՝ վարկավորումը, ներդրումները, լիզինգը • ճյուղի տեխնոլոգիական և նորամուծական ներուժը • ենթակառուցվածքի զարգացման մակարդակը
<p>Կայուն ռազմավարություն, կառուցվածք և մրցակցություն</p>	<ul style="list-style-type: none"> • գյուղատնտեսական կազմակերպությունների ստեղծման, ձևավորման և կազմակերպման մարզային պայմանները • ռազմավարական պլանավորման ժամանակակից մեթոդների ներդրումը, քաղաքականության կանխատեսելիությունը • գյուղատնտեսական ծրագրերի իրականացման որակը, • ճյուղի գործունեության ուժեղ և թույլ կողմերի գրագետ վերլուծությունը • արդյունավետ, ժամանակակից մարքեթինգային քաղաքականությունը, որի արդյունքն առաջին հերթին ուժեղ բրենդի ստեղծումն է • ներքին մրցակցության բնույթը • ճյուղի արտահանման ներուժը
<p>Պահանջարկի մեծություն</p>	<ul style="list-style-type: none"> • պահանջարկի էլաստիկությունը, հիմնական արժեզրայում գյուղտնտեսության արտադրողների և վերամշակողների տնտեսական կենսունակության բարձրացումը • շուկայի զարգացման մակարդակը (որքանով է շուկան բաց, հասանելի բոլոր մասնակիցների համար) • ապրանքների և ծառայությունների նկատմամբ գնորդների նախասիրությունները • պետության ազդեցությունը գյուղատնտեսական շուկայի վրա • ռիսկերի մեղմման և աջակցության ծրագրերի իրականացումը
<p>Հարակից և աջակցող ոլորտներ</p>	<ul style="list-style-type: none"> • գյուղմթերքի հետազոտելիության ապահովումը • արժեզրային առևտրայնացումը, արդիականացումը և մեքենայացումը • մրցունակ գյուղատնտեսական տեխնիկայի արտադրությունը • պարարտանյութերի, բույսերի պաշտպանության քիմիական միջոցների, անասնաբուժական դեղամիջոցների, տնկանյութերի, սերմանյութերի արտադրությունը • ագրարային գիտության զարգացումը • թվայնացումը և նորարարությունը՝ որպես միջոլորտային դերակատարներ

Ժամանակակից պայմաններում գյուղատնտեսական արտադրության արդյունավետության հիմնական չափանիշը տնտեսավարող սուբյեկտների մրցունակության մակարդակն է: Միևնույն ժամանակ, համաշխարհային սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և բնապահպանական խնդիրների առկայության պատճառով առաջնային նշանակություն ունի երկրի պարենային անվտանգության, ագրոարդյունաբերական համալիրի արտադրական և ռեսուրսային ներուժի պահպանումը, ինչպես նաև կայունության ամրապնդումը:

ՀՀ Կառավարության տեսլականն է՝ առաջիկա տասը տարիների ընթացքում ստեղծել որակապես տարբերվող գյուղատնտեսություն՝ ապահովելով գյուղացիական տնտեսությունների գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացումը, մրցակցային առավելություններ ունեցող գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ծավալների ընդլայնումը, ներքին և արտաքին շուկաներում գյուղմթերքի մրցունակության երաշխավորումը, գյուղատնտեսության մեջ նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, նորամուծական գյուղատնտեսական արտադրության կազմակերպումը, ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքներին ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացումը:

Գյուղացիական տնտեսությունների ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացումը ենթադրում է նաև վարելահողերի լիարժեք օգտագործում, գյուղացիական տնտեսություններում ջերմատնային տնտեսությունների ստեղծում: Առաջիկա տասը տարիների տեսլականն է գյուղական տարածքների ներառական զարգացումը և բարգավաճումը, գյուղական երիտասարդության զբաղվածության ապահովումը, կլիմայական փոփոխություններին հարմարվողականությունը, երկրի բնական ռեսուրսների կայուն օգտագործումը, պարենային ապահովության բարելավումը և սննդամթերքի անվտանգության լավագույն համակարգի ներդրումը, գյուղատնտեսական բարձրարժեք ապրանքների արտահանման խթանումը³⁵:

³⁵ Տե՛ս Ռազմավարություն ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, 2020-2030 թթ., էջ 5, <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>

1.2

Գյուղատնտեսության ոլորտում մրցունակության ապահովման համաշխարհային փորձը

Ներկայումս տնտեսապես զարգացած երկրների ագրարային քաղաքականության հիմնական նպատակը և բովանդակությունը բարձր արդյունավետությամբ մրցունակ գյուղատնտեսության զարգացումն է: Գյուղատնտեսության պետական աջակցությունը մեծ դեր է խաղացել սննդամթերքի խոշորագույն արտահանող այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, ԵՄ-ն, Բրազիլիան, Ռուսաստանը և Չինաստանը:

Գյուղատնտեսության ոլորտի մրցակցային առավելությունները երկրների մեծ մասի համար ներքին և հատկապես արտաքին շուկաներում ապահովվում են սուբսիդավորման մեխանիզմների միջոցով: Գյուղատնտեսական ծախսերը կազմում են ԵՄ բյուջեի մինչև 45.0%-ը: Եվրոպական միության երաշխիքային հիմնադրամից տարեկան վճարումները միջին հաշվով մեկ տնտեսության համար կազմում են շուրջ 5,7 հազար եվրո³⁶: Այսօր ոչ մի երկիր գյուղատնտեսությունն ավելի մեծ ծավալով չի սուբսիդավորում, քան Չինաստանը: ՏՀԶԿ-ի տվյալներով՝ 2018 թ. Չինաստանն ավելի քան 240 մլրդ ԱՄՆ դոլար է հատկացրել (ՀՆԱ-ի 1,8%-ը) գյուղատնտեսությանն աջակցելու համար, մինչդեռ Միացյալ Նահանգները ծախսել է 99 մլրդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 0,5%-ը): Ընդ որում, Չինաստանը միջոցների մեծ մասը՝ 206 միլիարդ ԱՄՆ դոլար, ներդրել է գյուղատնտեսական արտադրությանն աջակցելու համար (ԵՄ-ն՝ 110 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ ԱՄՆ-ը՝ ընդամենը 30 միլիարդ ԱՄՆ դոլար)³⁷: Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ կառավարության ազդեցությունն այս գործոնի վրա արտահայտվում է արտադրական ծախսերի մի մասի փոխհատուցմամբ՝ հարկային դրույքաչափերի տարբերակման, հարկային և վարկային արտոնությունների ներդրման, սուբսիդավորման ճանապարհով:

Շատ զարգացած երկրներում կիրառվում են գյուղմթերք արտադրողների մրցունակության աջակցության և պաշտպանության տարբեր գնային համակարգեր: Օրինակ, Միացյալ Նահանգներում գյուղատնտեսական արտադրանքի գների նպատակային մակարդակն օգտագործվում է որպես հաշվարկային մեծություն՝ ծախսերի փոխհատուցման և միջինից բարձր եկամուտ ստանալու հաշվարկով: Միայն գնային աջակցության համար ֆերմերներին տրվող վճարումները կազմում են տարեկան շուրջ 17 միլիարդ ԱՄՆ դոլար, ավելին՝ տարեցտարի աճում է գյուղական արտադրողներին տրվող օգնությունը: Եվրոպացի ֆերմերը եկամտի միայն մի մասն է ստանում շուկայա-

³⁶ Տե՛ս Токтомаматов К.Ш., Абдиев М.Ж., Токторов К.К., Зарубежная практика повышения конкурентоспособности аграрного сектора, Экономика и бизнес: теория и практика, 2017, т. 1, №4, էջ 169:

³⁷ <https://smebanking.news/ru/18320-mezhdunarodnyj-obzor-gosdotacij-agrariyam/>

կան գների հաշվին, իսկ մյուս մասը վճարում է պետությունը: Այսպես, Ավստրիայում գյուղատնտեսության պետական աջակցության մակարդակը արտադրանքի արժեքի նկատմամբ կազմում է 44%, Ֆինլանդիայում՝ 72, Շվեդիայում՝ 47, Շվեյցարիայում՝ 76%³⁸:

Զարգացած երկրներում գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունն ու մրցունակությունը որոշվում են գյուղատնտեսական կոռպորացիայի զարգացման և ագրոարդյունաբերական ինտեգրման բարձր մակարդակով: Կոռպորացիայի դերը հատկապես բարձր է գյուղատնտեսական սպրանքների վերամշակման, պահեստավորման և իրացման, ֆերմերների ագրոսպասարկման և վարկային ծառայությունների զարգացման գործում: Գյուղմթերքի շուկաներում մրցակցության աճի գործընթացների ազդեցության ներքո լուրջ փոփոխություններ են տեղի ունենում ագրոարդյունաբերական ինտեգրման ոլորտում: Գյուղատնտեսական ձեռնարկությունների հետ խոշոր առևտրային կամ վերամշակման կառույցների փոխգործակցությունը, որպես կանոն, իրականացվում է ուղղահայաց ինտեգրման և պայմանագրային հիմունքներով: Մինևույն ժամանակ, աշխարհի առաջատար երկրներում գյուղատնտեսության ամենակարևոր ոլորտները ներգրավված են գյուղատնտեսական կլաստերների մեջ, ինչը ներկայացնում է ագրոարդյունաբերական համալիրում ինտեգրման գործընթացների զարգացման բարձր մակարդակը:

Ինչպես արդեն նշվեց, ինտեգրման հորիզոնական և ուղղահայաց ձևերի զարգացմանը զուգընթաց ակտիվորեն զարգանում է գյուղատնտեսական կոռպորացիան: Կոռպորացիան ֆերմերներին թույլ է տալիս շուկայում իրական տնտեսական հզորություն ձեռք բերել՝ կենտրոնացնելով իրենց սպրանքների մատակարարումը, հանդես գալով որպես հակամենաշնորհային գործողությունների գործիք, ստեղծելով սպրանքների վաճառքի այլընտրանքային ուղի, զսպելով գնման գների մակարդակի հնարավոր անկումը և այլն:


Զարգացած ագրոարդյունաբերական արտադրություն ունեցող երկրներում լայն տարածում է ստացել ագրոարդյունաբերական ինտեգրման պայմանագրային ձևը: Օրինակ, Միացյալ Նահանգներում գյուղատնտեսական արտադրանքի մոտավորապես 30%-ն արտադրվում է այդ հիմքի վրա: Մասնավորապես, ֆերմերների հետ պայմանագրեր են կնքում արդյունաբերական և առևտրային ընկերությունները: Պայմանագրային հարաբերություններն առավելապես տարածված են շուտ փչացող, ինչպես նաև վերամշակման ենթակա սպրանքների արտադրության և իրացման ոլորտայամբ:

Աշխարհի զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ պարենային անվտանգությունն ապահովելու համար դրանք վարում են համապարփակ և

³⁸ Տե՛ս Токтомаматов К.Ш., Абдиев М.Ж., Токторов К.К., Зарубежная практика повышения конкурентоспособности аграрного сектора, Экономика и бизнес: теория и практика, 2017, т. 1, №4, էջ 170:

Էական պետական ֆինանսական աջակցության քաղաքականություն և ձեռնարկում ոլորտի կարգավորման միջոցառումներ՝ հաշվի առնելով պարենի շուկայում տիրող իրավիճակը:

Զարգացած երկրների պետական կարգավորման հիմնական գործիքները ներկայացված են գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5

Գյուղատնտեսության պետական կարգավորման հիմնական գործիքները³⁹

1. *Գյուղատնտեսության արտադրանքների գների կարգավորում:* Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում գյուղատնտեսության պետական կարգավորման համակարգում հիմնական դերը խաղում է գների աջակցումը, որն ապահովում է արտադրողների եկամուտների կայունություն և գների հավասարակշռություն:

2. *Գյուղատնտեսության սուբսիդավորում:* Գյուղատնտեսության պետական աջակցության ցուցիչների համակարգում ուղղակի վճարների կատեգորիան ներառում է տարբեր տեսակի վճարների լայն տեսականի, որոնք բազմակողմանի ազդեցություն ունեն ճյուղի տնտեսության վրա. փոխհատուցման վճարներ, մեկ միավոր տարածքի կամ անասունների գլխաքանակի հաշվարկով սուբսիդիաներ, ապահովագրական վճարներ, արտադրության համար ռեսուրսների գնման ֆինանսավորման տեսքով վճարումներ և այլն: Ուղղակի պետական սուբսիդավորման կարևորագույն խնդիրներից մեկը կլիմայական և հողային անբարենպաստ պայմաններ ունեցող տարածքներում արտադրողներին վճարումներն են: Որպես օրինակներ կարելի է նշել Ֆիլիպինյան հյուսիսային հատվածում, Իռլանդիայի ճահճային և Ավստրիայի դժվարամատչելի լեռնային շրջաններում ֆերմերների եկամտի աջակցության հատուկ համակարգերը: Այսպես, Ֆիլիպինյայում, հյուսիսային 62

³⁹ Мальшева Н. В., Факторы, влияющие на развитие сельского хозяйства с учетом особенностей деятельности сельхозтоваропроизводителей / современные проблемы науки и образования, 2013, էջ 407:

լայնությունից բարձր գտնվող տնտեսություններում, պետությունը մեկ հեկտարի և մեկ շնչի հաշվով արտադրողներին տրամադրում է հավելյալ սուբսիդիաներ⁴⁰:

3. *Գյուղատնտեսության ֆինանսավարկային աջակցություն*: Արևմտյան երկրներում գյուղատնտեսության մեջ պետության միջամտության կարևոր նպատակը գյուղատնտեսական արտադրողների ֆինանսական ռեսուրսների համալրումն է: Այն նպատակաուղղված է գյուղատնտեսության հատուկ պայմաններին՝ ազատ ֆինանսական ռեսուրսների անբավարարությանը, ճյուղի բարձր կապիտալատարությանը և ցածր ֆոնդահատույցին, ծախսատար գործարքների իրականացմանը և եկամտի ստացման ժամկետների անհամապատասխանությանը: Այս ամենը թելադրում է գյուղատնտեսության համար ֆինանսական աջակցության համակարգի հատուկ մոտեցման անհրաժեշտություն:

4. *Հարկային կարգավորումը և արտոնյալ հարկման համակարգը գյուղատնտեսության մեջ*: Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում, ֆինանսավարկային և գնային քաղաքականությունների հետ մեկտեղ, հարկային քաղաքականությունը շարունակում է մնալ գյուղատնտեսության պետական կարգավորման համակարգի և դրա համար արտոնյալ պայմանների ստեղծման ամենակարևոր գործիքներից մեկը:

Գյուղատնտեսության ոլորտում մրցունակության ապահովման ԱՄՆ փորձը: Միացյալ Նահանգները, ինչպես և մյուս զարգացած երկրները, առանձնանում են նրանով, որ հատկապես կարևորում են երկրի գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցությունը: ԱՄՆ գյուղատնտեսության ոլորտի զարգացման ամենակարևոր գործոնը պետական կարգավորումն ու աջակցությունն է: Այստեղ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունը պայմանականորեն բաժանված է միջոցառումների երեք հիմնական խմբի (աղյուսակ 2):

ԱՄՆ պետական աջակցության համակարգում զգալի մասը պատկանում է գների աջակցության սուբսիդիաներին: Քանի որ ձեռնարկատիրական գործունեության զարգացման և անվնասաբերության հիմնական ցուցանիշը վաճառքից ստացված եկամուտներն են, ապա գյուղացիական ֆերմերային տնտեսությունների գործունեության համար բարենպաստ միջավայրի և կայունության հիմնական չափանիշը դրանց արտադրանքի գների մակարդակն է: Այս նպատակով ԱՄՆ-ում պետությունն ուղղակի սուբսիդիաներ է տրամադրում ֆերմերներին՝ գների պարիտետը պահպանելու համար (գյուղատնտեսական արտադրանքի գների և արտադրության համար ձեռք բերված ռեսուրսների հարաբերակցությունը): ԱՄՆ գյուղատնտեսության ոլորտի մրցունակության ապահովման շրջանակներում իրականացվող քաղաքակա-

⁴⁰ Տե՛ս Кубанов А., Экономический механизм регулирования АПК в условиях рынка / А. Кубанов, А. Байчорова // АПК: экономика, управление, 2007, № 8, էջ 59:

նության հիմնական ուղղությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2

ԱՄՆ գյուղատնտեսության մրցունակության ապահովման և պարենային քաղաքականության հիմնական ուղղությունները ⁴¹

<i>Միջոցառումների խմբերը</i>	<i>Միջոցառումների ընդհանուր բնութագիրը</i>
Պարենային անվտանգության հիմունքների ապահովում	Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումներ, ֆերմերների եկամտների կարգավորում, գյուղատնտեսական արտադրանքի գների պահպանում, արտաքին առևտրի կարգավորման միջոցառումներ, գյուղատնտեսական արտադրանքի իրացման շուկաների կարգավորում, գյուղատնտեսության ոլորտի գիտական և տեղեկատվական աջակցություն և սպասարկում
Բնակչությանը անվտանգ, մատչելի և լիարժեք սննդով ապահովում	Մնդամթերքի որակի պետական վերահսկում և անվտանգության գնահատում, կարիքավոր բնակչությանը պարենային օգնություն, սննդի կորստի կանխարգելում, աջակցություն քաղաքացիների ռացիոնալ սնման ապահովմանը
Բնական ռեսուրսների օգտագործման և գյուղական զարգացման օպտիմալացում	Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, հողի բերրիության պահպանման և բարելավման աջակցություն, ջրային ռեսուրսների պաշտպանության միջոցառումներ, գյուղական տարածքների ինտեգրված զարգացում

Միացյալ Նահանգներում ֆերմերների պաշտպանության մի քանի տասնյակ ծրագրեր են գործում: ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտը (USDA) ֆերմերներին առաջարկում է ավելի քան 60 ուղղակի և անուղղակի աջակցության տարբերակներ, որոնցից 12-ը շարադրված են «Գյուղատնտեսության մասին 2018 թ. օրենքում» (որը պաշտոնապես փոխարինել է 2014 թ. օրենքին): Պետական աջակցության բյուջեի առյուծի բաժինը՝ ավելի քան 70%-ը, ծախսվում է Լրացուցիչ սննդի օգնության ծրագրի (The U.S. Supplemental Nutrition Assistance Program – SNAP) վրա, որի շրջանակներում ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին տրամադրվում են սննդի կտրոններ:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական արտադրողների անմիջական աջակցությանը, ապա միջոցների մեծ մասը՝ պետական աջակցության ընդհանուր բյուջեի շուրջ 9%-ը, ծախսվում է բերքի ապահովագրման և գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման վրա⁴²:

ԵՄ անդամ երկրների գյուղատնտեսության ոլորտի մրցունակության ապահովման քաղաքականությունը: Չնայած ԵՄ անդամ երկրների սոցիալատնտեսական մակարդակի տարբերություններին՝ պարենային ապահովության հասնելու համար Եվրամիությունը մշակել և վարում է գյուղական զարգացման ընդհանուր քաղաքականություն, որը կիրառելի է միության անդամ

⁴¹ Stéu **Обвинников О.Г.**, Эволюция мер аграрной политики США в начале XXI века // США и Канада: экономика, политика, культура, 2018, № 3(579), էջ 7:

⁴² URL: <https://smebanking.news/ru/18320-mezhdunarodnyj-obzor-gosdotacii-agrariyam/>, Международный обзор госдотаций аграриям.

բոլոր երկրներում: Ընդհանուր առմամբ, գյուղական տարածքների զարգացման բնագավառում ԵՄ երկրների կառավարչական որոշումների փաթեթը Միասնական գյուղատնտեսական քաղաքականության (Common Agricultural Policy – CAP) կարևոր տարրն է:

CAP-ը միասնական ագրոպարենային քաղաքականություն է, որը բնութագրվում է ընդգծված հովանավորչությամբ և դրսևորվում է, մասնավորապես, գյուղատնտեսական արտադրանքի մակարդակը բարձրացնելու և երկրների կողմից սննդամթերքի ինքնաբավության հասնելու ցանկությամբ: Զգալի տեղ է հատկացվում համեմատաբար խոշոր տնտեսությունների և աջակցությանը, ինչը նպաստում է գյուղացիական տնտեսությունների խոշորացման գործընթացների զարգացմանը: ԵՄ երկրներում առանձնահատուկ կարևորություն ունի բարձրարժեք գյուղատնտեսական արտադրության, վերամշակման և առևտրի խթանումը, ինչը հնարավորություններ է ստեղծում սպառման համար լիովին պատրաստ վերջնական սննդամթերքի արտադրության համար: CAP-ի շրջանակներում ԵՄ երկրները մշակում են ինչպես ազգային գյուղատնտեսության արդյունավետության և կայունության բարձրացման միջոցառումներ, այնպես էլ գյուղատնտեսության արտահանման, սննդամթերքի ներմուծման և, ընդհանրապես, պարենային անվտանգության հրատապ խնդիրների լուծմանն ուղղված ընդհանուր միջոցառումներ՝ միջպետական ինտեգրման համատեքստում: ԵՄ երկրները պետական կարգավորման և գյուղատնտեսության պետական ֆինանսական աջակցության խնդիրները լուծում են ինչպես ազգային մակարդակով միջոցառումների մշակման միջոցով, այնպես էլ Եվրամիության միասնական վերազգային ընդհանուր ագրոպարենային քաղաքականության շրջանակներում՝ կառավարչական որոշումների իրականացման միջոցով: Ագրոպարենային միասնական քաղաքականության բյուջեն ձևավորվում է երկու աղբյուրներից՝ Երաշխիքների եվրոպական գյուղատնտեսական հիմնադրամից (EFRG) և Գյուղական տարածքների զարգացման եվրոպական գյուղատնտեսական հիմնադրամից (EAFRD):

Կենսական նշանակության պարենային ապրանքների համար նախապես սահմանվում են նվազագույն գներ: Նվազագույն մակարդակից ավելի քան 10%-ով շուկայական գների նվազման դեպքում գների մակարդակի կայունությունը պահպանելու համար ԵՄ իշխանությունները կազմակերպում են այդ ապրանքների նախապես սահմանված գներով երաշխավորված գնումներ⁴³:


Իհարկե, պարենային ապահովման կարգավորման գործընթացում վճռորոշ նշանակություն ունի ֆինանսական աջակցությունը, որը ԵՄ երկրներում իրականացվում է ազգային (առանձին երկրների բյուջեններից) և վերազգա-

⁴³ St'u Полянская Н.М., Колесняк А.А., Колесняк И.А., Государственная финансовая поддержка развития агропродовольственного сектора: опыт ведущих зарубежных стран//Экономические отношения, 2020, том 10, № 3, էջ 866:

յին (ԵՄ համախմբված բյուջեից) մակարդակով, այսինքն՝ պետական կարգավորման միջազգային ծրագրերի շրջանակներում:

Գյուղական տարածքների զարգացման քաղաքականությունը մի շարք ուղղություններով իրականացվում է եվրոպական այլ կառուցվածքային ստորաբաժանումների և ներդրումային հիմնադրամների հետ միասին: ԵՄ գյուղական զարգացման ծրագրերը ֆինանսավորվում են նաև Գյուղական զարգացման եվրոպական հիմնադրամի (EAFRD) կողմից: 2014–2020 թթ. ծրագրերի արդիականացման համար հատկացվել է գրեթե 100 միլիարդ եվրո, ընդ որում՝ ԵՄ յուրաքանչյուր երկիր ֆինանսական հատկացումներ ստանում է 7 տարի ժամկետով:

Ֆինանսական միջոցների բաշխման կառուցվածքը, ըստ Եվրամիության գյուղական շրջանների զարգացման առաջնահերթությունների, ներկայացվում է գծապատկեր 6-ում: Եվրոպական միությունում գյուղական տարածքների զարգացման քաղաքականության ամենակարևոր առաջնահերթությունը էկոհամակարգերի ներդաշնակեցումն է (բոլոր ծախսերի 44%-ը): Եվրոպական միության երկրներն անհանգստացած են շրջակա միջավայրի վրա մարդածին գործոնների կործանարար ազդեցությունից և կլիմայի փոփոխության բացասական հետևանքներից: Այս հետևանքներն ունեն սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և տեխնադին բնույթ, ինչը ենթադրում է արդյունաբերական հարաբերությունների վերափոխում և եվրոպական հասանքի արտադրական ուժերի պարամետրերի փոփոխություն:



Գծապատկեր 6

Ֆինանսական միջոցների բաշխման կառուցվածքը՝ ըստ Եվրոպական միության գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունների (2014-2020 թվականների համար), %⁴⁴

⁴⁴ St'u Полянская Н.М., Колесняк А.А., Колесняк И.А., Государственная финансовая поддержка развития агропродовольственного сектора: опыт ведущих зарубежных стран//Экономические отношения, 2020, том 10, № 3, էջ 872:

Եվրոպական միությունում գյուղական տարածքների զարգացման քաղաքականության շրջանակներում երկրորդ գերակայությունը գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացումն է (բոլոր ծախսերի 20%-ը), ինչը նպաստում է ֆերմերների աշխատանքի և գյուղում ապրելու հեղինակության բարձրացմանը, գյուղական աշխատողների ինքնաճանաչման բարելավմանը, ինչպես նաև գյուղական վայրերում սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը: Մա հանգեցնում է մեծ թվով բնակիչների կողմից գյուղի՝ որպես բնակության վայրի գիտակցված ընտրությանը, գյուղում բնակիչների համախմբմանը և գյուղական տնտեսության բազմազանացմանը: Հայաստանի համար նույնպես, որը վերջին տարիներին արագորեն ուրբանացվում է, ռազմավարական կարևոր խնդիրներ պետք է լինեն գյուղական բնակչության՝ դեպի քաղաք արտահոսքի կառավարումը, բազմաբնույթ ենթակառուցվածքների զարգացումը և սոցիալական ծառայություններ ստանալու մատչելիության ապահովումը:

Այստեղ, որպես ՀՀ-ի համար օգտակար օրինակ և փորձ, պետք է առանձին նշել Եվրոպական միությունում գործող Ձեռներեցության և նորարարության ծրագիրը (Entrepreneurship and Innovation Programme–EIP), որը կոչված է խթանելու փոքր և միջին ագրոբիզնեսի զարգացմանն ուղղված միջոցառումները, ապահովելու նորարարական տեխնոլոգիաների ստեղծումը և ներդրումը գյուղատնտեսական գործունեության մեջ:

Ընդհանուր առմամբ, այս բոլոր նախագծերն ուղղված են ԵՄ երկրների ագրոպարենային հատվածի կայունության և մրցունակության բարձրացմանը:

Նորարարական տեխնոլոգիաների ներդրման միջոցով գյուղատնտեսության ոլորտում մրցունակության բարձրացման Իսրայելի փորձը: Իսրայելի գյուղատնտեսության ոլորտի հաջողության գաղտնիքը նորագույն տեխնոլոգիաներն են. կաթիլային ռոտում, ժամանակակից մեքենայացված համակարգեր, բերքահավաք կոմբայններ, դրոններ և այլն, որոնք լայնորեն կիրառվում են գյուղմթերքի մշակման և արտադրության գործընթացներում: Նորարարության բարձր մակարդակն իր հերթին օգնում է առավելագույնի հասցնել ոլորտի արտադրողականությունը: Իսրայելը գյուղատնտեսական տեխնոլոգիաների համաշխարհային առաջատարներից է՝ բազմաթիվ արտոնագրերով և կարողություններով՝ սերմերից մինչև պարարտանյութերի արտադրություն: Մի երկրում, որտեղ գյուղատնտեսության համար պիտանի է հողերի շուրջ 20%-ը, ֆերմերներն ապահովում են բնակչության սննդի կարիքների 95%-ը՝ ներկրելով միայն հացահատիկային և յուղային մշակաբույսեր, շաքարավազ, սուրճ և կակաո:

Իսրայելում գյուղատնտեսական վարչարարության ձևն ունի իր առանձնահատկությունը, քանի որ Իսրայելի հողերի շուրջ 93%-ը (1,959,800 հեկտար) գտնվում է պետության, Հրեական ազգային հիմնադրամի սեփականության

ներքո և կառավարվում է Իսրայելի հողային վարչության կողմից: Միևնույն ժամանակ, գյուղատնտեսական արտադրանքի շուրջ 80%-ը ստացվում է կոոպերատիվներից («կիբուց»⁴⁵ և «մաշավ»⁴⁶):

Իսրայելում մշակված և ամբողջ աշխարհում լայնորեն կիրառվող նորարարություններից է կաթիլային ոռոգման մեթոդը, որը դեռևս 1960-ականներին հեղինակել է իսրայելցի ինժեներ-գյուտարար Միմա Բլասը, իսկ 1965 թ. իսրայելական «Նեթաֆիմ» (Netafim) ընկերությունն այս տեխնոլոգիայի վրա հիմնեց մի ամբողջ արդյունաբերություն: Կաթիլային ոռոգման համակարգերի կիրառությունը գյուղատնտեսության ոլորտում հնարավորություն է ընձեռում խնայելու ջրի 30-70%-ը և ավելացնելու մշակաբույսերի բերքատվությունը նույնիսկ այն շրջաններում, որտեղ գյուղատնտեսություն վարելը նախկինում հնարավոր չէր: Մասնավորապես, կաթիլային ոռոգման և ջրախնայողական այլ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում, Իսրայելում արտահանվող արտադրանքի աճեցման հիմնական տարածաշրջան է դարձել Արավա անապատը: 2000-2019 թվականներին, չնայած ոռոգելի տարածքների 55% աճին, գյուղատնտեսության մասնաբաժինը քաղցրահամ ջրառում կրկնակի նվազել է, ինչը հիմնականում պայմանավորված է ջրի կառավարման փոփոխություններով՝ ներառելով այլ ջրային ռեսուրսների օգտագործումը, արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաների կիրառումը և ջրի պահանջարկի վերահսկողության խիստ քաղաքականությունը: Վերջին 30 տարիների ընթացքում գյուղատնտեսական արտադրանքն աճել է ավելի քան 5 անգամ, մինչդեռ ջրի սպառումը գործնականում մնացել է նույնը: Նման արդյունքների հնարավոր է եղել հասնել հիմնականում կաթիլային և ցածր ծավալային ցողացիքով ոռոգման նոր տեխնոլոգիաների կիրառմամբ: Համաձայն ՏՀԶԿ և ՄԱԿ-ի Պարենային և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրական տվյալների՝ ջրի խնայողական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ 2007-2016 թթ. գյուղատնտեսության մասնաբաժինը ջրառի մեջ նվազել է մինչև 35.9%՝ 1991-2000 թթ. 64.0%-ի փոխարեն (ընդ որում, ՏՀԶԿ անդամ երկրներում այդ ցուցանիշը նույն ժամանակահատվածում նվազել է միջինը 46.0%-ից մինչև 43.4%), իսկ ջրի սթրեսի ցուցիչը 61.0%-ից նվազել է մինչև 39.3%⁴⁷:

Իսրայելում գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող ջրի 60%-ը խմելու համար ոչ պիտանի ջուր է՝ մաքրված կեղտաջրեր, աղի ջուր: Խմելու համար ոչ պիտանի ջրի օգտագործման ցուցանիշով ևս Իսրայելն աշ-

⁴⁵ Գյուղատնտեսական համայնք Իսրայելում, որը բնութագրվում է ընդհանուր համայնքային սեփականությամբ և աշխատանքի ու սպառման հավասարությամբ:

⁴⁶ Գյուղատնտեսական համայնք Իսրայելում, որը գործում է մատակարարման և վաճառքի ոլորտում կոոպերատիվ հիմունքներով՝ աշխատանքի մասնակի կամ ամբողջական սոցիալականացման և արտադրության միջոցների սեփականության պայմաններում:

⁴⁷ St'u Agricultural Policy Monitoring and Evaluation 2021: Addressing the Challenges Facing Food Systems, OECD, 2021, էջ 360:

խարհում առաջատարներից մեկն է: Հողերի 40%-ը ոռոգվում է կոյուղաջրերով, որոնց հիմնական մասը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Իսրայելում կեղտաջրերի 75%-ը մաքրումից հետո վերաօգտագործվում է: Օրինակ, Իսպանիան գյուղատնտեսական նպատակներով օգտագործում է կեղտաջրերի 17%-ը, Ավստրալիան՝ 10%-ը, Իտալիան՝ 8%-ը, Հունաստանը՝ 5%-ը:

Նորարարական տեխնոլոգիաների և գյուղատնտեսության ոլորտում ներդրումների խթանման նպատակով 2009 թվականից գործում է ներդրումների խթանման հատուկ ծրագիր, որի շրջանակում պետությունը կապիտալ ներդրումների դրամաշնորհներ, ինչպես նաև եկամտահարկից արտոնություններ և արագացված մաշվածության կիրառման հնարավորություններ է տրամադրում այն ֆերմերներին, որոնք մասնակցում են ներդրումների աջակցության սխեմաներին⁴⁸: Պետությունը ֆերմերներին սուբսիդավորում է նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ձեռք բերման և ներդրման արժեքի մինչև 40%-ը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ աշխարհի շատ երկրներում գյուղատնտեսությունը դիտվում է որպես ազգային տնտեսության ռազմավարական կարևոր ճյուղ, և, հետևաբար, պետությունները ձգտում են պետական աջակցության միջոցառումներով օժանդակություն ցուցաբերել՝ ներառելով սուբսիդիաները, առևտրային պաշտպանությունը, արտոնությունները և մասնագիտացված կարգավորումները: Միջազգային մակարդակում նշված ուղղություններից յուրաքանչյուրի համար նախատեսված են հստակ կարգավորումներ, տարբեր գործիքներ՝ ներառյալ ագրոարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների և ճյուղերի արտոնյալ և անհատույց ֆինանսավորումը:

Այսօր գյուղատնտեսության ոլորտում միջազգային առևտրի կանոնների ձևավորումը տեղի է ունենում Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում՝ բազմաթիվ պետությունների մասնակցությամբ: Ուստի, ցանկացած երկրում գյուղատնտեսության պետական աջակցության համակարգը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով միջազգային պահանջները:

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 351-352:

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**2.1 ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի
գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշների
վերլուծություն**

Գյուղատնտեսությունը յուրաքանչյուր երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է: Գյուղատնտեսության արտադրողականությունը և ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում են սննդամթերքի գները և դրանով իսկ ազդում բնակչության կենսամակարդակի վրա: Այն նաև բազմարկչի ազդեցություն է ունենում տնտեսության այն հատվածների վրա, որոնք ընդգրկված են սննդամթերքի վերամշակման և արտահանման ոլորտներում:

Գյուղատնտեսությունը զգալի մասնաբաժին ունի Հայաստանի ՀՆԱ-ի մեջ և, ըստ այդմ, կարող է էապես նպաստել տնտեսական հետագա աճին: Նպաստելով ՀՆԱ-ի 11.7%-ին, ապահովելով այս ոլորտում զբաղվածների շուրջ 22%-ի ընդգրկվածությունը և ունենալով արտահանման մեջ գյուղատնտեսական ապրանքների և դրանց վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքի մեծ տեսակարար կշիռ՝ գյուղատնտեսությունը կարևոր դերակատարում ունի Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Պատկերն ամբողջանում է՝ նշվածին ավելացնելով նաև գյուղատնտեսության կարևորությունը երկրի պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Թեպետ գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ 2000 թվականից ի վեր նվազել է, այնուամենայնիվ, այն կազմում է ավելի քան 11.7%: Այդ նույն ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական արտադրանքը բացարձակ մեծությամբ կայուն աճ է արձանագրել՝ բացառությամբ 2009 թ. ֆինանսական ճգնաժամով պայմանավորված զգալի անկման: Գյուղատնտեսության աճը տվյալ ժամանակաշրջանում, տնտեսության աճի հետ մեկտեղ, մեծապես նպաստեց ոչ քաղաքային բնակչության եկամուտների աճին և աղքատության մակարդակի նվազմանը: Գյուղատնտեսության դերը աղքատության հաղթահարման գործում կարևոր է բոլոր երկրներում՝ անկախ դրանց զարգացման մակարդակից: Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, գյուղատնտեսությունից ստացված ՀՆԱ-ի աճը, գյուղա-

տնտեսությունից դուրս ՀՆԱ-ի աճի⁴⁹ նկատմամբ, աղքատության հաղթահարման գործում առնվազն կրկնակի արդյունավետ է:

Չնայած այս կարևորագույն դերին՝ ոլորտի առջև ծառայած մի շարք խնդիրների լուծման ուղղությամբ երկրում բացակայում է համակարգված և հետևողական քաղաքականության իրականացումը՝ ուղղված ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը: Նշվածը վերաբերում է թերևս կարևորագույն հարցին՝ գյուղատնտեսության ֆինանսավորմանը: Ընդ որում, գյուղատնտեսության ֆինանսավորումը վերաբերում է ոչ միայն և ոչ այնքան պետական սուբսիդավորմանը և պետական մասնակցությամբ ֆինանսավորման և վարկավորման ծրագրերի իրականացմանը, որքան մասնավոր կապիտալի ընդգրկմանը այս գործում:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքի մեծ մասը՝ շուրջ 97%-ը, արտադրվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ մնացածը՝ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում: ՀՀ ընդհանուր հողային տարածքը 2019 թ. կազմել է 2974.3 հազ. հա, որից 2044.2 հազ. հեկտարը (68.7%) կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը⁵⁰: ՀՀ ընդհանուր հողային մակերեսը և գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ տեսակների, 2015-2019 թթ. ունեն հետևյալ տեսքը (աղյուսակ 3):

ՀՀ ընդհանուր հողային մակերեսը և գյուղատնտեսական նշանակության հողերը՝ ըստ տեսակների 2015-2019 թթ.⁵¹

Աղյուսակ 3

	2015	2016	2017	2018	2019
Ընդհանուր հողային մակերեսը, հազար հա	2974.3	2974.3	2974.3	2974.3	2974.3
<i>որից՝</i>					
գյուղատնտեսական նշանակության հողեր	2045.7	2045.5	2043.8	2044.5	2044.2
<i>այդ թվում՝</i>					
վարելահող	446.7	446.4	446.0	445.6	444.8
բազմամյա տնկարկ	34.4	34.7	34.8	35.3	36.4
խոտհարք	121.1	121.1	121.0	121.0	121.1
արոտ	1051.3	1051.3	1050.8	1051.6	1051.1
այլ հողեր	392.2	392.0	391.2	391.0	390.8

Աղյուսակից երևում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքը նշված ժամանակահատվածում գրեթե չի փոփոխվել: Մասնավորապես, 2019 թ. գյուղատնտեսական նշանակության հողերի մեծամասնությունը՝ 51.4%-ը, կազմել են արոտավայրերը և 21.8%-ը՝ վարելահողերը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2015-2019 թթ. ունի հետևյալ պատկերը (աղյուսակ 4):

⁴⁹ Աղբյուրը՝ World Development Report 2008, Agriculture for Development, The World Bank.

⁵⁰ <https://www.armstat.am/file/doc/99520923.pdf>

⁵¹ Ըստ ՀՀ հողային հաշվեկշռի, հուլիսի 1-ի դրությամբ, <https://www.armstat.am/file/doc/99520943.pdf>

Աղյուսակ 4

ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքը՝ ըստ տնտեսությունների
2015-2019 թթ.⁵² (ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ)

	2015	2016	2017	2018	2019
Ընդամենը	945.4	878.5	908.6	892.9	853.3
<i>աղ թվում՝</i>					
բուսաբուծություն	550.0	486.7	469.3	415.8	410.9
անասնաբուծություն	395.4	391.8	439.3	477.1	442.4
Առևտրային կազմակերպություններ	27.8	27.7	32.1	45.2	52.7
<i>աղ թվում՝</i>					
բուսաբուծություն	2.3	3.8	5.2	9.2	13.9
անասնաբուծություն	25.5	23.9	26.9	36.0	38.8
Բնակչության տնտեսություններ	917.6	850.8	876.5	847.7	800.6
<i>աղ թվում՝</i>					
բուսաբուծություն	547.7	482.9	464.1	406.6	397.0
անասնաբուծություն	369.9	367.9	412.4	441.1	403.6

2019 թ. ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 853.3 մլրդ ՀՀ դրամ, որից բուսաբուծության համախառն արտադրանքը՝ 48.2%, անասնաբուծությանը՝ 51.8%: Ընդ որում, 2015-2019 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի շարժընթացը ցույց է տալիս, որ այն նվազել է 9.7%-ով (բուսաբուծության 25.3% կրճատման և անասնաբուծության 11.9% ավելացման հաշվին): ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 93.8%-ը ստեղծվել է բնակչության տնտեսությունների, իսկ 6.2%-ը՝ առևտրային կազմակերպությունների կողմից:

2020 թ. ՀՀ-ից արտահանվել է 145830 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն, որը 2019-ի համեմատ աճել է 2.1%-ով: ՀՀ-ից պտուղ-բանջարեղենի արտահանման կառուցվածքը 2019-2020 թթ. ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5⁵³

ՀՀ-ից թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման ծավալը
2019-2020 թթ.

	2019		2020	
	տոննա	%	տոննա	%
Ընդամենը	142 897	100.0	145 830	100.0
Խաղող, հաբապտուղ և պտուղ, այդ թվում՝	92 946	65.0	88 791	60.9
• խաղող	15 977	17.2	24 283	27.3
• ծիրան	31 409	33.8	19 714	22.2
• դեղձ	9287	10.0	13 866	15.6
• խնձոր	14 133	15.2	10 753	12.1
Բանջարեղեն, բուսրան. մշակաբույս. և կարպոֆիլ, այդ թվում՝	49 951	35.0	57 039	39.1
• լոլիկ	24 912	49.9	28844	50.6
• կարտոֆիլ	39	0.01	9798	17.2
• վարունգ	9179	18.4	6198	10.9

⁵² <https://www.armstat.am/file/doc/99520943.pdf>, էջ 344:

⁵³ Աղբյուրը՝ ՀՀ ԿԵ ՍԱՏՍ տվյալներ:

2020 թ. ՀՀ-ից արտահանված պտուղ-բանջարեղենի 60.9%-ը կազմել է խաղողի, հատապտուղների և պտուղների արտահանումը, որը, սակայն, նախորդ տարվա համեմատ նվազել է 4.1 տոկոսային կետով: Եթե 2019 թ. խաղողի, հատապտուղների և պտուղների արտահանման մեջ առաջատարը ծիրանն էր (33.8%), ապա 2020 թ. վերջինիս արտահանումը նվազել է 11.6 տոկոսային կետով և իր տեղը զիջել խաղողին (27.3%): 2020 թ. ՀՀ-ից արտահանված պտուղ-բանջարեղենի 39.1%-ը կազմել է բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի և կարտոֆիլի արտահանումը, որի կեսից ավելին (50.6%-ը) կազմել է լոլիկի արտահանումը: Զգալիորեն աճել է նաև կարտոֆիլի արտահանումը՝ 2020 թ. կազմելով բանջարեղենի արտահանման 17.2%-ը:

Ըստ երկրների՝ արտահանման կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2020 թ. արտահանված պտուղ-բանջարեղենի 97.2%-ն արտահանվել է ՌԴ, 2%-ը՝ Վրաստան, մնացածը՝ Բելառուս, Լատվիա, Ուզբեկստան և այլ երկրներ: Ինչ վերաբերում է բուսական ծագման մթերքների ներմուծմանը ՀՀ, ապա 2019-2020 թթ. այն, ըստ առանձին ապրանքների և երկրների, ներկայացված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6⁵⁴

ՀՀ ներմուծված բուսական ծագման մթերքների ծավալը 2019-2020 թթ.

Բուսական ծագման մթերքներ	2019	2020	Արտահանող երկիրը, քանակը
	տոննա	տոննա	
	452828	505751	
• Բանան	20535	20124	Էկվադ.-19615, Թաիլանդ-23, Իրան-241, Կ.Ռիկա-69, ՀԱՀ-40, Չիլի-25, ՌԴ-41, Գվատեմալա-70
• Մանդարին	13226	15471	ԻԻՀ-4194, Պակիստ.-753, Թուրք.-3627, Վր.-6372, Մադոկկո-2, Պերու-7, ՀԱՀ-5, Հուն.-485, Իրաք-6, ՌԴ-20
• Նարինջ	13110	12586	ԻԻՀ-6188, Թուրք.-5135, Եգիպ.-959, Վր.-22, ՀԱՀ-281, Իսպ.-1
• Դեղձ, նեկտարին	2748	10151	Վր.-6510, Թուրք.-1207, ԻԻՀ-2287, Հունաստ.-146, Չիլի-1
• Կիվի	3346	4606	ԻԻՀ-4146, Վր.-1, Թուրք.-421, Չիլի-27, Իտ.-7, Չին.-4
• Չմերուկ	1639	4489	Կ.Ռիկա -24, ԻԻՀ-4020, Էկվ.-24, Թուրք.-221, Վր.-78, ՌԴ-60, Ղազախ.-62
• Նուռ	3670	3501	ԻԻՀ-2083, Թուրք.-1257, Թաիլանդ-41, Վր.-98, Պերու-8, Արգ.-1, Վր.-13
• Ցորեն	320557	354329	ՌԴ-354178, Իրան-66, Էկվադ.-69, Ղազ.-16
• Այլուր	26649	23953	ՌԴ-23799, Իտ.-7, Բելառուս.-3, Թուրք.-48, Իրան-47, Ֆր.-1, Ուկր.-48
• Մակարոնեղեն		11029	ՌԴ-9880, Իտալ.-951, Իսրայ.-94, Իրան-59, Բել.-3, Վրաստ.-10, Թաիլանդ-1, Չին.-4, Ուկր.-7, Ղազ.-20
• Բրինձ		7118	Թաիլանդ-3287, Պակիստ.-1312, ՌԴ-1902, Հնդկ.-442, Վիետն.-82, Լիբանան-2, ԻԻՀ-19, Չին.-7, Իտ.-15, ԱՄՆ-40, Ուկր.-11
• Կարտոֆիլ (սերմացու)		1908	Իսպ.-50, Նիդեռլանդ.-1219, Մեծ Բրիտ.-175, Գերմ.-71, Ֆր.-100, Բելգ.-150, ՌԴ-86, Վր.-54, Իսր.-3

⁵⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԿԵ ՄԱՏՄ տվյալներ:

Այսպես, 2020 թ. ՀՀ ներկրվել է 505 751 տոննա բուսական ծագման մթերք, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 11.7%-ով: Ընդ որում, բուսական մթերքներից ամենաշատը ներմուծվել են բանան (մեծ մասը՝ Էկվադորից), մանդարին, նարինջ, դեղձ՝ հիմնականում հարևան երկրներից (Վրաստան, ԻԻՀ, Թուրքիա), իսկ ցորեն, այլուր և մակարոնեղեն՝ ՌԴ-ից:

ՀՀ կենդանական ծագման մթերքների ներմուծման և արտահանման ծավալները 2019-2020 թթ. ունեն հետևյալ տեսքը:

Աղյուսակ 7⁵⁵

ՀՀ ներմուծված և ՀՀ-ից արտահանված կենդանական ծագման մթերքների ծավալները

Անվանումը	Չափի միավորը	Ներմուծում		Արտահանում	
		2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մանր եղջերավոր կենդանի	գլուխ	5758	4433	36553	153497
Խոշոր եղջերավոր կենդանի	գլուխ	2125	2150	10697	13120
Կենդանի խոզ	գլուխ	592	472		
Տավարի միս	տոննա	2891	636	224	
Խոզի միս	տոննա	8191	3744	379	
Գոմեշի միս	տոննա	2791	1517		
Հավի միս	տոննա	39199	20173	600	
Ոչխարի միս	տոննա		1	1194	25
Մսամթերք	տոննա	3125	2295	682	2332
Չոր կաթ	տոննա	5870	7046	24	3
Պանիր	տոննա	1004	959	2287	2532
Չուկ թարմ և պաղեցրած, ապխտած	տոննա	794	577	6283	9644

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ներմուծված կենդանական ծագման մթերքներից առաջատարը հավի միսն է՝ 20 173 տոննա, որը, սակայն, նախորդ տարվա համեմատ նվազել է 48.5%-ով: Մեծ են նաև մանր, խոշոր եղջերավոր անասունների, խոզի մսի, չոր կաթի ներմուծման ծավալները: Արտահանման կառուցվածքում մեծ են ձկան, ոչխարի մսի, պանրի ծավալները:

2020 թ. ՀՀ ագրովերամշակող ընկերությունների կողմից, նախորդ տարվա 87840.9 տոննայի համեմատ, մթերվել է շուրջ 96 823.7 տոննա պտուղ-բանջարեղեն, այդ թվում՝ 21940.4 տոննա պտուղ և 74883.3 տոննա բանջարեղեն:

Պտուղ-բանջարեղենի մթերումների գործընթացում 2020 թ. ներգրավված են եղել 42 ընկերություններ, որոնցից մի քանիսի գործունեության արդյունք-

⁵⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԿԵ ՄԱՏՄ տվյալներ:

ներն առավել մանրամասն ներկայացված են սույն ենթահարցում՝ Վայոց ձորի և Արարատի մարզերի օրինակներով:

ՀՀ պտուղ-բանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից
2019-2020 թթ. կատարված մթերումների ծավալները

Աղյուսակ 8⁵⁶

	2019	2020
Բանջարեղեն ընդամենը (տոննա)	62 507.2	74 883.3
<i>այդ թվում՝</i>		
– լոլիկ	36 855	48 298
– վարունգ	572	602
– սմբուկ	11 242	14 580
– պղպեղ	4686	5869
– լոբի, ոլոռ	1202	1229
– այլ բանջարեղեն	7951	4306
Պտուղ ընդամենը (տոննա)	25 333.7	21 940.4
<i>այդ թվում՝</i>		
– խնձոր	4175	3264
– դեղձ	2858	1773
– ծիրան	8719	8267
– կեռաս, սալոր, բալ	2720	2627.1
– ընկույզ	251	178.9
– հատապտուղ	1498	1708
– այլ պտուղ	5112	4123

2020 թ. ՀՀ վերամշակող կազմակերպությունների կողմից մթերված բանջարեղենի կեսից ավելին՝ 64.5%-ը, բաժին է ընկել լոլիկին, իսկ 30.2%-ը՝ սմբուկին: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ, մթերված բանջարեղենի ծավալն ավելացել է 19.8%-ով, իսկ միայն լոլիկինը՝ 31%-ով:

Պտուղների մթերումը 2020 թ. կազմել է 21 940.4 տոննա, որը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 13.4%-ով: Մթերված պտուղների 37.6%-ը 2020 թ. կազմել է ծիրանը, 14.9%-ը՝ խնձորը, 12%-ը՝ կեռասը, սալորը, բալը:

Ինչ վերաբերում է խաղողի մթերմանը, ապա 2019-2020 թթ. խաղողի մթերման փաստացի ծավալներն ամբողջ հանրապետությունում, այդ թվում՝ Վայոց ձորի և Արարատի մարզերում, ներկայացված են աղյուսակ 9-ում:

Խաղողի մթերման փաստացի ծավալները 2019-2020 թթ.

Աղյուսակ 9⁵⁷

	2019		2020	
	գրոնսա	%	գրոնսա	%
ՀՀ, ընդամենը	163 414.1	100.0	238 650.1	100.0
Արարատի մարզ	77 437.8	47.4	114 215.2	47.8
Վայոց ձորի մարզ	4341.2	2.6	7877.4	3.3

⁵⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԿԵ ՄԱՍՄ տվյալներ:

⁵⁷ Աղբյուրը՝ նույնը:

Ըստ աղյուսակի տվյալների՝ 2020 թ. ՀՀ վերամշակող կազմակերպությունների կողմից ընդամենը մթերվել է 238 650.1 տոննա խաղող, որի գրեթե կեսը՝ 47.8%-ը, բաժին է ընկել Արարատի մարզին: Թեև Վայոց ձորի մարզում մթերված խաղողը կազմել է ՀՀ-ում մթերված խաղողի ընդամենը 3.3%-ը, սակայն պետք է հաշվի առնել նաև մթերման գինը: Այսպես, Վայոց ձորի մարզում մշակվող Արենի տեսակի խաղողը 2020 թ. վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 250 ՀՀ դրամով, մինչդեռ սպիտակ խաղողի մթերման գինը, շաքարայնությունից կախված, տատանվել է 110-150 ՀՀ դրամի սահմաններում:

Այժմ ավելի հանգամանորեն անդրադառնանք ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի գյուղատնտեսական ցուցանիշներին:

Արարատի մարզն ընդգրկում է Արարատի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջանները՝ 97 համայնքներով (4-ը՝ քաղաքային և 93-ը՝ գյուղական): Մարզն ունի շուրջ 260.1 հազար բնակչություն, որից 73.5 հազարը քաղաքաբնակ են (28.2%), 186.6 հազարը՝ գյուղաբնակ (71.7%):

Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Արցախ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին: Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ: Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը.

- ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն),
- բ) ծխախոտային արտադրատեսակների արտադրություն (ծխախոտի խմորում ֆերմենտացիա),
- գ) հիմնային մետաղների արտադրություն,
- դ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն:

Վայոց ձորի մարզում տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, իսկ արդյունաբերությունը հիմնականում ներկայացված է գյուղմթերքի վերամշակմամբ: Գյուղատնտեսության մեջ հետևյալ ենթաճյուղերով առաջատար է անասնապահությունը՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, այծաբուծություն, մեղվապահություն, թռչնաբուծություն: Բուսաբուծության մեջ աչքի են ընկնում խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Այստեղ աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, փշատի, սերկևիլի, սալորի կեռասի, խաղողի բազմաթիվ տեսակներ, ընկույզ և հատապտուկներ: Արփայի հովտի ցածրադիր մասերում զբաղվում են բանջարաբուստանային մշակաբույսերի մշակությամբ, իսկ մարզի նախալեռնային գոտին հա-

մարվում է ՀՀ խաղողագործության 4 շրջաններից մեկը, որը հումք է ապահովում գինեգործության համար: Հայտնի է հատկապես Արենի տեսակի էս-դեմիկ խաղողը, որից արտադրվում է «Արենի» գինին: Գինեգործությունն այստեղ ունի հազարամյա պատմություն: Արդյունաբերական համալիրը լրացնում են նաև պանրագործությունը, հանքային ջրերի արտադրությունը և գինեգործությունը:

Թեպետ Արարատի և Վայոց ձորի մարզերն ընդգծված կերպով գյուղատնտեսական մարզեր են, այնուհանդերձ, դրանց մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ խիստ տարբեր է: Եթե Արարատի մարզին բաժին է ընկնում ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 14.9%-ը, ապա Վայոց ձորի մարզին՝ ընդամենը 2.5%-ը⁵⁸:

Մինչ Վայոց ձորի և Արարատի մարզերի գյուղատնտեսական ցուցանիշների վերլուծությունը՝ նախ ներկայացնենք երկու մարզի սոցիալ-տնտեսական համառոտ բնութագիրը:

Արարատի և Վայոց ձորի մարզերի սոցիալ-տնտեսական համառոտ բնութագիրը⁵⁹ | Աղյուսակ 10

	Արարատ	Վայոց ձոր
Տարածքը, քառ. կմ	2090	2308
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	7.0	7.8
Համայնքներ, 2020 թ. տարեակգրի դրությամբ	95	8
Քաղաքներ	4	3
Գյուղեր	95	52
Մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ, հազ. մարդ, այդ թվում՝	256.6	48.5
քաղաքային	72.1	17.1
գյուղական	184.5	31.4
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ., %	8.7	1.7
Գյուղական բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ., %	71.9	64.7
Գյուղատնտեսական նշանակության հողեր, հա, այդ թվում՝ վարելահողեր	156 496.8	189 600.6
Մարզի տնտեսության տեսակարար կշիռը ՀՀ տնտեսությունում 2019 թ., %	24 730.1	15 741.8
Արդյունաբերական արտադրանք	14.2	1.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք	14.9	2.5
Շինարարություն	5.6	1.5
Մանրածախ առևտրի շրջանառություն	4.1	0.5
Ծառայություններ	1.7	0.6

⁵⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2020, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2020, էջ 327 և 392:

⁵⁹ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանը թվերով, 2020, էջ 135:

Այսպիսով, ըստ վերը ներկայացված աղյուսակի տվյալների՝ թե՛ Արարատի, թե՛ Վայոց ձորի մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է: Արարատի մարզում միջին հաշվով տարեկան արտադրվում է ավելի քան 127 մլրդ ՀՀ դրամի, իսկ Վայոց ձորի մարզում՝ 21-22 մլրդ ՀՀ դրամի համախառն գյուղատնտեսական արտադրանք: Արարատի մարզում, այդ արտադրանքի հիմնական մասն ապահովվում է պտուղ-բանջարեղենի արտադրության ու վերամշակման շնորհիվ:

Ստորև բերված աղյուսակի տվյալները վկայում են, որ 2015-2020 թթ. ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ Արարատի և Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքն ունի նվազման միտում: Ե՛վ ՀՀ, և՛ Արարատի ու Վայոց ձորի մարզերի գյուղատնտեսության համախառն արտադրանքի կրճատումը պայմանավորված է բուսաբուծության արտադրանքի նվազմամբ, մինչդեռ անասնաբուծության ոլորտում պատկերը հակառակն է՝ հանրապետությունում այն աճել է 9.7%-ով, իսկ Արարատի և Վայոց ձորի մարզերում՝ համապատասխանաբար 8.0 և 13.5%-ով:


ՀՀ, Արարատի և Վայոց ձորի մարզերի գյուղատնտեսության համախառն արտադրանքը⁶⁰ | **Աղյուսակ 11**

Ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ

	2015	2016	2017	2018	2019	2020
Ընդամենը						
Հայաստանի Հանրապետություն	945.4	878.5	908.6	892.9	853.3	833.3
Արարատի մարզ	137.6	134.9	125.0	124.8	127.2	125.0
Վայոց ձորի մարզ	21.4	21.9	24.0	22.3	21.1	21.8
Բուսաբուծություն						
Հայաստանի Հանրապետություն	550.0	486.7	469.3	415.8	410.9	399.5
Արարատի մարզ	108.9	106.3	93.0	91.1	95.1	94.0
Վայոց ձորի մարզ	6.6	7.6	7.3	5.7	4.9	5.0
Անասնաբուծություն						
Հայաստանի Հանրապետություն	395.4	391.8	439.3	477.1	442.4	433.8
Արարատի մարզ	28.7	28.6	32.0	33.7	32.1	31.0
Վայոց ձորի մարզ	14.8	14.3	16.7	16.6	16.2	16.8
Տեսակարար կշիռը, %						
Հայաստանի Հանրապետություն	100	100	100	100	100	100
Արարատի մարզ	14.6	15.4	13.8	14.0	14.9	15.0
Վայոց ձորի մարզ	2.3	2.5	2.6	2.5	2.5	2.6

Ուսումնասիրվել է նաև առանձին մշակաբույսերի բերքատվության շարժ-նընթացը 2015-2020 թթ.⁶¹ ըստ դիտարկվող մարզերի:

⁶⁰ https://www.armstat.am/file/article/marzer_2021_12.pdf



Գծապարկեր 7

Գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվության շարժընթացը 2015-2020 թթ. Վայոց ձորի մարզում (g/ha)⁶¹

Կարտոֆիլի բերքատվությունը 2020 թ., նախորդ տարվա նկատմամբ, աճել է 5.4%-ով, սակայն 2015-ի նկատմամբ նվազել է 26.7%-ով և կազմել 138.4 g/ha: Նշենք նաև, որ 2015-2020 թթ. մարզում կարտոֆիլի ցանքատարածությունները ևս նվազել են 74 հա-ով (36.9%-ով), ինչի հաշվին համախառն բերքը նվազել է ավելի քան կրկնակի անգամ (54.1%-ով):

Ինչ վերաբերում է բոստանային մշակաբույսերին, ապա դրանց բերքատվությունը, ինչպես և կարտոֆիլինը, 2018-2020 թթ. ունի աճի միտում, սակայն, 2015-ի համեմատ, 2020 թ. նվազել է 38.2%-ով: Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները ևս զգալիորեն կրճատվել են (24 հա-ով), սակայն համախառն բերքն ավելացել է՝ ի հաշիվ 2019-2020 թթ. բերքատվության կտրուկ աճի:

Հացահատիկային և հատիկաբնույթի մշակաբույսերի բերքատվությունը և ցանքատարածությունները 2015-2020 թթ. նվազել են գրեթե կրկնակի անգամ, ինչի հետևանքով համախառն բերքը ևս կրճատվել է՝ 6.7 հազ. տոննայից հասնելով 1.8 հազ. տոննայի: Սա, իհարկե, լուրջ խնդիր է պարենային անվտանգության առումով, քանի որ ցորենը համարվում է ռազմավարական նշանակության պարենամթերք:

Պտղի և հատապտղի տնկարկների բերքատվության շարժընթացի ուսումնասիրությունից երևում է, որ թեպետ 2015-2020 թթ. վերջինիս ցանքատարածություններն աճել են 16.7%-ով, այնուհանդերձ, բերքատվության շուրջ 60% կրճատման պատճառով համախառն բերքը ևս կրճատվել է 58.3%-ով, ինչը վկայում է այդ ցանքատարածությունների օգտագործման ցածր արդյունավետության մասին:

⁶¹ https://armstat.am/file/article/marzer_2021_12.pdf

Հետաքրքրական է խաղողի տնկարկների բերքատվության և համախառն բերքի շարժընթացը: Այսպես, թեև վերջին տարիներին խաղողի տնկարկների ցանքատարածություններն էականորեն չեն ավելացել, սակայն համախառն բերքը զգալիորեն ավելացել է բերքատվության աճի շնորհիվ: Հատկապես բերքատվության կտրուկ աճ է նկատվում 2019-2020 թթ., երբ խաղողի և՛ բերքատվությունը, և՛ համախառն բերքը կրկնակի աճել են: Դա կարող է կապված լինել պետական աջակցության ծրագրերի կիրառման, նորարարական տեխնոլոգիաների, հակակարկտային կայանների ներդրման հետ, ինչը շատ կարևոր է Վայոց ձորում՝ որպես գինեգործությամբ զբաղվող մարզ:

Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերից ստացվող գուտ շահույթի հաշվարկը 2020 թ.⁶² | Աղյուսակ 12

	Նախորդ տարվա մնացորդի և ընթացիկ տարվա արդարությունի հանրագումար (ցեղերներ)	Գյուղացիական փոխառությունների կողմից գյուղ. արդարությունի իրացման փարեկան միջին գինը 1 կգ-ի համար (ՀՀ դրամ) ⁶³	Գյուղիջերքների արդարությունից արացվող հատույթը, հազար ՀՀ դրամ (1)* (2)	Տարեառությունների կողմից գյուղ. մշակաբույսերի արդարությունի վրա կատարված ծախսեր (հազար ՀՀ դրամ)	Գյուղիջերքների արդարությունից արացվող գուտ շահույթը, հազար ՀՀ դրամ (3)+(4)	Մշակաբույսին հարկացված փարածությունը (հա)	1 հա-ից արացվող գուտի կվամույթը, հազար ՀՀ դրամ (5) : (6)
	1	2	3	4	5	6	7
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	2437.78 (243778 կգ)	127	30 959.806	14 466.8	16 493.006	1652	9.98
Կարտոֆիլ	446.55	112	5001.360	2167.82	2 833.54	125	22.67
Բանջարանոցային մշակաբույսեր	1085.61	118	12810.198	4391.0	8419.198	319	26.40
Պտղի և հատապտղի տնկարկներ	3022.74	203.66	61 561.123	17 610.38 (13 662.38 + + 3948.0)*	43 950.743	2517	17.46
Խաղողի տնկարկներ	9077.23	149	135 250.727	76 880.54	58 370.187	1202	48.56

⁶² Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչություն:

⁶³ https://www.armstat.am/file/article/marzer_2021_16.pdf

Գնահատվել է Վայոց ձորի մարզում, ըստ առանձին մշակաբույսերի, գյուղատնտեսական արտադրության շահութաբերությունը՝ հիմք ընդունելով մարզի 520 գյուղացիական տնտեսությունների հարցման արդյունքները:

Ուսումնասիրելով մարզի 2020 թ. գյուղատնտեսական արտադրանքի իրացման ուղղությունները՝ պարզվում է, որ արտադրված գյուղատնտեսական մթերքների զգալի մասն օգտագործվել է սեփական տնտեսությունում, մասնավորապես՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի 62%-ը (որից՝ վերամշակվել է 67.8%-ը), բանջարանոցային, բոստանային մշակաբույսերի և կարտոֆիլի 83-86%-ը, ձվի և բրդի 73-76%-ը, կաթի 53%-ը:

Վաճառքի ծավալներով առաջատար են խաղողը (ընդհանուր բերքի 82%-ը), մսամթերքը՝ 69%, մեղրը՝ 37%, կաթը՝ 36%, պտուղ-հատապտուղը՝ 31%:

Քանի որ բազմամյա տնկարկները հիմնական միջոցներ են, ապա պտուղների և հատապտուղների, ինչպես նաև խաղողի տնկարկների գծով կատարված ծախսերը համամասնորեն բաշխվում են գալիք ժամանակաշրջանի (5 տարվա) ծախսերի վրա և գումարվելով յուրաքանչյուր տարվա ընթացիկ ծախսերին՝ կազմում են հաշվետու տարվա ընդհանուր ծախսերը՝ բազմամյա տնկարկների գծով:

Այսպիսով, համադրելով Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվության և մեր կողմից հաշվարկված շահութաբերության ցուցանիշները՝ կարող ենք որոշակի եզրահանգումներ կատարել մարզում մրցակցային առավելություններ ունեցող մշակաբույսերի արտադրության վերաբերյալ, մասնավորապես.


- մարզում հատկապես բարձր է խաղողի տնկարկներից, բանջարանոցային մշակաբույսերից և կարտոֆիլից ստացվող զուտ եկամուտը 1 հա-ի հաշվով, իսկ հացահատիկային մշակաբույսերի համար այն բավականին ցածր է՝ հաշվի առնելով վերջինիս ապրանքայնության ցածր մակարդակը:

- Խաղողի տնկարկներից ստացվող զուտ շահույթը 1 հա-ի հաշվով կազմել է 48.6 հազար ՀՀ դրամ, ու թեև վերջին տարիներին մարզում դրանց տրամադրված տարածությունն էականորեն չի ավելացել, սակայն համախառն բերքը զգալիորեն ավելացել է բերքատվության աճի շնորհիվ: Հատկապես բերքատվության կտրուկ աճ է նկատվել 2019-2020 թթ., որի ընթացքում խաղողի և՛ բերքատվությունը, և՛ համախառն բերքը կրկնակի աճել են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վայոց ձորի մարզում խաղողը բավականին մեծ պահանջարկ ունի գինու գործարանների կողմից, ապա խաղողագործության զարգացումն այստեղ բավականին հեռանկարային է:

- Մարզում համեմատաբար ցածր է հացահատիկաընդեղենային մշակաբույսերից ստացվող զուտ շահույթը՝ հաշվի առնելով, որ դրանց զգալի մասը սպառվում է սեփական տնտեսությունում, այսինքն՝ ունի ապրանքայնության ցածր մակարդակ:


Հետազոտության վերջնարդյունքների ձևակերպման նպատակով գնահատվել են նաև գյուղատնտեսության մրցունակության ցուցանիշները Արարատի մարզում և համեմատական վերլուծությամբ դիտարկվել է 2 մարզերի գյուղատնտեսությունը՝ բացահայտելով մրցակցային առավելությունները:

Կարելի է արձանագրել, որ Արարատի մարզում զգալիորեն բարձր է բանջարանոցային, բոստանային մշակաբույսերի բերքատվությունը, որոնք, սակայն, 2015-2020 թթ. ունեցել են նվազման միտում: Այսպես, բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը նշված ժամանակահատվածում նվազել է 18.1%-ով, իսկ ցանքատարածությունները՝ 23.1%-ով, ինչի հետևանքով 34.5%-ով նվազել է նաև համախառն բերքը: Բոստանային մշակաբույսերի բերքատվությունը և ցանքատարածությունները 2015-2020 թթ. նվազել են համապատասխանաբար 17.8 և 48.2%-ով, ինչի հետևանքով համախառն բերքը կրճատվել է ավելի քան կրկնակի անգամ (57.5%-ով): Մարզում բարձր է նաև կարտոֆիլի բերքատվությունը, որը 2015-2020 թթ. աճել է 8.7%-ով, սակայն ցանքատարածությունների կրճատման հաշվին համախառն բերքը կրճատվել է կրկնակի անգամ:



Գծապատկեր 8 | Գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվության շարժընթացը 2015-2020 թթ. Արարատի մարզում (g/հա)

Այնուհանդերձ, ինչպես երևում է գծապատկեր 9-ից, Արարատի մարզում բոլոր մշակաբույսերի 2020 թ. բերքատվությունը բարձր է հանրապետական միջին մակարդակից և առավել ևս՝ Վայոց ձորի համապատասխան ցուցանիշներից:



Գծապատկեր 9

ՀՀ-ում, Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվության համեմատական վերածությունը, 2020 թ. (g/հա)

Ուսումնասիրության շրջանակներում արձանագրված հիմնախնդիրների լուծման և համեմատությունների ու եզրահանգումների ձևակերպման նպատակով վերը նշված մեթոդաբանությամբ հաշվարկվել է նաև գյուղատնտեսական մշակաբույսերի 2020 թ. շահութաբերությունը Արարատի մարզում: Այս դեպքում, որպես տվյալների բազա, հիմք են ընդունվել ՀՀ վիճակագրական կոմիտեի Արարատի մարզային վարչության տվյալները՝ գյուղացիական տնտեսությունների ընտրանքային հետազոտության տվյալների հիման վրա:

Արարատի մարզում ևս վերը նշված մեթոդաբանությամբ կատարվել է պտուղների և հատապտուղների, ինչպես նաև խաղողի տնկարկների ձեռքբերման ծախսերի հաշվարկ՝ գալիք 5 տարիների կտրվածքով, որը համամասնորեն բաշխվել է ըստ այդ տարիների և գումարվել յուրաքանչյուր տարվա ընթացիկ ծախսերին:

Հաշվի առնելով նշված առանձնահատկությունները՝ Արարատի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության շահութաբերության հաշվարկը ներկայացված է աղյուսակ 13-ում:

Արարատի մարզում միավոր ցանքատարածության հաշվով հատկապես բարձր է զուտ եկամուտը բանջարանոցային մշակաբույսերից և խաղողի տնկարկներից:

Արարատի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրությունից ստացվող զուտ շահույթի հաշվարկը, 2020 թ.⁶⁴

	Նախորդ տարվա մնացորդի և ընթացիկ տարվա արգասիքային հանրագումար (ցենտներ)	Գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղ. արտադրանքի իրացման ցուցանիշի միջին գինը 1 կգ-ի համար (ՀՀ դրամ) ⁶⁵	Գյուղմթերքի արգասիքային արտադրությունից ստացվող հաստի վրա հազար ՀՀ դրամ (1)* (2)	Տնտեսությունների կողմից գյուղ. մշակաբույսերի արտադրության վրա կատարված ծախսեր (հազար ՀՀ դրամ)	Գյուղմթերքի արգասիքային արտադրությունից ստացվող զուտ շահույթը, հազար ՀՀ դրամ (3)-(4)	Մշակաբույսի արտադրությունը (տա)	1 հա-ից ստացվող զուտ եկամուտը, հազար ՀՀ դրամ (5) : (6)
	1	2	3	4	5	6	7
Հացահատիկ և հատիկա-ընդեղեն	4499.41	127	57142.5	27735.5	29407.0	2568	11.45
Կարտոֆիլ	1115.9	112	12498.1	2818.9	9679.2	508	19.05
Բանջարանոցային մշակաբույսեր	78507.73	118	926391.2	239069.3	687322.0	5110	134.5
Պտուղներ և հատապտուղներ	29755.8	203.66	606 006.623	156 747.5	449 259.123	8661	51.87
Խաղողի տնկարկներ	70 639.5	149	1 052 528.55	390 864.3	661 664.25	4849	136.45

Այսպիսով, գյուղատնտեսական արտադրության մրցունակությունը բնութագրվում է ցուցանիշների համակարգով, որոնցից առավել կարևոր են միավոր տարածությունից ստացվող համախառն արտադրանքը և զուտ շահույթը: Այդուհանդերձ, դեռևս գյուղատնտեսական մշակաբույսերի մրցունակությունը գնահատող միասնական ընդհանրական ցուցանիշ գոյություն չունի: Այս նկատառումով, առաջարկում ենք գյուղատնտեսական մշակաբույսերի մրցունակությունը գնահատել ընդհանուր ինտեգրալ ցուցանիշի հիման վրա՝ դրանց աստիճանակարգման միջոցով: Այդ նպատակով կարելի է դիտարկվող մարզի հիմնական մշակաբույսերի համար ընտրել մեկից ավելի համադրելի ցուցանիշներ և կատարել դրանց աստիճանակարգում՝ նախ յուրաքանչյուր ցուցանիշի, ապա ընդհանրացված ցուցանիշի համար: Աստիճանակարգումն առաջարկվում է կատարել հետևյալ մեթոդաբանությամբ. ցուցանիշի ամենափոքր արժեքը գնահատել 100 միավոր և աճողական կարգով հաշվարկել մյուս մշակաբույսերի բալերը, այնուհետև յուրաքանչյուր մշակա-

⁶⁴ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի Արարատի մարզային վարչություն:

⁶⁵ https://www.armstat.am/file/article/marzer_2021_16.pdf

բույսի համար ընտրված ցուցանիշների բալերի հանրագումարով կատարել վերջնական աստիճանակարգում: Տվյալ դեպքում Վայոց ձորի և Արարատի մարզերում մշակաբույսերի մրցունակության գնահատման համար ընտրվել է երկու ցուցանիշ՝ համախառն արտադրանքի և զուտ շահույթի ցուցանիշները և կատարվել է մշակաբույսերի աստիճանակարգում: Աստիճանակարգման նպատակն է՝ առավել թիրախային ու արդյունավետ դարձնել գյուղատնտեսության պետական աջակցության կամ բյուջետային ծախսերի համակարգը և դիտարկվող մարզերում բարձրացնել գյուղատնտեսության մրցունակությունը: Խնդրի այս դրվածքի պարագայում բյուջետային աջակցությունն առավել նպատակահարմար է ուղղորդել առավել բարձր վարկանիշ ունեցող մշակաբույսերի արտադրության ավելացմանը:

Աղյուսակ 14

Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի աստիճանակարգումը՝ ըստ 1 հա-ից ստացված համախառն արտադրանքի և զուտ շահույթի ցուցանիշների, 2020 թ.

Մշակաբույսը	Գյուղատնտեսական մշակաբույսերի բալային գնահատումը՝ ըստ ցուցանիշների							
	Համախառն արտադրանքը 1 հա-ից			Զուտ շահույթը 1 հա-ից			Ընդհանուր բալերը	Ջրադեզ-րած տեղերը
	տեղը	հազ. ՀՀ դրամ	բալ	տեղը	հազ. ՀՀ դրամ	բալ		
1	2	3	4	5	6	7	8	9
Հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսեր	5	140,97	100	5	9.98	100	200	5
Կարտոֆիլ	2	1550,08	1099,6	3	22.67	227,1	1326,7	2
Բանջարանոցային մշակաբույսեր	1	1768,82	1254,7	2	26.40	264,5	1519,2	1
Պտղի և հատապտղի տնկարկներ	4	344,185	244,2	4	17.46	174,9	419,1	4
Խաղողի տնկարկներ	3	1141,340	809,6	1	48.56	486,6	1296,2	3

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Վայոց ձորի մարզում առավել բարձր արդյունավետություն են ապահովում բանջարանոցային մշակաբույսերը, կարտոֆիլը և խաղողի տնկարկները, մինչդեռ, ներկայումս իրականացվող բուսաբուծության սուբսիդավորման գումարների զգալի մասն ուղղորդվում է հացահատիկային մշակաբույսերին, որի մշակությունից ստացվող համախառն արտադրանքի և զուտ շահույթի ցուցանիշները մեկ հեկտարի հաշվով ամենափոքրն են:

Արարատի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի աստիճանակարգումը, ըստ նշված ցուցանիշների, ձևավորում է հետևյալ պատկերը:

Արարատի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի աստիճանակարգումը՝ ըստ 1 հա-ից ստացված համախառն արտադրանքի և զուտ շահույթի ցուցանիշների, 2020 թ.

Մշակաբույսը	Գյուղատնտեսական մշակաբույսերի բայային գնահատումը՝ ըստ տնտեսական արդյունավետության ցուցանիշների							
	Համախառն արտադրանքը 1 հա-ից			Զուտ շահույթը 1 հա-ից			Ընդհանուր բավերը	Զբաղեցրած տարածքը
	տեղը	հազար ՀՀ դրամ	թալ	տեղը	հազար ՀՀ դրամ	թալ		
1	2	3	4	5	6	7	8	9
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	5	473,71	100	5	11.45	100	200	5
Կարտոֆիլ	3	3193,12	674,1	4	19.05	166,4	840,5	4
Բանջարանոցային մշակաբույսեր	1	4722,36	996,9	2	134.5	1174,7	2171,6	1
Պտղի և հատապտղի տնկարկներ	4	2010,12	424,3	3	51.87	453,0	877,3	3
Խաղողի տնկարկներ	2	4057,27	856,5	1	136.45	1191,7	2048,2	2

Կատարված վերլուծություններն ու հաշվարկները վկայում են, որ Արարատի մարզում միավոր ցանքատարածությունից և՛ համախառն արտադրանքի, և՛ զուտ շահույթի ցուցանիշներով առավել բարձր արդյունավետություն ունի բանջարանոցային մշակաբույսերի և խաղողի տնկարկների մշակությունը: Թեպետ կարտոֆիլի համախառն արտադրանքի բերքատվությունն այստեղ բավականին բարձր է, սակայն վերջինիս ապրանքայնության մակարդակը ցածր է, և բերքի շուրջ 70%-ը սպառվում է սեփական տնտեսություններում: Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի մշակման արդյունավետությունը ևս Արարատի մարզում բավականին ցածր է, մինչդեռ մարզի ընդհանուր ցանքատարածությունների 11,3%-ն (2568 հա) օգտագործվում է հենց այս մշակաբույսերի մշակման համար:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ դիտարկվող մարզերում գյուղական բնակավայրերի բարեկեցության բարձրացման և ոլորտի զարգացման պահանջների բավարարման նպատակով պետք է ներդրումներ կատարել եկամտաբեր գործունեության բազմազանեցման և զարգացման ուղղությամբ⁶⁶: Դա նշանակում է, որ Վայոց ձորի և Արարատի մարզերում ցանքատարածությունների կառուցվածքի փոփոխմամբ կարելի է ապահովել գյուղատնտեսության ոլորտի առավել բարձր արդյունավետություն և պետական միջոց-

⁶⁶ Տե՛ս Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների, էջ 11, <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>

ները հատկացնել այն մշակաբույսերի մշակմանը, որոնք մրցակցային առավելություններ ունեն հենց այդ մարզերում:

Հաշվի առնելով թե՛ ՀՀ-ում, թե՛ Արարատի ու Վայոց ձորի մարզերում անասնաբուծության ոլորտում 2015-2019 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը, ինչպես նաև այն հանգամանքը, որ անասնաբուծությունը Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության գերակշռող ճյուղն է, ուսումնասիրենք անասնաբուծության հիմնական ցուցանիշները և գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը Արարատի ու Վայոց ձորի մարզերում:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը ՀՀ-ում, Արարատի և Վայոց ձորի մարզերում 2018-2020 թթ.⁶⁷

Աղյուսակ 16


Հունվարի 1-ի դրությամբ, հազ. գլուխ

	2018	2019	2020
Խոշոր եղջերավոր կենդանիներ			
Հայաստանի Հանրապետություն	590.6	571.9	579.3
Վայոց ձորի մարզ	18.4	19.4	19.7
Արարատի մարզ	41.1	40.8	40.1
<i>Որից՝</i>			
Կովեր			
Հայաստանի Հանրապետություն	266.8	254.0	251.7
Վայոց ձորի մարզ	8.3	8.1	8.1
Արարատի մարզ	14.5	14.0	13.3
Խոզեր			
Հայաստանի Հանրապետություն	166.8	197.9	223.3
Վայոց ձորի մարզ	2.2	3.6	3.7
Արարատի մարզ	18.6	22.6	22.8
Ոչխարներ և այծեր			
Հայաստանի Հանրապետություն	660.1	638.3	662.5
Վայոց ձորի մարզ	13.8	14.6	14.7
Արարատի մարզ	88.4	84.4	87.9
Ձիեր			
Հայաստանի Հանրապետություն	10.0	10.7	11.4
Վայոց ձորի մարզ	0.5	0.5	0.3
Արարատի մարզ	0.7	0.8	0.8

Աղյուսակից երևում է, որ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Վայոց ձորի և Արարատի մարզերում հիմնականում զբաղվում են խոշոր եղջերավոր կենդանիների, հատկապես՝ կովերի բուծմամբ, ինչպես նաև ոչխարաբուծությամբ և այծաբուծությամբ: Համաձայն աղյուսակում ներկայացված տվյալների՝ Վայոց ձորի մարզում 2018-2020 թթ. նշված բոլոր կենդանիների գլխաքանակը (բացառությամբ ձիերի), ի տարբերություն ՀՀ-ի և Արարատի մարզի, ավելացել է: Ընդ որում, գրանցվել է խոշոր եղջերավոր կենդանիների բավական մեծ աճ՝ շուրջ 7.1%, մինչդեռ ՀՀ-ում և Արարատի մարզում առկա է 1.9 և 2.4%

⁶⁷ https://www.armstat.am/file/article/marzer_2020_12_.pdf, էջ 54

անկում: Ընդհանուր առմամբ, Արարատի մարզում 2018-2020 թթ. նշված բոլոր կենդանիների գլխաքանակը նվազել է՝ բացառությամբ խոզերի, որոնց գլխաքանակը վերջին 3 տարիներին ավելացել է 4.2 հազարով կամ ավելի քան 22.5%-ով: Խոզերի գլխաքանակի էական աճ է նկատվել նաև Վայոց ձորի մարզում՝ շուրջ 1500 գլուխ կամ ավելի քան 68%:



Գծապատկեր 10

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը Վայոց ձորի մարզում 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ, հազար գլուխ⁶⁸

Աղյուսակ 17-ի տվյալները վկայում են, որ և՛ ՀՀ-ում, և՛ Արարատի ու Վայոց ձորի մարզերում 2017-2019 թթ. գյուղատնտեսական կենդանիների և թռչնի իրացումը, ինչպես նաև կաթի և բրդի արտադրությունը նվազել են:

Անասնաբուծական հիմնական արտադրանքի արտադրությունը ՀՀ-ում, Արարատի և Վայոց ձորի մարզերում 2017-2019 թթ. **Աղյուսակ 17**

	Իրացվել է գյուղատնտեսական կենդանիների և թռչնի ապանորի համար (կենդանի բաշտով) ⁶⁹ , հազ. գլուխ			Կաթ, հազար գրամ			Զուր, մլն հատ			Բրդ, գրամ		
	2017	2018	2019	2017	2018	2019	2017	2018	2019	2017	2018	2019
Հայաստանի Հանրապետություն	192.5	190.3	188.8	758.2	697.7	667.9	683.0	726.8	720.6	1 385	1 032	981.0
Վայոց ձորի մարզ	7.1	5.8	5.9	26.5	24.5	23.9	21.8	30.3	28.4	23.1	24.5	23.0
Տեսակարար կշիռը ՀՀ-ի նկատմամբ, %	3.7	3.0	3.1	3.5	3.5	3.6	3.2	4.2	3.9	1.7	2.4	2.3
Արարատի մարզ	13.9	13.4	13.4	46.7	41.1	40.0	62.5	64.3	59.5	183.3	147.0	139.1
Տեսակարար կշիռը ՀՀ-ի նկատմամբ, %	7.2	7.0	7.1	6.2	5.9	6.0	9.1	8.8	8.3	13.2	14.2	14.2

⁶⁸ https://www.armstat.am/file/article/marzer_2020_12.pdf, էջ 54:

⁶⁹ Ներառյալ ներքին սպառումը:

Վայոց ձորի մարզում, ի տարբերություն Արարատի մարզի, որոշ չափով աճել է ձվի արտադրությունը: Բրդի արտադրությամբ Արարատի մարզի տեսակարար կշիռը հանրապետությունում աճել է 1%-ով, իսկ Վայոց ձորի մարզինը՝ 0.6%-ով:


2.2

ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական արտադրության մրցունակության բարձրացման հիմնախնդիրների վերլուծություն

Առաջնային փվյալների հավաքագրման մեթոդաբանությունը: Ելնելով հետազոտության հիմնական նպատակից ու առաջադրված խնդիրներից՝ մշակվել և հետազոտության համար ներդրվել է անցանց Google forms և դեմ առ դեմ հարցումների եղանակով իրականացվող հարցում՝ նվիրված Վայոց ձորի և Արարատի մարզերում մրցունակության բարձրացման առկա հիմնախնդիրների ուսումնասիրմանը:

Հարցումը Վայոց ձորի և Արարատի մարզերի համայնքների թիրախային խմբերի հետ իրականացվել է նախօրոք մշակված հարցաթերթիկի հիման վրա՝ ներկայացնելով այն լրացնելու խնդրանքը պարունակող հատուկ գրություն, որը նաև բացահայտում էր սույն հետազոտության հիմնական նպատակը: Հարցաթերթիկը տե՛ս հավելված 1-ում:

Մշակված հարցաթերթիկն իր բնույթով փորձագիտական հարցման (expert interview) համար նախատեսված բաց ու փակ հարցերի համակցություն է (semi-structured) և բաղկացած է հինգ հիմնական բաժիններից, որոնք ներկայացվում են ստորև:




Գծապատկեր 11 | Հարցաթերթիկի հիմնական բաժինները

Հետազոտության արդյունքների բարելավման ու տվյալների որակի բարձրացման նպատակով ընտրվել է հարցման մասնակիցների հստակ թիրախային խումբ, որը ներառում է ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերի

տարբեր համայնքների համայնքապետարանների աշխատակիցներին, ավագանու անդամներին, համայնքային ենթակայության տակ գործող կազմակերպությունների աշխատակիցներին ու ՀԿ ներկայացուցիչներին: Հավաքագրված տվյալները ենթարկվել են տրամաբանական և որակական ստուգման:

1. Դաշտային աշխատանքներ ու փոխյալների մշակում


Նկարագրված թիրախային խմբի ներկայացուցիչների շրջանում փորձագիտական հարցումների իրականացման դաշտային աշխատանքներն ընթացել են 2021 թ. հուլիսից մինչև հոկտեմբեր: Նշված ընթացքում հարցվել են 62 փորձագետներ՝ հետևյալ բաշխվածությամբ:



Գծապատկեր 12

Հարցմանը մասնակցած թիրախային խմբի կազմը

Ուսումնասիրվել է նաև հարցման մասնակիցների կրթական մակարդակը:



Գծապատկեր 13


Հարցմանը մասնակցած թիրախային խմբի անդամների կրթական մակարդակի կառուցվածքը

Թիրախային խմբի ներկայացուցիչների գերակշիռ մեծամասնությունն (79,0%) ունի բարձրագույն կրթություն, մասցյալը՝ միջնակարգ կամ հետբուհական:

Հավաքագրված տվյալները ենթարկվել են տրամաբանական և որակական ստուգման, մշակվել են SPSS ծրագրային փաթեթի շրջանակներում: Տվյալների ներկայացումն ու վիզուալացումն իրականացվել է MS Excel-ի օգնությամբ:

2. Արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն


Հարցման արդյունքների վստահելիությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ հարցման մասնակիցների գերակշիռ մասը՝ 70,97%-ը, զբաղված է գյուղատնտեսական արտադրության ոլորտում:



Գծապարկեր 14

Հարցման մասնակիցների ընդգրկվածությունը գյուղատնտեսական արտադրության ոլորտում

Վայոց ձորի և Արարատի մարզերի գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվողների, համայնքների աշխատակիցների, ավագանու անդամների, համայնքային ենթակայությամբ հիմնարկների աշխատակիցների ու ՀԿ-ների ներկայացուցիչների շրջանում իրականացված հարցումների արդյունքների վերլուծությունը վկայում է, որ նշված մարզերում չափազանց մեծ է չօգտագործվող հողատարածքների տեսակարար կշիռը՝ 75,81%:




Գծապարկեր 15

Չօգտագործվող հողատարածքները

Այս իրողության փորձագիտական արձանագրումն այն է, որ անհրաժեշտ է աջակցել հողի շուկայի զարգացմանը՝ իրականացնելով հողերի ճշգրիտ գրանցում և հաշվառում, հողերի մասին նոր իրավական ակտերի ընդունում և անմշակ հողատարածքների կրճատման նպատակով տեխնիկական միջոցառումների մշակում: Կարող է գործարկվել հողերի առք ու վաճառքի էլեկտրոնային հարթակ: Քաղաքականության նպատակն է հողերի համախմբման

միջոցով արագորեն բարձրացնել հողի արտադրողականությունը, ինչի վերաբերյալ մտահոգություններ են արձանագրվել նաև փորձագիտական շրջանակներում:

Հարցումների մասնակիցներին առաջադրվել է հետևյալ հարցը՝ «Ձեր կարծիքով՝ ինչի՞ց է կախված գյուղմթերքի արտադրության րվյալ ուղղության ընտրությունը»: Այս հարցին ի պատասխան՝ կատարվել են տարբեր մեկնաբանություններ, որոնք խմբավորել ենք հետևյալ կերպ՝




Գծապարկեր 16 | Գյուղմթերքի արտադրության կոնկրետ ուղղության ընտրություն

Ակնհայտ է, որ գյուղատնտեսական արտադրության ուղղությունների ընտրությունը փորձագետները մեծապես կապում են բնակլիմայական պայմանների հետ: Այսպիսի մոտեցումը հիմնավորում է այն, որ ժամանակն է կլիմայի փոփոխությունների վերաբերյալ իրազեկման, հարմարվողականությանը, ռեսուրսների կայուն օգտագործմանն ուղղված միջոցառումներ իրականացնել՝ ջրային, հողային ռեսուրսների նոր արդյունավետ կառավարմամբ: Կարևորվել են վաճառահանման պայմանները, ձևավորվող պահանջարկի վրա ազդեցության հնարավորությունները, գների մակարդակը, հողի, գյուղմթերքի որակը: Հետաքրքրական է նաև ավանդույթների, սովորույթների շեշտադրումը:

Ելնելով հետազոտական ծրագրի նպատակներից և կառավարության դիրքորոշումից՝ այն է. «Հայաստանի գյուղատնտեսության ռազմավարության հիմնական հրամայականն է բարձրացնել գյուղատնտեսության մրցունակությունը»⁷⁰, հարցումներ են կատարվել նաև հետևյալ ձևակերպմամբ՝ «Արդյո՞ք Ձեր մարզը ունի մրցունակ գյուղատնտեսություն»: Այս արդյունք-

⁷⁰ Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, 2020-2030 թվականների, <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>


ների հետագա վերլուծությունն ու կիրառումը հենվել է այն մոտեցման վրա, որ գյուղատնտեսական արտադրանքի մրցունակությունը պայմանավորված է ոլորտի բազմաթիվ գործոններով՝ բիզնես միջավայր, աշխատուժի, հողի, ջրի առկայություն և որակ, գյուղատնտեսության ոլորտի քաղաքականություն և կանխատեսելիություն, ֆինանսական գործիքներ և դրանց հասանելիություն, շուկայի զարգացման մակարդակ (որքանով է շուկան բաց, հասանելի բոլոր արտադրողների համար): Մրցունակության բարձրացումը պահանջում է համապարփակ ջանք և միաժամանակյա աշխատանք տարբեր բնագավառներում:



Գծապարկեր 17

Մրցունակ գյուղատնտեսություն ունեցող մարզի կարգավիճակ


Հետագա հարցումների ընթացքում պարզվել է, որ համայնքում գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելու հիմնական մոտիվացիան հարցվողների 95,16%-ի կողմից համարվում են գույքային, ֆինանսական դրդապատճառները:



Գծապարկեր 18

Մարզերում ոլորտի մրցունակության բարձրացման հնարավորությունները


Ուսումնասիրվող մարզերում մրցունակության բարձրացման հնարավորությունները հարցվողների 54,84%-ի կարծիքով՝ կախված են վաճառահանման գործընթացների ժամանակին և արդյունավետ կազմակերպումից: Նրանք նաև կարծում են, որ կայուն գյուղատնտեսական արտադրության հասնելու և նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունից օգտվելու համար անհրաժեշտ է նախ զարգացնել տեղական գյուղատնտեսական շուկաները:



Գծապարկեր 19

Գյուղատնտեսական մրցունակ արտադրանք

Մարզերում գյուղատնտեսական մրցունակ արտադրանքի արտադրության կազմակերպման առկա եղանակի մասին հարցումներն արձանագրել են ներքոնշյալ տվյալները՝ հիմնավորելով, որ մեր երկրում կա հարուստ գյուղատնտեսական ժառանգություն (Հայաստանը՝ որպես խաղողագործության և ծիրանի մշակության հայրենիք) և ամենակարևորը՝ բարենպաստ էկոլոգիական պայմաններ՝ բարձրորակ ջուր ու բարձրադիր տարածքներ, որոնք ապահովում են առավել համեղ գյուղատնտեսական արտադրանք:



Գծապարկեր 20


Մասնագետների վերապատրաստումը՝ որպես գյուղատնտեսության զարգացման խնդիրների առավել արդյունավետ լուծման ուղի

«Գյուղատնտեսության զարգացման խնդիրների առավել արդյունավետ լուծման համար փենսնո՛ւմ եք արդյոք մասնագետների վերապատրաստման անհրաժեշտություն»՝ հարցին մասնակիցների գրեթե 80%-ը պատասխանել է դրական՝ այն համարելով խիստ օգտակար:

Հետևաբար, գյուղատնտեսության ոլորտի զարգացման նպատակով անհրաժեշտ են ներդրումներ մարդկային կարողությունների զարգացման և բացահայտման ուղղությամբ, որը ենթադրում է կրթական, մասնագիտական ուսուցման և վերապատրաստման համակարգի բարեփոխում՝ ներգրավելով երիտասարդությանը, կատարելագործելով գյուղացիական տնտեսավարողների հմտությունները:

Հարցումների ընթացքում հարցվողներին առաջարկվել է նաև ներկայացնել իրենց կարծիքը՝ ձևակերպելով մարզային կտրվածքով գյուղատնտեսության զարգացման երեք կարևոր հիմնախնդիրները: Արդյունքները փաստում են, որ գլխավոր խնդիր է համարվել.

- գյուղատնտեսական արտադրանքի մթերումների պատշաճ և արդյունավետ կազմակերպումը՝ 24%,
- ոռոգման համակարգի և ջրային պաշարների ձևավորման ժամանակակից եղանակների առկայությունը՝ 20%,
- գյուղատնտեսական տեխնիկայի արդիականացումն ու թարմացումը՝ 12%:



Գծապատկեր 21

Գյուղատնտեսության զարգացման երեք կարևոր հիմնախնդիրները՝ վայոց ձորի և Արարատի մարզերում

Հարցումների արդյունքների քանակական և որակական վերլուծությունը և արձանագրված հիմնախնդիրների լուծումները կարող են ապահովել.

- պետական աջակցության ծրագրերի տեղեկատվական հասանելիություն և թափանցիկություն, պետական և մասնավոր հատվածի գործունեության համատեղ իրականացում,
- հողային ռեսուրսների նպատակային օգտագործման բարելավման և հողատեսքերի խոշորացման գործընթացի հանրային ընկալում,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների համար գործունեության նպաստավոր պայմանների ստեղծման և մրցունակության բարձրացման կառուցակարգերի ձևավորման անհրաժեշտության շեշտադրում,
- գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացում, հատկապես կոոպերացիայի արդյունավետության հիմնավորման նախադրյալների ձևակերպում,
- մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի տեխնիկական հագեցվածության բարելավման վերաբերյալ նոր հնարավորությունների բացահայտում,
- գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների բարելավման հնարավոր ուղիների բացահայտում և առաջարկում:

Հարցումների պատասխանների քանակական և որակական վերլուծության արդյունքների հաշվառումը կարող է նպաստել ուսումնասիրվող մարզերում գյուղատնտեսության մրցունակության բարձրացման նպատակով իրականացվող միջոցառումների մշակմանը:

2.3

Գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունն ապահովող արդյունավետության ցուցանիշների վերլուծությունը և գյուղատնտեսության մրցակցային ներուժի գնահատումը Վայոց ձորի և Արարատի մարզերում

ՀՀ Կառավարության 2022 թ. բյուջետային ուղերձում նշվում է, որ գյուղատնտեսության ոլորտում Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արտադրողականության բարձրացմանը, հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողաբար ու արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացմանը, անասնաբուծության և բուսաբուծության զարգացմանը, արդիական

տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրանքի իրացմանն ու արտահանման խթանմանը, գյուղատնտեսական արժեշտի թայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերք վերամշակողների եկամուտների ավելացմանը: Ագրոպարենային համակարգի զարգացման քաղաքականության մեջ որպես հիմնական գերակայություններ են դիտարկվում գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, բնակլիմայական ռիսկերի մեղմումն ու տնտեսավարողների եկամուտների ավելացումը⁷¹: Այս համատեքստում կարևորվում է գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունն ապահովող արդյունավետության ցուցանիշների վերլուծությունը և գյուղատնտեսության մրցակցային ներուժի գնահատումը Վայոց ձորի և Արարատի մարզերում:

Ինչպես հայտնի է, գյուղատնտեսական արտադրանքի աճ կարելի է ապահովել՝ ի հաշիվ կիրառվող ռեսուրսների քանակի ավելացման կամ դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման: Այդ նպատակով շատ կարևոր է նաև աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, որի արդյունավետությունը բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշը աշխատանքի արտադրողականությունն է:

Քանի որ աշխատանքի արտադրողականության աճն իր հստակ արտահայտությունը գտնում է ամենից առաջ կենդանի աշխատանքի ծախսերի բացարձակ նվազեցման մեջ, ուստի ընդունված է աշխատանքի արտադրողականության մակարդակը որոշել ծախսված միավոր կենդանի աշխատանքի ծախսերի դիմաց ստացված համախառն արտադրանքի ցուցանիշով:

Աշխատանքի արտադրողականության անուղղակի ցուցանիշներից են.

- միավոր ժամանակում կատարված գյուղատնտեսական աշխատանքի ծավալը, հա/ժամ, տ/ժամ,
- 1 հա գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության համար կատարված աշխատանքային ծախսումները, մարդ/ժամ,
- մեկ գլուխ անասունի սպասարկման համար աշխատանքային ծախսումներն անասնաբուծությունում, մարդ/ժամ,
- մեկ աշխատողի ծանրաբեռնվածությունը (համապատասխան անասնազվաքանակը մեկ աշխատողի հաշվով),
- առանձին գործողությունների համար կատարված աշխատանքային ծախսումները (կերատեսակների բաշխում, կիթ, գոմաղբի հավաքում և այլն):

Գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության գործոնների ազդեցությունը միանման չէ: Դրանցից մեկը նպաստում է աշխատանք-

⁷¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թ. բյուջետային ուղերձ, էջ 11:

քային ծախսերի կրճատմանը, մյուսները՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ավելացմանը, երրորդները միաժամանակ ներգործում են աշխատանքի տնտեսման ու արտադրության աճի վրա:

Գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականության բարձրացման գործոններից են.

- տնտեսության ֆոնդապահովվածության և ֆոնդազինվածության աճը,
- հիմնական ֆոնդերի օգտագործման ինտենսիվության բարձրացումը,
- մասնագիտացման խորացումը և գյուղատնտեսական արտադրության արդյունավետ համակենտրոնացումը,
- բուսաբուծությունում և անասնապահությունում ռեսուրսախնայողական ու առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը,
- աշխատանքի կազմակերպման բարելավումը և ինտենսիվության բարձրացումը,
- ագրոարդյունաբերական համալիրի կադրերի որակավորման բարձրացումը,
- աշխատանքի նյութական խրախուսման ուժեղացումը:

Ցանկացած երկրի գյուղատնտեսության մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է գնահատել ագրոպարենային համակարգի զարգացման ներուժը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները և այն գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են վերջինիս զարգացմանը:

Մրցակցային ներուժ ասելով հասկանում ենք այն նյութական և ոչ նյութական ռեսուրսների ամբողջությունը, որոնք թույլ են տալիս համապատասխան ռազմավարություն իրականացնել ապրանքների և ծառայությունների շուկայում հաջող մրցակցելով շուկայի մյուս մասնակիցների հետ:

Գյուղատնտեսության մրցակցային ներուժի գնահատման համար առաջարկվում է դիտարկել ցուցանիշների հետևյալ 6 խմբերը.

1. **տնտեսական ներուժի ցուցանիշներն** արտացոլում են յուրաքանչյուր մարզի՝ ֆինանսական ռեսուրսներն արդյունավետ կառավարելու հնարավորությունը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների համար:
2. **Կադրային ներուժի ցուցանիշները** ներկայացնում են, թե որքանով են աշխատանքային ռեսուրսներն իրենց ներուժն արդյունավետ օգտագործում աշխատատեղերում և առհասարակ՝ աշխատանքի շուկայում:
3. **Տեխնիկական ներուժի ցուցանիշներն** արտացոլում են գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ նյութատեխնիկական ըրագան:
4. **Նորարարական-տեխնոլոգիական ներուժի ցուցանիշները ներկայացնում են** գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման

մակարդակը նոր տեխնոլոգիաների ներդրման և աշխատանքային գործընթացների կատարելագործման հաշվին:

5. Ենթակառուցվածքային ներուժի ցուցանիշները բնութագրում են բոլոր այն ենթակառուցվածքների առկա վիճակը, որոնք այս կամ այն կերպ կարող են նպաստել գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը:

6. Հողային կառուցվածքի ցուցանիշների վերլուծությունը թույլ կտա գնահատել այն ներուժը, որի արդյունավետ օգտագործման պարագայում գյուղատնտեսության մրցունակությունն ավելի կբարձրանա:

Թվարկված ցուցանիշները բնութագրում են ՀՀ-ի, այդ թվում՝ առանձին մարզերի գյուղատնտեսական գործունեության ընթացիկ վիճակը և թույլ կտան իրականացնել ազրոպարենային համակարգի մրցակցային ներուժի համալիր վերլուծություն:

Այժմ ներկայացնենք գյուղատնտեսության մրցակցային ներուժի գնահատման ցուցանիշները⁷²:

Գյուղատնտեսության մրցակցային ներուժի գնահատման ենթացուցանիշները⁷³

Աղյուսակ 18

Ցուցանիշը	
1. Տնտեսական ներուժ	4. Նորարարական-տեխնոլոգիական ներուժ
1.1. Համայնքային բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ գյուղատնտեսության ոլորտում կատարված ծախսերի տեսակարար կշիռը	4.1. Ներդրված ռոտզման արդիական համակարգերի տարածքները (տեսակարար կշիռը ՀՀ-ի նկատմամբ)
1.2. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների համաթիվը բուսաբուծության ոլորտում	4.2 «Խելացի» անասնաշենքերով ապահովվածությունը (տեսակարար կշիռը ՀՀ-ի նկատմամբ)
1.3. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների համաթիվը անասնաբուծության ոլորտում	4.3. Հիմնված ինտենսիվ այգիները (տեսակարար կշիռը ՀՀ-ի նկատմամբ)

⁷² https://armstat.am/file/article/marzer_2020_19.pdf
<https://armstat.am/am/?nid=546>
https://armstat.am/file/article/marzer_2020_12_.pdf
https://armstat.am/file/article/marzer_2020_16_.pdf, էջ 117-118
https://armstat.am/file/article/marzer_2020_17_.pdf, էջ 129-130
https://armstat.am/file/article/marzer_2020_21.pdf, էջ 287, 291-292
https://armstat.am/file/article/sv_10_20a_113.pdf
<https://armstat.am/am/?nid=82&id=1860>
<http://mtad.am/hy/mtad21.5>
http://mtad.am/u_files/file/marzayin%20cragrer/Ararat.pdf
<http://mtad.am/hy/budgetary-expenditure/>
<https://cadastre.am/storage/files/2020hanr-hashvekshir-22.pdf>

⁷³ Աղյուսակը կազմել են հեղինակները, աղբյուրը՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2324>, <https://mineconomy.am/page/1338>

2. Կադրային ներուժ

2.1. Գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը (մարզի ընդամենը զբաղվածների նկատմամբ)

2.2 Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը գյուղատնտեսությունում

2.3. Բուսաբուծության համախառն արտադրանքը 1 զբաղվածի հաշվով

2.4. Անասնաբուծության համախառն արտադրանքը 1 զբաղվածի հաշվով

3. Տեխնիկական ներուժ

3.1. Գյուղատնտեսական տեխնիկայի քանակը 1 հա-ի հաշվով

3.2. Նորագույն տեխնիկայի տեսակարար կշիռը գյուղատնտեսական մեքենաների ընդհանուր թվաքանակում

4.4. Ձեռք բերված տոհմային կենդանիները (տեսակարար կշիռը ՀՀ-ի նկատմամբ)

5. Ենթակառուցվածքային ներուժի ցուցանիշներ

5.1. Պահեստարաններ և ծածկեր ունեցող տնտեսությունների տեսակարար կշիռը մարզում

5.2. Սառնարաններ ունեցող տնտեսությունների տեսակարար կշիռը մարզում

5.3. Գյուղատնտեսական կենդանիներ և թռչուններ պահելու համար շենք-շինություններ ունեցող տնտեսությունների տեսակարար կշիռը մարզում

6. Հողային կառուցվածքի ցուցանիշներ

6.1. Վարելահողերի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ

6.2. Արտոտվայրերի տարածքը 1 գլուխ խոշոր եղջերավոր անասունների հաշվով

Գյուղատնտեսության մրցակցային ներուժի ցուցանիշները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի, Տարածքային կառավարման, ՀՀ նախկին գյուղատնտեսության և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների հրապարակած պաշտոնական տվյալները:

Այժմ կատարենք ՀՀ մարզերի (առանց Երևան քաղաքի) վարկանշավորում՝ ըստ նշված 6 բաղադրիչների (հավելված 2): Նախ որոշենք յուրաքանչյուր մարզի զբաղեցրած դիրքը՝ ըստ յուրաքանչյուր ցուցանիշի, այնուհետև գումարելով ստացված ռանգերը՝ ստանանք յուրաքանչյուր մարզի զբաղեցրած դիրքը՝ ըստ մրցակցային ներուժի ամփոփ ցուցանիշի (հավելված 3): Ընդ որում, 10 մարզերը ռանգավորվել են՝ ըստ նվազման կարգի, այսինքն՝ առավելագույն ցուցանիշ ունեցող մարզին տրվել է 1 ռանգ, իսկ նվազագույն ցուցանիշով մարզին՝ 10:

Ստացված արդյունքների առավել արդյունավետ արտացոլման և մեկնաբանման համար ՀՀ մարզերը դասավորենք ըստ գյուղատնտեսական ներուժի ցուցանիշով իրենց զբաղեցրած դիրքերի (աղյուսակ 19), ինչը հնարավորություն կտա կատարելու բարձր, միջին և ցածր գյուղատնտեսական ներուժ ունեցող մարզերի դասակարգում:

Այսպիսով, մարզերի վարկանշավորման արդյունքում ստացանք, որ գյուղատնտեսության մրցակցային առավել բարձր ներուժ ունեն Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերը: Մասնավորապես, Արարատի մարզը ենթակառուցվածքային և տեխնիկական ներուժի ցուցանիշով զբաղեցնում է

2-րդ տեղը, մյուս ցուցանիշներով՝ 3-րդ, արդյունքում՝ ընդհանուր գյուղատնտեսության մրցակցային ներուժի ցուցանիշով 3-րդ տեղում է:

ՀՀ մարզերի դասակարգումը՝ ըստ գյուղատնտեսության մրցակցային ներուժի ցուցանիշների

Աղյուսակ 19

Մարզեր	Մարզի գյուղատնտ. մրցակցային ներուժի ամփոփ ցուցանիշը	Մարզի վարկանիշը	
Արմավիր	12	1	Բարձր
Արարատ	22	2	
Գեղարքունիք	24	3	
Արագածոտն	26	4	Միջին
Սյունիք	31	5	
Կոտայք	34	6	
Լոռի	35	7	
Վայոց ձոր	36	8	
Տավուշ	41	9	
Շիրակ	48	10	Ցածր

Ինչ վերաբերում է Վայոց ձորի մարզին, ապա այն, ըստ վարկանշավորման աղյուսակի, ունի գյուղատնտեսության մրցակցային ներուժի միջինից ցածր մակարդակ (8-րդն է մարզերի շարքում): Ընդ որում, հողային ներուժի ցուցանիշով Վայոց ձորի մարզը 2-րդ տեղում է, իսկ ենթակառուցվածքային, տեխնիկական և նորարարական ներուժի ցուցանիշները բավականին ցածր են:

Այսպիսով, կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. հաշվի առնելով, որ Արարատի մարզում հատկապես զարգացած է բուսաբուծության ճյուղը, ուստի հողային կառուցվածքի, մասնավորապես՝ գյուղատնտեսական հողերի մեջ վարելահողերի տեսակարար կշռի ավելացումը կարող է հանգեցնել գյուղատնտեսության համախառն արտադրանքի էական ավելացման: Նշենք, որ Արարատի մարզը և՛ ընդհանուր գյուղատնտեսության, և՛ բուսաբուծության համախառն արտադրանքի ցուցանիշներով 2-րդ տեղն է զբաղեցնում Արմավիրի մարզից հետո:

2. Արարատի մարզում բարձր են նաև տեխնիկական և նորարարական ներուժի ցուցանիշները: Դա պայմանավորված է նրանով, որ հատկապես վերջին տարիներին գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերով այստեղ հիմնվել են ինտենսիվ այգիներ, կառուցվել են «խելացի» անասնաշենքեր, հակակարկտային կայաններ և ներդրվել են ոռոգման արդիական համակարգեր, ինչը զգալիորեն բարձրացրել է մարզի գյուղատնտեսության մրցունակությունը:

3. Ի տարբերություն Արարատի մարզի՝ Վայոց ձորի մարզն առավելապես զարգացած է անասնաբուծության ուղղությամբ: Այստեղ նույնպես հողային ֆոնդի ներուժը բարձր է: Օրինակ, մարզի արտաավայրերը 1 գլուխ

խոշոր եղջերավոր անասունի հաշվով 2019 թ. կազմել են 4.7 հա (ամենաբարձրը մյուս մարզերի շարքում), ուստի պետական աջակցության ծրագրերով այստեղ կարելի է ավելացնել տոհմային կենդանիների գլխաքանակը, կառուցել «խելացի» անասնաշենքեր և այլն:

4. Մարզում բավականին շատ են անմշակ հողերը, որոնց մշակման և ռոտզման արդյունքում կարելի է խթանել խաղողագործության, պտղաբուծության զարգացումը, բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը:

5. Վայոց ձորի մարզում թույլ են զարգացած ենթակառուցվածքները: Մասնավորապես, սպանդանոցների, սառնարանային պահեստների կառուցումը, ռոտզման արդիական համակարգերի ներդրումը կարող են էականորեն նպաստել մարզի ընդհանուր տնտեսական զարգացմանը՝ հաշվի առնելով, որ մարզի բնակչության 64.7%-ը գյուղական բնակչությունն է:

2.4

Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ և արտահանմամբ զբաղվող կազմակերպությունների գործունեության վերլուծությունը Վայոց ձորի և Արարատի մարզերում

Վերամշակողների և փոքր ֆերմերների համագործակցությունը պարենային անվտանգության ապահովման կարևոր նախապայմաններից է: Վերամշակողների դերը՝ որպես գյուղատնտեսության ոլորտում ամենամեծ ներդրողների, անփոխարինելի է: Աջակցությունը, որ վերամշակողները կարող են ցուցաբերել, երկարատև տնտեսական և սոցիալական կայունություն է ապահովում փոքր ֆերմերների համար, ինչպես նաև գյուղատնտեսական մշակության տեխնոլոգիաների և այս ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման հնարավորություններ ընձեռում: Ներդրումների միջոցով վստահություն ստեղծելով փոքր արտադրողների շրջանում՝ վերամշակողներն իրենց մատակարարումներն ընդլայնում են գյուղատնտեսական մթերքների անհրաժեշտ հատկանիշներով և մատակարարման պայմաններով: Մնունդ վերամշակողների և փոքր ֆերմերների միջև փոխշահավետ համագործակցությունը երկու կողմերի համար էլ հնարավորություններ է ստեղծում և խթան հանդիսանում գյուղատնտեսության ոլորտի շարունակական աճի ու կայուն զարգացման համար: Նմանօրինակ փոխշահավետ համագործակցության մոդելները, որոնցում վերամշակողները և ֆերմերները կիսում են իրենց համագործակցության արդյունքում առաջացած հավելյալ արժեքները, ստեղծում են հանրային բարիք, որն իր հերթին հասանելի է դառնում նաև

շուկայի մյուս մասնակիցներին: Այս երկու կողմերի արդար գործակցության և փոխադարձ վստահության պատրաստակամությունը փոխշահավետ համագործակցության հիմքն է: Սակայն, այս հարաբերություններն ուղղակիորեն կրում են նաև այնպիսի արտաքին և «չկառավարվող» գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են ընդհանուր շուկայական իրավիճակը, իրավական, կանոնակարգային և հարկային դաշտը, ինչպես նաև աշխարհաքաղաքական խնդիրները: Այս համատեքստում կառավարության հանրային քաղաքականությունը և աջակցության մեխանիզմներն առանցքային նշանակություն ունեն վերամշակողների և փոքր ֆերմերների փոխշահավետ համագործակցությունը խթանելու հարցում: Այս հարաբերություններում կարևոր դերակատարներ են նաև ոլորտում գործող միջազգային կազմակերպությունները: Դրանք կարող են օգնել փոքր ֆերմերներին և վերամշակողներին՝ հասկանալու և գնահատելու իրենց բացթողումները, հմտությունները, կարողությունները և առկա հնարավորությունները:

Այսպիսով, ֆերմերների և վերամշակողների փոխշահավետ համագործակցության սցենարները տարբեր են՝ կախված վերամշակողների գործունեության մասշտաբներից, արտադրության մեջ օգտագործվող հումքի տեսակից, ինչպես նաև հատուկ մարտահրավերներից ու խնդիրներից, որոնք վերամշակողները տեսնում են իրենց մատակարարման շղթայում: Մանրի աճեցման և վերամշակման արժեշղթայում հարաբերությունները սովորաբար բնութագրվում են արտադրողի նկատմամբ վերամշակողի գերակա դիրքով, և բնական է, որ այդ համագործակցությունը հիմնականում վերամշակողի նախաձեռնությունն է: Տեղական սննդի վերամշակողների կողմից աջակցության բացակայությունը և փոքր ֆերմերների նկատմամբ գերիշխող դիրքը, հաճախակի հանդիպող եղանակային շոկերը և ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը ֆերմերներին միայնակ և անօգնական են դարձնում սննդի աճեցման գործում: Արդյունքում ֆերմերներն աշխատում են խիստ անորոշ պայմաններում: Այս խնդիրների պատճառով նրանք չեն ցանկանում շարունակել ապրել և աշխատել գյուղում, որտեղ ռիսկերը մեծ են, իսկ եկամուտները՝ ցածր: Երկարաժամկետ հատվածում սա կարող է հանգեցնել սննդի անվտանգության լուրջ խնդիրների, հատկապես՝ Հայաստանի նման ցամաքով շրջապատված երկրի համար, որը նաև բարդ հարաբերությունների մեջ է հարևան երկու երկրների հետ: Թեպետ Հայաստանում վերամշակող ընկերությունները գտնվում են նույն գյուղերում, որտեղ բնակվում են գյուղատնտեսական մթերքների իրենց հիմնական մատակարարները և աշխատողները, սակայն վստահության մակարդակը շատ ցածր է, և դեռևս առկա են մի շարք մարտահրավերներ, որոնք երկու կողմերն էլ պետք է հաղթահարեն՝ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ներկայացնենք Արարատի և Վայոց ձորի մարզերում գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղվող որոշ կազմակերպությունների օրի-

նակներ, որոնց արդյունավետ համագործակցությունը ֆերմերների հետ կարող է էականորեն բարձրացնել գյուղատնտեսության մրցունակությունը դիտարկվող մարզերում:

«Արենի» գինու գործարան: «Արենի» գինու գործարանը գտնվում է Վայոց ձորի Արենի գյուղում, որը պատմականորեն համարվում է հայկական գինեգործության օրրան: Այստեղ է մշակվում խաղողի հնագույն սորտերից մեկը, որն օգտագործվում է գինիների արտադրության մեջ և կրում հենց «Արենի» անվանումը:

Արենիում աճեցնում են երկու տասնյակից ավելի խաղողի տեսակներ, որոնցից առավել արժեքավոր է Արենի սորտի խաղողը: Դրանից է պատրաստվում «Արենի» հանրահայտ գինին, որը տարեկան արտադրվում է ավելի քան 300 տոննա և իրացվում ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում:

Վայոց ձորի մարզում խաղողի մշակման մրցունակությունը գնահատելու նպատակով ներկայացնենք «Արենի» գինու գործարանի ֆինանսական ցուցանիշները և դրանց հիման վրա հաշվարկենք շահութաբերության, արտադրողականության ցուցանիշները 2018-2020 թթ.:

«Արենի» գինու գործարանի հիմնական ցուցանիշները 2018-2020 թթ.⁷⁴ | Աղյուսակ 20


Ցուցանիշները	2018	2019	2020
Աշխատողների թիվ	9	11	10
Արտադրանքի մատակարարումից համախառն եկամուտ (ՀՀ դրամ)	63 066 477	87 797 419	63 736 740
Ընդհանուր ծախսեր	60 736 360	68183 920	58 000 000
Զուր շահույթ	2 330 117	19 613 499	5 736 740
Շահութաբերության մակարդակ	3,8%	28,8%	9,9%
Աշխատանքի արտադրողականության մակարդակ (շահույթի մեծությունը 1 աշխատողի հաշվով)	258 902	1 783 045	573 674
«Արենի» գինու մնացորդը հաշվելու ժամանակաշրջանի սկզբին (լիբր)	-	-	643
Հաշվելու փարում արտադրված քանակը	-	-	9860
Իրացված քանակը	-	-	10 096
Մնացորդը հաշվելու ժամանակաշրջանի վերջում	-	-	407
Իրացման շրջանառությունը (ներստյալ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը)	-	-	11 845 725
Միավորի միջին գինը (ՀՀ դրամ)	-	-	1173.31

Գործարանի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատանքի արտադրողականության մակարդակը 2018-2020 թթ. աճել է 2.2 անգամ՝ ի հաշիվ նորագույն և արդիական տեխնոլոգիաների ներդրման: Շահութաբերության մակարդակը ևս նշված ժամանակահատվածում աճել է 6,1 տոկոսային կետով՝ 2020 թ. հասնելով 9,9%-ի: Արտադրված արտադրանքի և նա-

⁷⁴ Աղբյուրը՝ «Արենի» գինու գործարանի 2018-2020 թթ. հաշվետվություններ:

խորդ տարվա մնացորդի գումարը 2020 թ. կազմել է 10 503 լիտր, որից 10 096 լիտրը (96,1%-ը) իրացվել է, այսինքն՝ արտադրանքի ապրանքայնության մակարդակը բավականին բարձր է:

Գործարանի ծախսերի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց գերակշիռ մասը՝ 80%-ը, բաժին է ընկնում արտադրանքի արտադրության հետ կապված ծախսերին և հատկապես հումքի ձեռքբերմանը:



Գծապատկեր 22 | «Արենի» գինու գործարանի ծախսերի կառուցվածքը 2020 թ.

Եղեգնաձորի պահածոների գործարան: Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի վերամշակման կարևոր օղակներից է Եղեգնաձորի պահածոների գործարանը: Այն հիմնվել է 1967 թվականին, իսկ 2015-ին հազեցվել է նորագույն սարքավորումներով: Համագործակցությունն այնպիսի ձեռնարկության հետ, ինչպիսին Եղեգնաձորի բանջարեղենային և մրգային պահածոներ արտադրող գործարանն է, մարզում գյուղատնտեսության մրցունակության բարձրացման համար նոր հնարավորություններ է ստեղծում:

Գործարանի ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում, որ 2019-2020 թթ. այն ֆինանսական պարտավորությունների, ինչպես նաև հիմնական միջոցների ձեռքբերման ու ամորտիզացիոն մեծ ծախսերի պատճառով վնասով է աշխատել: 2019 թ. վնասաբերության մակարդակը կազմել է 8.0%, ինչը 2020 թ. նվազել է 7,2 տոկոսային կետով: Իհարկե, ներկա պահին ձեռնարկությունն աշխատում է վնասով, սակայն ձեռք բերված նորագույն տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ մի քանի տարի անց կատարված ծախսերը կփոխհատուցվեն, և կապահովվի որոշակի շահույթ: Դրա մասին է վկայում նաև 2020 թ. արտադրողականության աճը (նախորդ տարվա համեմատ 14.1%-ով):

Եղեգնաձորի պահածոների գործարանի հիմնական ցուցանիշները
2019-2020 թթ.⁷⁵

	2019	2020
1. Աշխատողների թվաքանակը	60	65
2. Արտադրանքի քանակը հաշվետու տարում (հատ)	609 705	1 651 031
3. Իրացված արտադրանքի քանակը (հատ)	1 012 366	1 176 276
4. Արտահանման ծավալը (հազար ՀՀ դրամ)	308 053	206 735
5. Արտադրանքի մատակարարումից ստացված համախառն եկամուտը (ՀՀ դրամ)	393 821 165	486 651 329
6. Ընդամենը ծախսեր		
<i>այդ թվում՝</i>		
• մատակարարված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսեր (ՀՀ դրամ)	274 693 929	318 530 580
• վարչական ծախսեր	46 081 495	44 279 104
• իրացման ծախսեր	21 971 290	50 436 420
• ֆինանսական ծախսեր	88 986 039	87 847 181
• հիմնական միջոցների ձեռքբերման և ամորտիզացիոն ծախսեր	50 817 153	537 943 149
• այլ ծախսեր	2 253 244	0
Հարկվող շահույթը	-33 058 360	-927 950
Շահութաբերության (վնասաբերության) մակարդակը (%)	-8.0	-0.8

«Վեդի Ալկո» ՓԲԸ: Հայկական գինեգործության բազմադարյան փորձի շարունակողներից մեկը «Վեդի Ալկո» ընկերությունն է, որը գործում է Արարատի մարզի Գինեվետ գյուղում: Այն իր կազմում ներառում է երկու խոշոր ձեռնարկություն՝ 1938 թվականին հիմնված Գետափի գինու գործարանը և 1956 թվականին հիմնված Վեդու գինու գործարանը: Ընկերությունն արտադրում է ավելի քան 100 անուն ոգելից խմիչքներ՝ տարատեսակ օղիներ, մրգահատապտղային թունդ ըմպելիքներ, կոնյակներ, անապակ, կիսաանապակ, կիսաքաղցր, կիսաաղանդերային, աղանդերային բարձրորակ գինիներ, որոնք մեծ պահանջարկ են վայելում սպառողների շրջանում: Ընկերությունը նաև հետևում է համաշխարհային գինեգործության զարգացման նորարարություններին և մշտապես կատարում արտադրական հզորությունների տեխնիկական վերազինում: Դրա մասին են վկայում արտադրության մեջ ներդրված խաղողի վերամշակման և պատրաստի արտադրանքի շշացման նորագույն սարքավորումներն ու հոսքագծերը: «Վեդի Ալկո» ընկերության արտադրանքը հաջողությամբ արտահանվում է Ռուսաստան, ԱՄՆ, Ուկրաինա, Եվրոպական և մերձբալթյան երկրներ, իսկ վերջերս՝ նաև Մոնղոլիա և Ղազախստան:

⁷⁵ Աղբյուրը՝ Եղեգնաձորի պահածոների գործարանի 2019-2020 թթ. ֆինանսական հաշվետվություններ:

«Վեդի Ալկո» ՓԲԸ-ի ֆինանսական արդյունքները 2019-2020 թթ., հազար ՀՀ դրամ⁷⁶

	2019	2020
Գործառնական գործունեությունից եկամուտներ	6 268 199	8 089 462
այդ թվում՝		
• արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	6 244 841	7 933 335
• գործառնական այլ եկամուտներ	23 358	156 127
Գործառնական գործունեության ծախսեր	5 772 331	7 556 845
այդ թվում՝		
• արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	4 909 440	6 805 551
• իրացման ծախսեր	224 079	134 230
• վարչական ծախսեր	505 325	416 962
• գործառնական այլ ծախսեր	133 487	200 102
Ընդամենը գործառնական գործունեությունից օգուտ (վնաս)	495 868	532 617
Շահութաբերության մակարդակ (%)	8.6	7.0

2020 թ., 2019-ի համեմատությամբ, «Վեդի Ալկո» ընկերության շահութաբերությունը նվազել է 1.6 տոկոսային կետով և կազմել 7%: Դրա հիմնական պատճառը գործառնական գործունեության ծախսերի ավելացումն է, մասնավորապես՝ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքը, որը 2020 թ. կազմել է ընդհանուր ծախսերի 90%-ը և նախորդ տարվա համեմատ աճել է 38.6%-ով:

«Ավելիաց» ՍՊԸ-ն իր *Nayiri food սպրանքանիշով* մասնագիտացած է մրգային և բանջարեղենային պահածոների, չորացրած մրգերի և բանջարեղենի արտադրության մեջ: Ողջ տեսականին արտադրվում է միայն Հայաստանում՝ մաքուր աղբյուրի ջրի օգտագործմամբ և բացառապես թարմ, բաճրորակ մրգերից ու բանջարեղենից: Ընկերությունում աշխատում են բարձր որակավորում ունեցող և պատասխանատու աշխատակիցներ, որոնց պրոֆեսիոնալ թիմային աշխատանքի շնորհիվ կազմակերպությունը շուկա է ներկայացնում արտադրանքների լայն տեսականի: Ընկերությունն իր արտադրանքն արտահանում է մի շարք երկրներ, այդ թվում ԱՄՆ, Ֆրանսիա, Ռուսաստան, Իսպանիա, Նիդեռլանդներ:

Կազմակերպության համախառն արտադրանքի կառուցվածքի վերլուծությունից երևում է, որ դրա կեսից ավելին կազմում են բանջարեղենային պահածոները, որոնց հումքը հիմնականում ստացվում է Արարատի մարզից: Երկրորդ տեղում կոմպոտների և հյութերի արտադրությունն է, որի մասնաբաժինը 2018-2020 թթ. կազմակերպության համախառն արտադրանքի ծավալում ավելացել է:

⁷⁶ Աղբյուրը՝ «Վեդի Ալկո» ՓԲԸ-ի ֆինանսական արդյունքների մասին 2019-2020 թթ. հաշվետվություններ:

Կազմակերպության համախառն արտադրանքի կառուցվածքը
2018-2020 թթ.

Աղյուսակ 23

Արտադրանքի անվանումը	2018		2019		2020	
	Հազ. ՀՀ դր.	%	Հազ. ՀՀ դր.	%	Հազ. ՀՀ դր.	%
Մուրաբաներ և ջեմեր	122581,09	20,9	129359,25	21,9	125629,78	20,3
Կոնյուրներ և հյութեր	132551,8	22,6	127587,2	21,6	142958,02	23,1
Բանջարեղենային պահածոներ	324927,87	55,4	320740,05	54,3	333568,72	53,9
Չրեր և չորացրած բանջարեղեն	6451,64	1,1	12994,99	2,2	16709,38	2,7
Ընդամենը	586512,4	100	590681,5	100	618865,9	100

Կազմակերպության զարգացման գլխավոր նախապայմաններից է նաև ֆինանսական կայունության ապահովումը: Աղյուսակ 24-ում ներկայացված են կազմակերպության արտադրատնտեսական ցուցանիշները:

Տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ շահութաբերության մակարդակը 2020 թ., 2018-ի համեմատ, աճել է 0,7 տոկոսային կետով, հետևաբար 2020 թ. կազմակերպությունը աճի դրական միտումներ է դրսևորել: Մակայն 2018-2019 թթ. կազմակերպության շահութաբերության մակարդակը նվազել է 1,44 տոկոսային կետով՝ պայմանավորված հումքի թանկացմամբ և շուկայում տիրող մրցակցային իրավիճակով: Իրացման և վարչական ծախսերը երեք տարվա կտրվածքով ամենաշատն իրականացվել են 2020 թ.՝ համապատասխանաբար կազմելով 90,5 մլն և 53,9 մլն ՀՀ դրամ:

«Ավելիաց» ՍՊԸ -ի արտադրատնտեսական ցուցանիշները 2018-2020 թթ.

Աղյուսակ 24

N	Ցուցանիշներ	Չ/Մ	Տարիներ		
			2018	2019	2020
1	Աշխատողների ընդհանուր թվաքանակ				
	• հիմնական	մարդ	32	35	35
	• սեզոնային	մարդ	113	118	120
	Հիմնական միջոցների արժեք	հազ. ՀՀ դր.	557158,1	429731,5	410770,1
	Շրջանառու միջոցների արժեք	հազ. ՀՀ դր.	507575,5	563507	600779
2	Համախառն արտադրանքի արժեք	հազ. ՀՀ դր.	586512,4	590681,5	618865,9
3	Համախառն արտադրանքի իրացումից ստացված հասույթ	հազ. ՀՀ դր.	584716,9	586239,1	615197,5
4	Իրացված արտադրանքի լրիվ ինքնարժեք	հազ. ՀՀ դր.	380091,6	390123,9	405514,2
5	Արտադրական ինքնարժեք	հազ. ՀՀ դր.	238531,9	252794,1	320971,5
6	Համախառն շահույթ	հազ. ՀՀ դր.	204625,3	196115,2	213683,3
7	Իրացման ծախսեր	հազ. ՀՀ դր.	88781,9	83548,6	90584,1
8	Վարչական ծախսեր	հազ. ՀՀ դր.	52777,8	53781,2	53958,6
9	Ջուտ շահույթ՝ մինչև շահութահարկով հարկումը	հազ. ՀՀ դր.	63065,6	58785,4	69140,6
10	Շահութահարկ	հազ. ՀՀ դր.	12613,12	11757,08	13828,12
11	Ջուտ շահույթ հարկումից հետո	հազ. ՀՀ դր.	50452,4	47028,32	55312,48
12	Շահութաբերության մակարդակ	%	16,5	15,06	17,2

«Ավելիաց» ՍՊԸ-ի իրացման ծախսերի կառուցվածքը

Ցուցանիշներ	2018	2019	2020
	հազ. ՀՀ դր.	հազ. ՀՀ դր.	հազ. ՀՀ դր.
Շուկայի ուսումնասիրման ծախսեր	44559,6	32816,2	28957,6
Գովազդի ծախսեր	16894,2	16512,4	15876,1
Վաճառքի խթանման ծախսեր	27328,1	34220	45750,4
Ընդամենը իրացման ծախսեր	88781,9	83548,6	90584,1

Կազմակերպության իրացման ծախսերի կառուցվածքում բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն շուկայի ուսումնասիրման ծախսերը, որոնք 2018-2020 թթ. դրսևորել են նվազման միտում, իսկ դրանց փոխարեն գրեթե կրկնակի ավելացել են վաճառքի խթանման ծախսերը:

«Սպայկա» ՍՊԸ: «Սպայկա» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2001 թ.՝ որպես Հայաստանի Հանրապետությունից դեպի ԱՊՀ ու ԵՄ երկրներ և հակառակ ուղղություններով միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող ընկերություն՝ ընդգրկելով նաև սևծովյան մուլտիմոդալ բեռնափոխադրումների ուղղությունը: Ներկայումս ընկերության գործունեությունը ներառում է տրանսպորտի, ինտենսիվ այգիների, ինտենսիվ ջերմոցների, պտուղ-բանջարեղենի վերամշակման գործարանի, պանրի արտադրության, բեռնատարների տեխնիկական սպասարկման, Եմ, ԱՊՀ, Մերձավոր Արևելքի շուկաներում առևտրային գործունեության ուղղությունները:

2007 թ. ընկերությունը Միջազգային ճանապարհային բեռնափոխադրումների գործակալության կողմից ճանաչվեց ԱՊՀ լավագույն բեռնափոխադրող, իսկ 2008-ից թարմ մրգի և բանջարեղենի արտահանման նպատակով կառուցեց առաջատար տեխնոլոգիայով հագեցած սառնարանային լոգիստիկ կենտրոն՝ ներկայումս շահագործելով շուրջ 20 հազար տոննա տարողությամբ համալիր:

2009 թ. ընկերությունը սկսեց «Արարատֆրուտ» բրենդի ներքո թարմ միրգ-բանջարեղենի արտահանումը և վաճառքը Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) մեծածախ ու մանրածախ շուկաներում:

2010 թվականից մինչև այսօր ընկերությունը շարժակազմը համալրում է VOLVO մակնիշի նոր սառնարան-բեռնատարներով՝ 2019-ին հասցնելով դրանց թիվը 315-ի:

2015 թվականին շահագործման հանձնվեց պահածոների՝ կոմպոտի և հյութերի իտալական տեխնոլոգիաներով արտադրություն՝ «Արարատֆուդ» ապրանքանիշի ներքո:

2017 թ. ընկերությունը Գրինհաուզ և Կովկասֆուդ ընկերությունների բաժնեմասի ձեռքբերմամբ հաստատվեց ջերմոցային և ինտենսիվ այգիների ոլորտում՝ միաժամանակ կառուցելով սեփական ջերմոցային համալիր (105 ՀԱ գերժամանակակից ջերմոցներ) ու ընդլայնելով ինտենսիվ այգիները (460 ՀԱ):

2020 թ. ստեղծվեց VitaFresh ապրանքանիշը, որով գյուղմթերքն արտահանվում է եվրոպական երկրներ, նույն թվականի նոյեմբերից ընկերությունը ՀՀ-ում ինտենսիվ այգի հիմնելու ծառայություն է մատուցում՝ կիրառելով այդ քնագավառում ձեռք բերած հարուստ փորձառությունը և տեխնոլոգիական առաջադիմությունը, իսկ դեկտեմբերին ընկերությունը բացեց ՈՋՆԻ Fresh Market խանութների ցանցը, որի միջոցով իրացնում է սեփական, ինչպես նաև հայկական ֆերմերների արտադրանքը:

Ընկերության առաքելությունն է Հայաստանում արտահանմանը միտված ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը՝ համայնքների կայուն զարգացմանը և ներառական տնտեսության կայացմանը նպաստելու միջոցով:

Ընկերությունը 2021 թ. դեկտեմբերից նախատեսում է ջերմոցներում անցնել այսպես կոչված «ամառային» ցիկլի, որը ենթադրում է սածիլների տարեկան վերատնկման գործընթացի իրականացում ձմռան ամիսներին և, հետևապես, ձմեռային արտադրությունից անցում գարնանային, ամառային և աշնանային արտադրության (դեկտեմբեր ամիսը ներառյալ): Ներկայումս կիրառվող արտադրական «ձմեռային» ցիկլի դեպքում ջերմոցների սածիլների տարեկան վերատնկման գործընթացը կատարվում է ամռան ամիսներին, ուստի օգոստոսից-հոկտեմբեր ջերմոցային բանջարեղեն չի արտադրվում: Այս անցման արդյունքում ընկերությունը նախատեսում է ունենալ լուրջ կիտավել բարձր բերքատվություն՝ առնվազն 57 կգ/ք.մ. (առավել տաք եղանակային պայմաններում արտադրության կազմակերպմամբ)՝ ի տարբերություն «ձմեռային ցիկլի»՝ 38 կգ/ք.մ. ցուցանիշի (ակնկալվում է, որ 12 ամսվա կտրվածքով սա կապահովի լրացուցիչ 19,000 տոննա լուրջ բերք (1 կգ լուրջ իրացման միջին արժեքը՝ 1.3 ԱՄՆ դոլար)), ինչպես նաև ակնկալում է, որ երկու ամսվա չափով գազի սպառման տնտեսում կստանա ձմռան ամիսներին՝ շուրջ 1,700 մլն ՀՀ դրամ: Արտադրական ցիկլի անցման հետ կապված՝ կապիտալ ներդրումները, ըստ պլանավորման, պետք է կազմեն շուրջ 1,500 մլն ՀՀ դրամ, որը նախատեսվում է ֆինանսավորել վերը նշված խնայված միջոցների հաշվին: Արտադրական ցիկլի փոփոխության արդյունքում ստացված հավելյալ բերքը նախատեսվում է վաճառել ՌԴ-ում:


Այսպիսով, ամփոփելով Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների գործունեության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ այս մարզերում պահանջարկը մեծ է հատկապես խաղողի, միրգ-բանջարեղենի նկատմամբ, ուստի այդ մշակաբույսերի մշակման արդյունավետության բարձրացման պարագայում կազմակերպությունները մրցակցային առավելություններ կունենան այս մարզերում:

ԳԼՈՒԽ 3

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՅ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

3.1 Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերը՝ որպես մրցունակության բարձրացման գործոն

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացմանն ուղղված որոշումներում, ծրագրերում մարզերի տնտեսական կենսունակությունը էապես բարելավելու համար նպատակադրվել է իրականացնել պետական աջակցության բազմաթիվ ծրագրեր, որոնք գործելու են հստակ ժամկետներով, հատուկ գործիքակազմով՝ ոլորտի տնտեսավարողներին ցուցաբերելով շոշափելի աջակցություն: Գյուղատնտեսության ոլորտում վարվող պետական քաղաքականության շրջանակներում պետական կարգավորման կարևոր գործիքներից է սուբսիդավորումը, որի նպատակամետ կիրառումը մեծապես պայմանավորում է գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացումը և մրցունակության բարձրացումը: Ներկայումս հանրապետության գյուղատնտեսությունում իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ներառում են սուբսիդավորման տարբեր մեխանիզմներ: Վայոց ձորի և Արարատի մարզերում մեր կողմից կատարված հարցումների քանակական և որակական վերլուծության հիման վրա կառավարության կողմից գյուղատնտեսության աջակցման գոյություն ունեցող պետական ծրագրերի մասին համայնքների տեղեկացվածության աստիճանի գնահատումը ներկայացվել է հետևյալ սանդղակով՝




Գծապատկեր 23

Գյուղատնտեսության աջակցման պետական ծրագրերի մասին համայնքների տեղեկացվածության աստիճանի գնահատումը

Աջակցության պետական ծրագրերի իրականացման գործընթացի լիարժեք կազմակերպմանը խոչընդոտում է ոչ միայն տեղեկատվության, այլև գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների ակտիվության պակասը: Հարցվողների միայն 25,81%-ն է հայտ ներկայացրել՝ կառավարության կողմից գյուղատնտեսության աջակցության ծրագրերում ընդգրկվելու համար, մինչդեռ ներկայացված հայտերի գերակշիռ մասը ֆինանսավորվել է:


«Ներկայացված հայտի/հայտերի մասով ֆինանսավորում արագե՞լ էք» հարցին րրվել են հետևյալ պատասխանները:



Գծապարկեր 24

Ներկայացված հայտի/հայտերի մասով ֆինանսավորման պատկերը

Պետական աջակցության ծրագրերին մասնակցության շրջանակը կարող է ընդլայնվել, եթե այդ ծրագրերը մարզային և համայնքային կառույցների կողմից ոչ միայն մատչելի և մանրամասն ներկայացվեն, այլև միջոցառումներ մշակվեն և իրականացվեն դրանց ակտիվացման ուղղությամբ՝ մասնավորապես հաշվի առնելով գյուղատնտեսության աջակցության ծրագրերին Վայոց ձորի և Արարատի մարզերում հարցվողների առանձնահատուկ հիմնավորումները այդ ծրագրերին չմասնակցելու պատճառների վերաբերյալ:




Գծապարկեր 25

Գյուղատնտեսության աջակցության ծրագրերին չմասնակցելու պատճառները

Այս դիտարկման տրամաբանական շարունակությունը կարող է լինել նաև ստորև ներկայացվող գծապատկերում մարդկային կապիտալի, հմտությունների և գիտելիքների կարևորության վերաբերյալ ստացված պատասխանների առանձնացումը:

- «Գյուղատնտեսության ոլորտի նշված գերակայություններից ո՞րն եք համարում Ձեր մարզի համար կարևոր» հարցի վերաբերյալ տրվել են հետևյալ պատասխանները:



Գծապատկեր 26 | Գյուղատնտեսության ոլորտի գերակայությունները

ՀՀ Կառավարության կողմից առաջարկվող բազմաթիվ ծրագրերի ցանկում առաջինը նշված է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը, որի հիմնական նպատակն է հանրապետության ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել տնտեսավարողների կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը: Այս խնդիրների լուծման միտումները ներկայացնելու նպատակով մեր կողմից իրականացված հարցումները վերաբերել են առանձին ծրագրերի մասին **Վայոց ձորի և Արարատի** մարզերում գյուղատնտեսության ոլորտի զբաղվածների տեղեկացվածությունը պարզելուն: Հարցը ձևակերպվել է այսպես՝ «Գյուղատնտեսական աջակցման հետևյալ ծրագրերից ո՞րն է Ձեզ ծանոթ»: Ստացված պատասխանները ենթարկվել են քանակական և որակական վերլուծության: Գյուղատնտեսության ոլորտի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը, պետական աջակցության մյուս ծրագրերի համեմատ, առավել հայտնի և հան-

րայնացված է: **Վայոց ձորի և Արարատի** մարզերում մեր կողմից իրականացված հարցումների ընթացքում հարցվողների 81%-ը հայտնել է, որ իրազեկ է այդ ծրագրի իրականացմանը:

Գյուղատնտեսության ոլորտի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2018-2021 թթ. տրամադրվել է 53000 միավոր վարկ՝ 130 մլդ ՀՀ դրամ ծավալով: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության՝ 2018-2020 թթ. ընթացքում **Արարատի մարզում** տրամադրվել է 6000 միավոր վարկ՝ 6,189 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով: **Վայոց ձորում** տրամադրվել է 1000 միավոր վարկ՝ 1,191 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով: Արարատի մարզում միջին հաշվով տարեկան արտադրվում է ավելի քան 127 մլրդ ՀՀ դրամի, իսկ **Վայոց ձորի** մարզում՝ 21-22 մլրդ ՀՀ դրամի համախառն գյուղատնտեսական արտադրանք: Ուստի հնարավոր է արձանագրել, որ մեկ միավոր վարկի հաշվով թողարկված համախառն գյուղատնտեսական արտադրանքը **Արարատի և Վայոց ձորի** մարզերում կազմել է հավասար մեծություն՝ գրեթե 0.0635 մլդ ՀՀ դրամ:

Ըստ էության, ծրագիրը հնարավոր է դարձնում ուսումնասիրվող մարզերում նախատեսված վարկային ռեսուրսների տեղաբաշխումը՝ ապահովելով վարկերի նպատակային օգտագործումը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի հավելանք, ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացումը: Տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման արդյունքում այդ մարզերում կբարձրանա գյուղատնտեսության ոլորտում վարկունակ պահանջարկի մակարդակը, ոլորտի ներդրումային գրավչությունն էականորեն կնվազեցնի բանկերի և վարկային կազմակերպությունների ռիսկերը, կակտիվանա մրցակցային միջավայրը:

Մյուս ծրագրերը սույն հետազոտության տարբեր հատվածներում կներկայացվեն կամ կվերլուծվեն երբեմն առավել հակիրճ, այնուհանդերձ, դրանց ուղղվածությունն ու հիմնական նպատակները կդիտարկվեն:

ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրով միայն 2020 թ. 390 շահառուի տրամադրվել է 573 միավոր գյուղատնտեսական տեխնիկա: Ծրագիրը մարզային և համայնքային մակարդակում անհրաժեշտ չափով չի հանրայնացվել: Մեր կողմից իրականացված հարցումների արդյունքներով՝ հարցվողների 82%-ը տեղյակ չէ ծրագրի գոյության մասին: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության՝ 2020 թ. 72 միավոր գյուղատնտեսական տեխնիկա է ձեռք բերվել **Արարատի մարզում: Վայոց ձորում** ձեռք է բերվել ընդամենը 5 միավոր տեխնիկա⁷⁷: **Արարատի մարզում** վարելահողերը կազմում են 24 730.1 հա, իսկ **Վայոց ձորում**՝ 15741.8 հա: Հետևաբար կարելի է ասել, որ **Արարատում** յուրաքանչյուր միավոր նոր տեխնիկային բաժին է ընկնում 343.47 հա վարելահող, իսկ Վայոց ձորում՝ 3148.4 հա: Վա-

⁷⁷ https://mineconomy.am/media/14702/%21Programs_Arm4.pdf

յոց ձորի մարզում գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալության ծրագրի ակտիվացման խիստ անհրաժեշտություն է զգացվում, և այն կարող է իրականացվել այս ծրագրով ձևավորված բարենպաստ պայմանների շնորհիվ:

ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակը ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է:

Հարցվողների 37%-ը հայտնել է, որ ծանոթ է այս ծրագրին: 2018-2021 թթ. ընթացքում ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 850 միավոր սարքավորում: Ծրագրով 2020 թ. հաստատվել է 186 հայտ՝ 6.3 մլրդ ՀՀ դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 217.9 մլն ՀՀ դրամ: **Արարատի մարզում** հաստատվել է 21 հայտ՝ 500 մլն ՀՀ դրամի չափով, **Վայոց ձորում** 7 հայտի դիմաց նվազագույն գումար է տրամադրվել:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի վերաբերյալ մեր կողմից իրականացված հարցումների ընթացքում պատասխանողների 66%-ը հայտնել է, որ տեղյակ չէր այս ծրագրի իրականացման մասին: Ծրագրի շրջանակում ամբողջ ՀՀ տարածքում 2020 թ. հաստատվել է 181 հայտ՝ 22.3 մլրդ ՀՀ դրամի չափով:

Ընդ որում, 2018-2021 թթ. ընթացքում ծրագրի շրջանակներում 40 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով 3400 պայմանագիր է կնքվել: **Արարատի մարզի** համար հաստատվել է 49 հայտ՝ շուրջ 11 մլրդ ՀՀ դրամի չափով, իսկ **Վայոց ձորի** մարզի համար՝ 11 հայտ 40 մլն ՀՀ դրամի չափով:

ՀՀ 2019-2024 թթ. տավարաբուծության զարգացման ծրագրի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը ամենացածրերից է: Ըստ հարցումների՝ մասնակիցների միայն 19%-ն է լսել այս ծրագրի մասին: Ծրագրի շրջանակներում 2020 թ. ձեռք է բերվել 391 գլուխ կենդանի՝ 345,0 մլն ՀՀ դրամ արժեքով, սուբսիդավորման գումարը կազմել է 51,5 մլն ՀՀ դրամ: **Արարատի մարզում** ձեռք է բերվել 30 գլուխ:

ՀՀ-ում 2019-2023 թթ. ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը ամենացածրն է:

Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի վերաբերյալ հարցումների ընթացքում պարզվել է, որ հարցվողների գերակշիռ մասը տեղյակ է այդ գործընթացի իրականացման մասին:

Ծրագրի ընթացքում 2020 թ. իրականացվել է 167 տեղագնություն, 86 քաղաքացու տրամադրվել է հավաստագիր, կնքվել է 35 պայմանագիր և շահագործման է հանձնվել 13 անասնաշենք, որից 2-ը՝ **Արարատում**:

ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի նպատակն է այգետնկումների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության և խաղողագործության զարգացումը, խաղողի, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, պտղի և հատապտղի ներմուծման փոխարինումը տեղական արտադրանքով և արտահանման ծավալների ավելացումը: Հարցումների ընթացքում մասնակիցների 40%-ը պատասխանել է, որ տեղյակ է այդ ծրագրի իրականացման մասին:

2018-2021 թթ. ծրագրի շրջանակներում 100 շահառու դիմել է 800 հա ինտենսիվ այգիների հիմնադրման համար: Աջակցության ծրագրի արդյունքում 2020 թ. հիմնվել է 518,6 հա այգի, ինչը 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 25 անգամ: Ծրագրի շրջանակում 2020 թ. տրամադրվել է 5.4 մլրդ ՀՀ դրամ գումարի 46 միավոր վարկ՝ 494.4 հա այգեհիմնման համար, սուբսիդավորման գումարը կազմել է 187.3 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ, շահառուների թիվն ավելացել է շուրջ 3 անգամ, իսկ ինտենսիվ այգիների մակերեսը՝ 9.7 անգամ: Ծրագրի շրջանակներում հիմնվել են ինտենսիվ այգիներ, **Արարատի մարզում՝ 36,5 հա, Վայոց ձորի մարզում՝ 32,5 հա տարածքով**: Առավել մեծ տարածքով հիմնվել են խաղողի այգիներ՝ 143 հա:

Արարատի մարզում մեծ թափ է առել ինտենսիվ այգիների հիմնումը: Շարունակվում են Քաղցրաշեն համայնքում պլանավորված 30 հա-ի փոխարեն 45.0 հա խաղողի ինտենսիվ այգու հիմնման աշխատանքները: 2020 թ. մարզում առկա 94.18 հա ինտենսիվ այգիներին կավելանա ևս 50 հա⁷⁸:

Ռոռզման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի վերաբերյալ հարցումների ընթացքում պարզվել է, որ հարցման մասնակիցների 48%-ը տեղյակ է, որ հանրապետությունում իրականացվում է ռոռզման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր: Ծրագրի շրջանակներում ներդրված ռոռզման արդիական համակարգերի տարածքներն **Արարատում** կազմում են 47,2 հա:

ՀՀ գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագրի վերաբերյալ մեր կողմից իրականացված հարցումների ընթացքում հարցվողների 48%-ը պատասխանել է, թե տեղյակ է պետական աջակցության այս ծրագրի իրականացման մասին: 2020 թ. կարկտապաշտպան ցանցային համակարգով այգիների մակերեսն ավելացել է շուրջ 14 հա-ով:

⁷⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2017-2025 թթ.զարգացման ռազմավարություն:

Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի նպատակն է փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով ավելացնել ջերմատնային տնտեսությունների մակերեսն ու արտադրության ծավալները, բարձրացնել արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը: Մեր կողմից իրականացված հարցումների ընթացքում հարցվողների 34%-ը պատասխանել է, թե տեղյակ է պետական աջակցության այս ծրագրի իրականացման մասին: Ծրագիրը մեկնարկել է 2020 թվականին, մեկնարկից սկսած՝ դիմել է 82 քաղաքացի: Ներկայացված դիմումների քանակը՝ **Արարատում 28 է, իսկ Վայոց ձորում՝** ընդամենը 1:

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրի նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականության իրականացումը: Հարցվողների 79%-ը պատասխանել է, թե տեղյակ չէ պետական աջակցության այս ծրագրի իրականացման մասին:

Հարցումներով արձանագրված պատասխանների վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի գրանցումը, ստացված փաստական, վիճակագրական նյութի նպատակային քննարկումն ու վերլուծությունը կարող են նպաստել պետական աջակցության ծրագրերի իրականացման գործընթացի հանրայնացմանը, մասնակցության մատչելի կառուցակարգերի մեկնաբանմանը, գյուղատնտեսական կոոպերատիվների նկատմամբ արտոնյալ մոտեցումների ներկայացմանը, գիտելիքների ու հմտությունների առաջնայնության հիմնավորմանը և գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների համար գործունեության նպաստավոր պայմանների ստեղծմանն և մրցունակության բարձրացմանը: Աջակցության ծրագրերի ակտիվացումն ու լիարժեք իրականացումը կհանգեցնեն գյուղատնտեսական մթերքի իրացման պայմանների բարելավմանը, արտադրողների և վերամշակողների փոխհարաբերությունների կատարելագործմանը, ագրարային արտադրական և սպասարկման գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:

3.2

Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական ապահովագրական համակարգի ներդրման գործընթացը

ՀՀ-ում գյուղատնտեսությունը, ինչպես սոցիալ-ժողովրդագրական առումով, այնպես էլ պարենային անվտանգության ապահովման և տնտեսական զարգացման տեսանկյունից, ազգային տնտեսության գերակա ճյուղերից մեկն է⁷⁹, որի առաջընթացն այլ ոլորտների համեմատությամբ առավել մեծ կախվածություն ունի զանազան ռիսկային գործոններից:

Գյուղատնտեսության վնասները բնական աղետներից միջին տարեկան ցուցանիշով կազմում են շուրջ 12 մլրդ ՀՀ դրամ, որը մասամբ է փոխհատուցվում պետության կողմից, մինչդեռ ապահովագրության դեպքում այդ փոխհատուցումները կիրականացնեն ապահովագրական ընկերությունները: 2019 թ. մեկնարկած պիլոտային ապահովագրական ծրագրում ապահովագրական ռիսկեր են ընտրվել կարկուտը և ցրտահարությունը: Նախնական փուլում ապահովագրությունը տարածվեց ծիրանի և խաղողի վրա: Անասնապահության ոլորտի ապահովագրությունը դեռևս չի քննարկվում: Ծրագրերը նախատեսում էր սուբսիդավորվող ապահովագրական վճարներ՝ ապահովագրական վկայագրի արժեքի 60-65%-ը, իսկ ֆերմերները պարտավորվելու էին 1 հա-ի դիմաց վճարել 30-35 հազար ՀՀ դրամ ապահովագրավճար⁸⁰:

Ուսումնասիրելով ՀՀ կլիմային հատուկ գյուղատնտեսական ռիսկերը՝ կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը մեր երկրում ներդնելը բարդ և երկարաժամկետ գործընթաց է՝ հաշվի առնելով ռիսկերի հաճախականությունը, կլիմայական բազմազանությունը, վնասների մեծ չափերը, ապահովագրական ընկերությունների նկատմամբ մարդկանց անվստահությունը, վիճակագրական տվյալների պակասն ու անճշտությունը և այլն: Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության միջազգային փորձի ուսումնասիրությունները վկայում են, որ, ապահովագրության այլ ձևերի ու տեսակների համեմատությամբ, ագրոապահովագրությունը համակողմանի պետական աջակցության և ուշադրության կարիք ունի, որի պայմաններում է միայն տեղի ունենում հիշյալ ապահովագրության ձևի արդյունավետ զարգացումը:

Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսությամբ զբաղված և ոլորտին ծանոթ անձանց շրջանում մեր կողմից կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ հարցվողների միայն 21%-ն է տեղեկացված գյու-

⁷⁹ Տե՛ս Հավելված ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր:

⁸⁰ Տե՛ս Financial Portal, ArmInfo Company, https://finport.am/full_news.php?id=36685&lang=1

ղատնտեսության ոլորտի ապահովագրական համակարգի ներդրման պետական ծրագրի մասին, ինչը ներդրման դժվարություններ է ստեղծում:

«Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն» ծրագրի համաձայն՝ 2019-2024 թվականների համար նախատեսված գյուղատնտեսական ապահովագրության պիլոտային ծրագիրը հիմնված է «մշակաբույսերի արտադրական ծախսերի վրա»: «Արտադրական ծախսերի» ապահովագրությունը մուլտիռիսկային ապահովագրության պայմանագիր է՝ հիմնված գյուղացու կատարած ծախսերի վրա: Այն հատուցում է հաստատուն և փոփոխական ծախսերը⁸¹: Ծրագրի շրջանակում 2 ռիսկերից (կարկուտ և հրդեհ, գարնանային ցրտահարություն) ապահովագրվում են ծիրանի, խաղողի, դեղձի, խնձորի այգիները և հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ) ցանքատարածությունները: Կարկուտ և հրդեհ ռիսկից ծիրանի և խաղողի ապահովագրությունն ընդգրկում է 6 մարզ՝ Արմավիր, Արարատ, Արագածոտն, Տավուշ, Կոտայք, Վայոց ձոր, իսկ դեղձի, խնձորի և հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ) ապահովագրությունը՝ ՀՀ բոլոր մարզերը: Գարնանային ցրտահարության ռիսկից ծիրանի, խաղողի ու դեղձի ապահովագրությունն ընդգրկում է Արմավիրի և Արարատի մարզերը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է ապահովագրավճարի առնվազն 50-60%-ի սուբսիդավորում: Ծրագիրը մեկնարկել է 2019 թվականին, և 2020 թ. հունիսի 30-ի դրությամբ 1546 շահառու ապահովագրել է շուրջ 2500 հա այգիներ և հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններ: Նախատեսվում է գյուղատնտեսական նոր պրոդուկտների ներառում ծրագրում⁸²:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ապահովագրությունը փաստացի սկիզբ է առել 2020 թվականին: Եթե այդ տարվա ընթացքում ապահովագրվում էին միայն վերը նշված մշակաբույսերը, ապա 2021-ին դրանց թիվը հասավ 9-ի. ավելացան **ձմերուկը, սեխը, սալորը և կարտոֆիլը**: Ապահովագրության տարածքն ընդլայնվեց ՀՀ բոլոր մարզերով, և Հայաստանի գրեթե բոլոր մարզերի համայնքները հնարավորություն ստացան ապահովագրելու իրենց այգիներն ու ցանքատարածությունները: 2022 թ. նախատեսվում է մշակաբույսերի անվանացանկին ավելացնել ևս մեկը՝ բալը: Ապահովագրված ռիսկերի առումով ծածկույթն անփոփոխ է, ապահովագրական ընկերությունները շարունակում են ապահովագրել կարկուտից, հրդեհից և գարնանային ցրտահարությունից: Առայժմ այլ ռիսկերի

⁸¹ Տե՛ս Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=151961>

⁸² <https://armenpress.am/arm/news/1040157.html>

ավելացում, ինչպիսիք են երաշտը, հիվանդությունները, այլ տարերային աղետները, չի նախատեսվում, և, ըստ երևույթին, 2022 թվականը կշարունակվի նույն ռիսկերով: 2021 թ. ապահովագրված ֆերմերների թվաքանակն աճել է գրեթե 3 անգամ, հավաքագրված ապահովագրավճարները՝ 4 անգամ: Ակնհայտ է գյուղապահովագրության նկատմամբ ֆերմերների հետաքրքրության աճը, որի հիմնական խթանը վերջիններիս վստահության աճն է ապահովագրության նկատմամբ: Եթե 2020 թ. ապահովագրությունը բոլորի, այդ թվում՝ ապահովագրական ընկերությունների համար նոր էր, և նկատվում էր փորձի ու վստահության պակաս, ապա 2021-ին և՛ ապահովագրական ընկերություններն արդեն ունեին հատուցումների սպասարկման փորձ, և՛ ֆերմերներն էին սկսում վստահել այս համակարգին: Այն համայնքներում, որտեղ գեթ մեկ ֆերմեր 2020-ին ստացել էր հատուցում, 2021-ին ապահովագրվում էին գրեթե բոլորը⁸³:

Ապահովագրված ֆերմերների քանակային ցանկում աճել են գրեթե բոլոր մշակաբույսերի ցուցանիշները՝ բացառությամբ խաղողի: Խաղողի նկատմամբ դիտվում է հետաքրքրության պակաս, ինչը կարելի է վերագրել 2020 թ. հատուցումների արդյունավետությանը: Հատկանշական են ծիրանի ապահովագրության ցուցանիշները: 2020 թ. համեմատ ապահովագրավճարն աճել է ավելի քան 5 անգամ, իսկ ֆերմերների թվաքանակը՝ շուրջ 2,5 անգամ: Նման տարբերությունը վկայում է, որ սկսել են ապահովագրվել համեմատաբար խոշոր այգիներ ունեցող ֆերմերները: ՀՀ-ում 2021 թ. գյուղատնտեսական ապահովագրության համակարգի առաջատարն առայժմ ծիրանն է՝ 61% տեսակարար կշռով, որին հաջորդում են խաղողը և կարտոֆիլը՝ համապատասխանաբար 12 և 11% տեսակարար կշիռներով:

2021 թ. աճել են նաև միջին համախառն ապահովագրավճարների ցուցանիշները: Այդ ցուցանիշը ներառում է ֆերմերի կողմից վճարվող և պետության կողմից սուբսիդավորվող վճարների հանրագումարը: Եթե 2020 թ. միջին համախառն ապահովագրավճարը կազմել է 84,306 ՀՀ դրամ, ապա 2021-ին այն հասել է **110,909-ի**: Միայն ֆերմերի կողմից վճարվող միջին ապահովագրավճարը 2020-ի 39,685 ՀՀ դրամից դարձել է **46,420 ՀՀ դրամ**: Ապահովագրված ֆերմերների քանակը **Արարատի մարզում** 2020 թ. եղել է 228, իսկ 2021-ին նվազել է՝ հասնելով 222-ի: Նույն ժամանակահատվածում **Վայոց ձորի մարզում** այդ թիվն աճել է՝ *14-ից դասնալով 36*: Աճել է գրեթե բոլոր մարզերի ապահովագրված անձանց թվաքանակը, բացի **Արարատից**, Սյունիքից և Տավուշից: Արարատի մարզում նվազումը կարելի է վերագրել խաղողի ապահովագրության նկատմամբ ֆերմերների հետաքրքրության անկմանը, իսկ Սյունիքի և Տավուշի պասիվությունը, միգրացիոն, կապված է հետպատերազմյան իրավիճակի հետ: 2021 թ. հատուցումների համախառն չափը կազմել է 305,026,507 ՀՀ դրամ՝ 2020-ի 145,068,626

⁸³ <https://insurebusiness.am/>

ՀՀ դրամի համեմատ կամ անել է ավելի քան 2 անգամ: Հատուցում է ստացել 1446 ֆերմեր:

Նախնական գնահատականներով՝ 2021 թ. համախառն հատուցումների չափը կկազմի 320-ից 340 մլն՝ հաշվի առնելով նաև հոկտեմբեր ամսվա ցուցանիշները⁸⁴: 2021 թ. միջին հատուցման չափն էապես ցածր է 2020-ի ցուցանիշից, ինչը վկայում է վնասի համեմատաբար փոքր ծավալների մասին: Վնաս են կրել ավելի շատ ֆերմերներ, սակայն վնասի չափը նախորդ տարվա համեմատ փոքր է եղել, տեղի են ունեցել և՛ գարնանային ցրտահարության, և՛ կարկտահարության բազմաթիվ դեպքեր: Հրդեհի հատուցման դեպքեր ո՛չ 2020-ին, ո՛չ 2021-ին չեն եղել:

Դիտարկենք խաղողի բերքատվության իրական չափի և հատուցման ենթակա գումարների համեմատականը: Այսպես, ՀՀ-ում 2021 թ. խաղողի 1 հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 189,3 ցենտներ կամ 18930 կգ⁸⁵: 2021 թ. խաղողի մթերման միջին գինը եղել է 149 դրամ/կգ,⁸⁶ հետևաբար 1 հեկտարի միջին եկամտաբերությունը կազմել է 2,820,570 ՀՀ դրամ:

Քանի որ գյուղատնտեսության ապահովագրության ծրագրով խաղողի 1 հա-ի համար առավելագույն ապահովագրական գումարը 1,500,000 ՀՀ դրամ է⁸⁷, ապա տարբերությունն իրական եկամտաբերության հետ կկազմի 1,320,570 ՀՀ դրամ կամ 53,2%, որը գյուղատնտեսական ռիսկերից պաշտպանվածության առումով դժվար ընդունելի թիվ է: Եթե հաշվի առնենք նաև 10% չհատուցվող գումարը, ապա կարելի է եզրակացնել, որ, օրինակ, կարկուտի դեպքում 1 հա խաղողի այգու 100% վնասման դեպքում գյուղացին կստանա իրական կորցրած եկամտի 43,2%-ը, եթե ընտրած լինի ապահովագրական գումարի ամենաբարձր՝ 1,500,000 ՀՀ դրամ տարբերակը:

Այսպիսի վերլուծությունն առավել բնութագրական է **մարզային** մակարդակով. այն հնարավոր կդարձնի մարզային կամ տեղական առանձնահատկությունների դիտարկումը: Ուսումնասիրությունները և վերլուծությունները փաստում են, որ արտադրական ծախսերի մեթոդը դրական ազդեցություն ունի ցածր և բացասական ազդեցություն՝ բարձր բերքատվությամբ մարզերի դեպքում:

Արարատի և Վայոց ձորի մարզերում խաղողի միջին բերքատվությունը 1 հա-ի համար կազմել է համապատասխանաբար 272,3 և 76,6 ցենտներ, իսկ միջին եկամուտը՝ 4,057,270 և 1,141,340 ՀՀ դրամ: Արդյունքում ապահովագրական պաշտպանվածությունն **Արարատի մարզում** կլինի 36,9%, իսկ 10% չհատուցվող գումարը հանելիս՝ 26,9%: Քանի որ գյուղատնտեսության ապահովագրության ծրագրով խաղողի 1 հա-ի համար առավելագույն ապահովա-

⁸⁴ <https://insurebusiness.am/>

⁸⁵ https://armstat.am/file/article/marzer_2021_12.pdf

⁸⁶ https://www.armstat.am/file/article/marzer_2021_16.pdf

⁸⁷ Տե՛ս KWF քանկի հետազոտություն՝ Consulting Services for the Programme, Agricultural Insurance Implementation in Armenia, հունվար, 2019:

գրական գումարը 1,500,000 ՀՀ դրամ է, ապա տարբերությունը իրական եկամտաբերության հետ **Արարատի մարզում** կկազմի 2,557,270: Այսինքն, կարկուտի դեպքում 1 հա խաղողի այգու 100% վնասման դիմաց գյուղացին կստանա իրական կորցրած եկամտի 26,9%-ը, եթե ընտրած լինի ապահովագրական գումարի ամենաբարձր՝ 1,500,000 ՀՀ դրամ տարբերակը: **Վայոց ձորի** մարզում ակնհայտորեն ապահովագրական գումարն ավելի մեծ է և հետևաբար՝ ընդունելի:

ՀՀ-ում գյուղատնտեսության պատշաճ չափագրում չի իրականացվել, հետևաբար պայմանագրի կնքման փուլում բավականին դժվար է նույնակա-նացնել ապահովագրվող ցանքատարածությունը և չափերը, ինչպես նաև դրանցում առկա ծախսերի տեսակները: Մասնագետների ու ֆերմերների հետ քննարկումների արդյունքում շեշտվել է մշակված պիլոտային ծրագրի մեծ խնդիրներից մեկը՝ ծրագրով նախատեսված է, որ փոխհատուցման հաշվարկի համար հիմք է ընդունվում ու փոխհատուցվում է միայն տվյալ տար-վա բերքի կորուստը: Հաշվի չի առնվում այն, որ բնակլիմայական աղետից վնասվում է ոչ միայն բերքը, այլ նաև բույսը (ծառը), որը հաջորդ տարիներին, կախված վնասի աստիճանից, կա՛մ ընդհանրապես բերք չի տա, կա՛մ կառողջանա ու բերք կտա մի քանի տարի հետո միայն:

Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ոչ ճիշտ ձևավորման և կազմակերպման մասին է խոսում նաև այն հանգաման-քը, որ այսօր լիցենզավորված ու փաստացի գործող 6 ապահովագրական ընկերություններից միայն 3-ն են միացել Գյուղատնտեսությունը ապահովա-գրողների ազգային գործակալությանը (ԳԱԱԳ) և ներգրավվել գյուղատնտե-սության ապահովագրության ծրագրում: ԳԱԱԳ-ի <https://aina.am> կայքէջում առկա չէ տեղեկատվություն իրականացված աշխատանքների, կնքված պայ-մանագրերի, ապահովագրված հողատարածքների մասին, կամ չկան նման-օրինակ այլ վիճակագրական տվյալներ կամ հաշվետվություններ:

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության համակարգի ներ-դրման գործընթացի արդյունավետությունը, մեր կարծիքով, պայմանավոր-ված է գյուղատնտեսությունում տնտեսավարողների, ապահովագրական ըն-կերությունների և պետության միջև համագործակցության արդյունավետու-թյամբ, այդ բնագավառում ապահովագրական ռիսկերի բազմազանեցմամբ, որն էլ ներկա փուլում առավելագույնս կնպաստի Հայաստանի Հանրապե-տության ագրարային հատվածի զարգացմանը, պարենային անվտանգու-թյան մակարդակի, մրցունակության բարձրացմանը, ինչպես նաև գյուղա-տնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը: Ուստի, այդ բնագավառում հստակ և համարժեք քաղաքականության մշակումը և իրականացումը ռազմավարական նշանակություն ունեն:

Գործնականում սակավադեպ չեն գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում օրենսդրական փոփոխությունների ռիսկերը⁸⁸: Փոփոխությունների կիրառումը կարող է հանգեցնել ֆերմերների կողմից հեռահար և ռազմավարական ծրագրերից ակնկալվող արդյունքների էական շեղումների: Մասնագիտական գրականությունում կարծիք է ձևավորվել, որ գյուղատնտեսությունում, առանց պետական միջամտության, չափազանց դժվար կլինի հնարավոր խոշոր վնասներից ապահովագրական ծածկույթի ապահովումը, քանի որ ոլորտը բավական ռիսկային է, իսկ վնասների ծավալը, կախված օբյեկտիվ գործոններից (քնակլիմայական պայմաններ, համաճարակներ, կենդանիների հիվանդություններ և այլն), երբեմն՝ չափազանց մեծ⁸⁹: Գործնականում աշխարհում կիրառվում են ագրոապահովագրության ֆինանսական աջակցության, սուբսիդավորման տարբեր ձևեր⁹⁰՝ ներառելով ոլորտի շահառուների, արտադրողների, փորձագետների, մասնագետների, վերաապահովագրողների:

Գործառույթների բաշխման տեսանկյունից առանձին երկրներում⁹¹ գործում են ագրոապահովագրության համակարգի տարբեր սկզբունքներ⁹², որոնցից բխում են ագրոապահովագրության սուբսիդավորման համակարգերը⁹³:

ԱՄՆ-ում գյուղատնտեսության ապահովագրության մոդելն աչքի է ընկնում պետության և մասնավոր հատվածի փոխգործակցության առավելագույն արդյունավետությամբ⁹⁴: ԱՄՆ-ի գյուղատնտեսական ապահովագրության համակարգը ենթակա է պարտադիր լիցենզավորման⁹⁵, և ձևավորվում են ապահովագրական բազմաթիվ պրոդուկտներ⁹⁶: Իսրայելում գործում է ագրոապահովագրման պարտադիր համակարգ, և ագրոարտադրու-

⁸⁸ St' u **Mahul O., Stutley C. J.**, Government Support to Agricultural Insurance: Challenges and Opportunities for Developing Countries / Washington: The World Bank, 2010:

⁸⁹ St' u **Сплетухов Ю.А.**, Сельскохозяйственное страхование в России и зарубежом: сравнительная характеристика, Финансовый журнал, N1, 2018, էջ 87-99:

⁹⁰ St' u **Maria Bielza**, Agricultural Insurance Schemes, EUROPEAN COMMISSION, December, 2006, էջ 24-30:

⁹¹ St' u Agricultural Insurance Schemes, EUROPEAN COMMISSION, DIRECTORATE GENERAL JRC JOINT RESEARCH CENTRE – ISPRA, Institute for the Protection and Security of the Citizen, Agriculture and Fisheries Unit Authors: Maria Bielza, Costanza Conte, Christoph Dittmann, Javier Gallego, Josef Stroblmair, Final Report December, 2006, Modified February 2008:

⁹² St' u **Mahul O., Stutley C. J.**, Government Support to Agricultural Insurance: Challenges and Opportunities for Developing Countries. Washington DC: the World Bank, 2010:

⁹³ St' u World Bank Survey: Government Support to Agriculture Insurance: Challenges and Options for Developing Countries, Washington D.C., 2010, էջ 19-20:

⁹⁴ St' u **Ю. А. Сплетухов**, Сельскохозяйственное страхование в России и за рубежом: сравнительная характеристика Финансовый журнал / Financial Journal №1 2018, էջ 93-94:

⁹⁵ St' u **Павелко Н.**, Международный опыт осуществления государственной политики в сфере страхования сельскохозяйственной продукции: перспективы для Украины, апрель 2013 г., Государственное управление. Электронный вестник Выпуск № 37. Апрель 2013 г.:

⁹⁶ St' u **Шинкаренко Р.**, Международный опыт страхования сельскохозяйственных рисков. URL: <http://www.agroinsurance.com/ru/practice/?pid=5736>

թյունը 100%-ով ապահովագրված է⁹⁷: Գերմանիայում գոյություն չունի բերքի կորուստների հետ կապված օժանդակության պետական համակարգ: Միայն բացառիկ դեպքերում կարող է ընդունվել օգնության հատկացման որոշում, այն էլ՝ Եվրոպական միության համաձայնության դեպքում⁹⁸:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխարհի գրեթե բոլոր երկրներում գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացվում է պետության ֆինանսական աջակցությամբ՝ հիմնականում ապահովագրավճարի սուբսիդավորման միջոցով, և այն առավել արդյունավետ է իրագործվում պետական ու մասնավոր ինստիտուցիոնալ կառույցների ակտիվ համագործակցությամբ:

Վայոց ձորի և Արաքատի մարզերում կատարված ուսումնասիրությունների արդյունքում կարելի է կատարել հետևյալ դիտարկումը. արտադրական ծախսերի մոդելի դեպքում, միջինացված տվյալներով, ՀՀ-ում գյուղացիներն ունենում են որոշակի պաշտպանվածություն՝ համեմատելով ապահովագրական գումարը և իրական եկամուտները: Արտադրական ծախսերի ստանդարտացված մոդելի թերությունները դիտարկվում են նաև խաղողի տարբեր տեսակների ավելի մանրամասն վերլուծության ընթացքում: Այսպես, համաձայն ՀՀ **Վայոց ձորի** մարզի Արենի համայնքի բնակիչների շրջանում անցկացված հարցման՝ իրենց համայնքում խաղողի մշակման նախընտրելի տեսակը Արենին է: 2021 թ. տվյալներով՝ այդ տեսակի խաղողի միջին բերքատվությունը *158 g/hu* է, մթերման միջին գինը՝ *215-217 ՀՀ դրամ*, ինչն էականորեն գերազանցում է պաշտոնապես հրապարակված միջին բերքատվության և միջին գնի ցուցանիշները:

Վայոց ձորի մարզի Արենի բնակավայրում արտադրված խաղողի բերքը կազմել է 1100 տ, որից համաֆինանսավորմամբ՝ ՀՀ Կառավարության կողմից, 1 կգ-ի արժեքը 70 ՀՀ դրամով մթերվել է 517.5 տ: 582,5 տ խաղողը, առանց համաֆինանսավորման, 215 ՀՀ դրամով մթերելու դեպքում, ֆերմերը մեկ հեկտարից միջինում 3,4 մլն ՀՀ դրամ եկամուտ է ստանում, համաֆինանսավորմամբ՝ ևս 2,29 մլն: Ընդհանուր առմամբ, մեկ հա խաղողի բարձրարժեք տեսակի արտադրությունից ֆերմերը կարող է ապահովել միջինում 5,5-6 մլն ՀՀ դրամի եկամտաբերություն, հետևաբար, այդ արդյունքով բերքի համար 1,5 մլն ՀՀ դրամի ապահովագրություն կնքելն այնքան էլ արդյունավետ և մրցունակությանը միտված գործարք չէ:

Վայոց ձորի բոլոր բնակավայրերի բաշխումը, ըստ ռիսկային/ազդեցության (կարկուտ և հրդեհ) գոտիների, խաղողի գծով միևնույն 4-րդ գոտում է, և համապատասխան ապահովագրավճարի նկատմամբ կիրառվող սակագի-

⁹⁷ St'u Guide, KANAT The Insurance Fund for Natural Risks in Agriculture, source-
<http://www.kanat.co.il/images/KANAT2012.pdf>

⁹⁸ St'u **Павелко Н.**, Международный опыт осуществления государственной политики в сфере страхования сельскохозяйственной продукции: перспективы для Украины, апрель 2013 г.:

ընդ 5,7% է: **Արարատի մարզի** համար սահմանված գոտիները, ըստ բնակավայրերի, տարբեր են⁹⁹: Գոտիականության և ռիսկերի ձևակերպման նույնատիպ պատկեր է ծիրանի գծով. Վայոց ձորի համար (որպես 4-րդ գոտի) սակագինը 6.8% է:

Ապահովագրության ընդունելիս և ռիսկերը հաշվարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև ոռոգման համակարգերի վիճակը, ինչպես նաև հակակարկտային ցանցերի և կայանների առկայությունը: ՀՀ-ում առաջարկվող մոդելում կարգավորիչ գործակիցներ չկան ո՛չ կաթիլային ոռոգման, ո՛չ հակակարկտային անվտանգության միջոցների վրա:

Հետևաբար, ոչ ժամանակակից արտադրություն վարող այգու և նորագույն տեխնոլոգիաներով հագեցած այգու սեփականատերերը վճարում են միևնույն ապահովագրավճարը՝ միևնույն ծածկույթի համար:

Վերոնշյալ խնդիրները լուծելու կամ մեղմելու նպատակով կարելի է արտադրության ծախսերի մոդելի վրա հիմնված ապահովագրական գումարների մեխանիզմը փոխարինել «Շրջանառության վրա հիմնված» մոդելով: Բերքի ապահովագրությունը¹⁰⁰ (Yield Insurance) ծածկույթ է տրամադրում հողատարածքում արտադրված բերքի և՛ գնի, և՛ քանակի տատանումներից: Այդ առումով, սա շրջանառության կայունացման ամենաարդյունավետ ապահովագրության տեսակն է: Ամենատարածվածը ցորենի շրջանառության ապահովագրությունն է: Այս ծրագիրը նախ գնահատում է յուրաքանչյուր հեկտարի համար ցորենի տարողունակությունը՝ հիմնվելով ֆերմերի սեփական արտադրության պատմության վրա: Հետո սահմանվում է ցորենի ֆյուչերսների գինը, և այս 2 գործոնների համակցությամբ սահմանվում է սպասվելիք շրջանառությունը: Շրջանառության չափը որոշելուց հետո սահմանվում է հատուցման շեմը (հիմնականում շրջանառության 80%-ի չափով)¹⁰¹:

Գյուղատնտեսական ապահովագրության համակարգի արդյունավետության բարձրացման համար կարելի է նաև սահմանել լողացող ապահովագրական գումարներ:

Առավել արդյունավետ կարող է լինել ապահովագրական գումարների բաշխումը՝ **ըստ մարզերի** բերքատվության և եկամտաբերության՝ յուրաքանչյուր տարվա գարնանը սահմանելով այդ տարվա ապահովագրական գումարների չափերը՝ հիմնված նախորդ տարվա խաղողի մթերման միջին գնի և 1 հա միջին բերքատվության վրա: Արդյունքում, օրինակ, **Արարատի և Վայոց ձորի** մարզերում խաղողի բերքի ապահովագրական գումարների ուղենշային հաշվարկներից ելնելով, 2022 թվականի համար կարող ենք ունեն-

⁹⁹ <https://aina.am/wp-content/uploads/2021/05.pdf>

¹⁰⁰ St'u FAO Agricultural services bulletin 159, Insurance of crops in developing countries, by R.A.J. Roberts:

¹⁰¹ St'u Gift Livata, Agricultural Insurance Options, December 5, 2018in Microinsurance News – source <http://www.microinsurance.mw/2018/12/05/agricultural-insurance-options/>

նալ **500,000–3,000,000 ՀՀ դրամ** ապահովագրական գումարի սահման: Քանի որ ՀՀ-ում խաղողագործությամբ զբաղվող տնտեսությունների գերակշիռ մասը գտնվում է բարձր բերքատվություն ապահովող Արարատի և Արմավիրի մարզերում, հետևաբար, այս մոտեցմամբ, ի տարբերություն գործող մոդելի, ավելի շատ ապահովագրավճար կհավաքագրվի: Արդյունքում կգոյանա բարձր եկամուտ, հետևաբար՝ բարձր ապահովագրավճար կամ հակառակը: Մասնագետների կողմից առաջարկվում է նաև ծախսերի կամ գյուղատնտեսական վարկի ապահովագրություն (վարկի չմարման ռիսկի ապահովագրություն) իրականացնել բացառապես քնակլիմայական, հիմնականում՝ կարկտահարության կամ ցրտահարության ռիսկերի հետևանքով վարկի չմարման դեպքերում:

Ելնելով հայաստանյան ֆերմերների սոցիալ-տնտեսական ոչ բարվոք վիճակից՝ անհրաժեշտ է հիմնվել գյուղատնտեսության ապահովագրության այնպիսի միջազգային փորձի վրա, որը հաշվի է առնում ապահովագրավճարների բեռի վերաբաշխումն ապահովագրման շահառուների միջև: Պայմանավորված ՀՀ պետական բյուջեի միջոցների ծախսման գերակայություններով (անվտանգության և այլ ռազմավարական ոլորտներ)՝ չպետք է պետությունը դիտարկել որպես ապահովագրավճարների հիմնական դոնոր, այլ, հիմնվելով ապահովագրավճարների այլընտրանքային ֆինանսական աղբյուրների կիրառման միջազգային փորձի վրա, վերջինիս աջակցությանը դիմել միայն գյուղատնտեսական մեծածավալ կորուստների դեպքում: Իրականացված վերլուծությունները և ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս կատարելու ներքոբերյալ դիտարկումները:

- Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի արագ ներդրմանը կարող է նպաստել այդ ծրագրի առավել ակտիվ հանրայնացումն ու դրա վերաբերյալ **տեղեկատվության ապահովումը** բոլոր ուղիներով, այդ թվում՝ մարզային և համայնքային մակարդակով հանրահռչակումը: Թեև ապահովագրության տարածքը ընդլայնվել է ՀՀ բոլոր մարզերով, և բոլոր համայնքները հնարավորություն ունեն ապահովագրելու իրենց այգիներն ու ցանքատարածությունները, այնուամենայնիվ, **Վայոց ձորի և Արարատի** մարզերում հարցումներով պարզվել է, որ հարցվողների միայն 21%-ն է տեղյակ գյուղատնտեսության ոլորտի ապահովագրական համակարգի ներդրման պետական ծրագրի իրականացման մասին:

- Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալությունը հասարակական կազմակերպություն է, որն առայժմ չի համակարգում և ամփոփում ոլորտում ապահովագրության ներդրման, գործընթացի կազմակերպման, կարգավորման և գնահատման բազմաթիվ ցուցանիշները և չի կատարում դրանց հրապարակայնացումը: Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ոչ արդյունավետ ձևավորման և կազմակերպման մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ երկրում լիցեն-

գավորված ու փաստացի գործող 6 ապահովագրական ընկերություններից միայն 3-ն են միացել ԳԱԱԳ-ին և ներգրավվել գյուղատնտեսության ապահովագրության ծրագրում:

- Մարգային մակարդակով կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ արտադրական ծախսերի մեթոդը դրական ազդեցություն ունի ցածր բերքատվությամբ մարզերում և բացասական ազդեցություն՝ բարձր բերքատվությամբ մարզերում:

- ՀՀ-ում գյուղատնտեսության պատշաճ չափագրում չի իրականացվում, հետևաբար պայմանագրի կնքման փուլում բավականին դժվար է ապահովագրվող ցանքատարածությունը և դրա չափերը, ինչպես նաև իրականացվող ծախսերի տեսակները նույնականացնելը:

- Ակնհայտ է գյուղատնտեսական ապահովագրության ապահովագրողների անկախ ինստիտուտի ձևավորման անհրաժեշտությունը, ինչի գործընթացին, մեր կարծիքով, ակտիվորեն պետք է ներգրավվեն նաև տարածքային կառույցները՝ դասընթացների կազմակերպման նախադրյալներ ստեղծելով, տեղեկատվական դաշտը մեծացնելով, պետական ծրագրերի արդյունավետության խնդիրները մեկնաբանելով և հիմնավորելով: Մարգային և համայնքային կառույցները ապահովագրական ընկերություններին կարող են առաջարկներ ներկայացնել այն չափանիշների և տարածքային առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք մշակվում և ճշգրտվում են իրենց կողմից:

- Արտադրական ծախսերը հավաստող փաստաթղթերի ձևաչափերի և, հետևաբար, դրանք որպես տեղեկատվական աղբյուր ներկայացնելու պահանջ չկա: ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների 97%-ը ֆիզիկական անձ բնակչությունից է բաղկացած կամ հասարակ գյուղացիներից, որոնք ծախսերը հավաստող ոչ մի փաստաթուղթ չեն ունենում: Ուստի, մրցունակ գյուղատնտեսություն վարող, լավ մշակված ու անհրաժեշտ տեխնոլոգիաներ ներդրած այգու և առանց որևէ խնամքի այգիների համար վճարվում է միևնույն ապահովագրավճարը, միևնույն ծածկույթի համար: Հաշվի չեն առնվում նաև մարգային ու համայնքային յուրահատկությունները, օրինակ՝ Արարատի մարզում ավելի դժվար է ապահովագրության պայմանագրերը վճարել կիսատ ծածկույթի պարագայում:

- Առավել արդյունավետ կլինի ապահովագրական գումարը բաշխել **ըստ մարզերի** բերքատվության և եկամտաբերության: Մասնավորապես, յուրաքանչյուր տարվա գարնանը սահմանել այդ տարվա ապահովագրական գումարների չափը՝ հիմնված նախորդ տարվա խաղողի մթերման միջին գնի վրա և 1 հա միջին բերքատվության համար: Արդյունքում, օրինակ, Արարատի և Վայոց ձորի մարզերում խաղողի բերքի ապահովագրական գումարների ուղենշային հաշվարկներից ելնելով, 2022 թվականի համար կարող ենք ունենալ 500,000–3,000,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարի սահման:

3.3

Տեխնոլոգիական նորարարությունների ներդրման ազդեցությունը ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերի գյուղատնտեսության մրցունակության ապահովման վրա

Ներկա արագ զարգացող գլոբալ աշխարհում գյուղատնտեսության բոլոր ոլորտներում ինտենսիվորեն ներդրվում են ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ:

Այսօր գյուղատնտեսությունը պահանջում է հատուկ սարքավորումների ավելի լայն տեսականի, որը թույլ կտա մշակել մեծ տարածքներ և աճեցնել մրցունակ բերք: Գործընթացները, որոնք նախկինում պահանջում էին մեծ քանակությամբ աշխատուժ, այժմ իրականացվում են ավտոմատացված սարքերի միջոցով: «Խելացի» գյուղատնտեսությունը զգալիորեն մեծացնում է բերքատվությունը և անասնաբուծության արտադրողականությունը, նվազեցնում ծախսերը և արտադրության ինքնարժեքը: «Խելացի» գյուղատնտեսությունն աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում՝ ըստ գլոբալ տեխնոլոգիաների հավանական դրական ազդեցության համաշխարհային վարկանիշի: Այսպիսով, ըստ տարբեր գնահատականների, 2022 թվականի համար «խելացի» սննդի համաշխարհային շուկայի կանխատեսվող արժեքը կկազմի շուրջ 525,25 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ «խելացի» գյուղատնտեսական տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի գնահատված արժեքը՝ 23,14 մլրդ ԱՄՆ դոլար¹⁰²:

Ոլորտի դինամիկ զարգացումը լուրջ մարտահրավեր է Վայոց ձորի և Արարատի մարզերի գյուղատնտեսության համար: Տնտեսավարման նոր պայմաններում, երբ արմատապես փոխվել է հողօգտագործման համակարգը, մշակովի հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1.2 մլն հողակտորների, և առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը: Գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը բնականոն ձևով հանգեցնում է տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի կրճատման, մեկ տնտեսության հաշվով հողատարածությունների մեծացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին զբաղվածների թվի նվազեցման: Ուստի, փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսավարմանը պետք է նպաստեն ճյուղը սպասար-

¹⁰² Տե՛ս **Анищенко А.Н.**, «Умное» сельское хозяйство как перспективный вектор роста аграрного сектора экономики России, Продовольственная политика и безопасность, том 6, № 2, Апрель-июнь 2019, էջ 101:

կող ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումն ու մրցունակության բարձրացումը:

Վերջին տարիներին ՀՀ Կառավարությունը արդյունավետ միջոցներ է ձեռնարկել պետական աջակցության ծրագրերի ներդրմամբ գյուղատնտեսության ոլորտը զարգացնելու, ժամանակակից նորարարական տեխնոլոգիաները գյուղատնտեսությունն ներմուծելու ուղղությամբ: Դրանցից անմասն չեն Վայոց ձորի և Արարատի մարզերը: Այս ուղղությամբ հետագա առաջընթացը հնարավորություն կընձեռի բարձրացնելու ոլորտի մրցունակությունը և առկա մարտահրավերը կվերածի նոր հնարավորությունների: Բայց դրա համար նախևառաջ անհրաժեշտ է յուրացնել և ներդնել գյուղատնտեսական տեխնոլոգիաների և նորարարությունների արդեն գոյություն ունեցող տեսականին, որն այսօր կիրառվում է աշխարհի առաջադեմ երկրներում:

Այժմ անդրադառնանք բարձրորակ գյուղմթերքի արտադրությանը, բարձր եկամտաբերությանը, մրցունակության բարձրացմանը և տեխնիկական մշտադիտարկմանը նպաստող ժամանակակից տեխնոլոգիաների լայնորեն կիրառման անհրաժեշտությանը:

Կաթիլային ոռոգում և ջրի խնայողության համակարգեր: Հայաստանում բուսաբուծության ճյուղի համախառն արտադրանքի ավելի քան 80%-ը ստացվում է ոռոգվող հողատարածություններից, հետևաբար ոռոգումը և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը երկրի տնտեսության կարևոր գերակայություններից են: Հայաստանի տարածքում մակերևութային ջրերի վերականգնվող պաշարները տարեկան կազմում են 7.2 մլրդ խմ: Այդ ջրերից օգտագործվում է շուրջ 2.3 մլրդ խմ, որից 2 մլրդ խմ՝ ոռոգման և արտադրության մյուս ոլորտների մատակարարման, իսկ 430 մլն խմ՝ խմելու և կենցաղային նպատակների համար¹⁰³:

Հայաստանի՝ որպես բարձր եվակետային ջրային սթրեսով¹⁰⁴ (ջրի պահանջարկը բույսերի համար գերազանցում է դրա հասանելի քանակը) և ջրի ցածր մատչելիություն¹⁰⁵ ունեցող երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ կարևոր դեր է խաղում ջրային ռեսուրսների պատշաճ և արդյունավետ կառավարումը, որը նաև որպես առաջնահերթություն է դասակարգվել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում (2020 թ.): Տարածաշրջանի մյուս երկրների համեմատ Հայաստանը խիստ խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ. դիտվում է կլիմայի փոփոխության բարձր ազդեցություն, վերջինիս նկատմամբ բարձր զգայունություն և սահմանափակ հարմարվողականություն: Ապագա կլիմայական կանխատեսումներով՝ սպասվում է ջերմաստիճանի շարունակական աճ և

¹⁰³ Տե՛ս Ս. Ավետիսյան, Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., 2010, էջ 30:

¹⁰⁴Ըստ Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի գնահատման՝ ՄԱԿ-ի 164 անդամ երկրների շարքում ջրային սթրեսի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 34-րդ տեղը:

¹⁰⁵ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տվյալների համաձայն՝ Հայաստանը ջրային ռեսուրսների շահագործման 45% համաթվով (ՋՌՀՀ) ենթակա է ջրային սթրեսի:

տեղումների նվազում: Կլիմայի փոփոխության հետևանքները հատկապես ծանր կլինեն Սևանա լճի և Արարատյան դաշտի համար, որը երկրի հիմնական գյուղատնտեսական տարածաշրջանն է: Հաշվի առնելով ջրային ռեսուրսների ընդհանուր մատչելիության նվազման կանխատեսումները՝ ավելի ու ավելի դժվար կլինի ոռոգման ջրի պահանջարկը բավարարելը, որը երկրի ամենամեծ ջրասպառման ուղղությունն է: Այդպիսով, սակավ ջրային ռեսուրսների պատշաճ և արդյունավետ կառավարումը, մասնավորապես՝ ոռոգման ոլորտում, դառնում է առաջնահերթություն¹⁰⁶: Արարատյան դաշտում ոռոգման գերակշռող մեթոդը ակոսային ոռոգումն է: Կաթիլային ոռոգումը կիրառելի է տարբեր մշակաբույսերի համար, բայց դեռևս լայն տարածում չունի: Այնուամենայնիվ, այն կարող է ավելի մեծ տարածում գտնել հետագա տարիներին, և դա հաշվի առնելով՝ տարբեր հետազոտությունների ընթացքում մշակվել են ընտրված մշակաբույսերի ոռոգման նորմեր և ժամանակացույցներ: Կաթիլային և անձրևացման եղանակով ոռոգման դեպքում, համեմատած ակոսային ոռոգման հետ, անհատական նորմերը (չափաբաժինները) կարող են ավելի փոքր լինել, ինչը պայմանավորված է ջրումների ավելի հեշտ ձևով և անհամեմատ ցածր գնով: Ոռոգման նորմերի նվազեցման արդյունքում մեծանում է ջրումների հաճախականությունը և բերքատվությունը:

Գյուղատնտեսական հողերի մշակման ցածր արդյունավետության և չմշակման հիմնական պատճառներից են նաև.

- հողի սեփականատիրոջ բացակայությունը երկրից կամ զբաղվածությունն այլ ոլորտում,
- ոռոգման ջրի պակասը և սակագինը,
- հողերի մասնատվածությունը և փոքր չափերը,
- հանդամիջյան ճանապարհների բացակայությունը կամ ոչ բարվոք վիճակը (այդ մասին նշել են նաև փորձագետները):

Հայաստանում գործում է շուրջ 318 հազ. գյուղացիական տնտեսություն, որից 42%-ի կամ շուրջ 134 հազարի կողմից մշակվող հողատարածքի չափը փոքր է 0,5 հեկտարից, ինչպես նաև գործող իրավական ակտով ձևակերպված չեն գյուղացիական տնտեսության և գյուղացիական տնտեսավարողի սահմանումն ու կարգավիճակը: Դրանց հստակեցումը հնարավորություն կընձեռի ստեղծելու և վարելու գրանցամատյան և ներդնելու վերջիններիս կողմից թողարկվող արտադրանքի հաշվառման առավել արդյունավետ համակարգ: Ներկայումս, չունենալով գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ լիարժեք տեղեկություն, խնդիրներ են առաջանում ինչպես օբյեկտիվ պատճառներով չօգտագործվող կամ ոչ նպատակային օգտա-

¹⁰⁶ Հայաստանի ոռոգման նորմերի արդիականացում/վերանայում հիմնված ԳԳԿ «Ոռոգում և դրենաժ» թիվ 56 փաստաթղթի վրա: Վերջնական հաշվետվություն՝ 5-updating-irrigation-norms-in-armenia-stephan-galka-arm.pdf

գործվող վարելահողերի՝ գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառումը խթանող գործուն կառուցակարգեր մշակելու և ներդնելու, այնպես էլ ներդրողներին անհրաժեշտ հողատարածքների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու գործում¹⁰⁷:

ՀՀ, Արարատի և Վայոց ձորի մարզերի ջրօգտագործումը, ըստ ուղղությունների, ներկայացված է աղյուսակ 26-ում:

Աղյուսակ 26

ՀՀ, Արարատի և Վայոց ձորի մարզերի ջրօգտագործումը՝ ըստ ուղղությունների, 2016-2019 թթ. (մլն մ³)¹⁰⁸

	Ընդամենը	այդ թվում՝		
		խմելու	արտադրություն, կենցաղ և շինարարություն	գյուղատնտեսություն, ձկնաբուծություն և անասնաբուծություն
<i>2016 թ.</i>				
Հայաստանի Հանրապետություն	2469.9	107.7	145.4	2216.8 (89.7%)
Արարատի մարզ	696.6	7.5	3.7	685.4 (98.3%)
Վայոց ձորի մարզ	16.3	0.9	0.5	14.9 (91.4%)
<i>2017 թ.</i>				
Հայաստանի Հանրապետություն	2040.0	107.6	225.2	1707.2 (83.7%)
Արարատի մարզ	547.4	4.5	21.4	521.5 (95.2%)
Վայոց ձորի մարզ	16.0	2.6	0.7	12.7 (79.4%)
<i>2018 թ.</i>				
Հայաստանի Հանրապետություն	1926.5	185.1	141.4	1600.0 (83.1%)
Արարատի մարզ	520.4	3.5	4.9	512.0 (98.3%)
Վայոց ձորի մարզ	16.6	2.8	0.9	12.9 (77.7%)
<i>2019 թ.</i>				
Հայաստանի Հանրապետություն	2123.7	127.7	141.7	1854.3 (87.3%)
Արարատի մարզ	672.4	6.2	3.7	662.5 (98.5%)
Վայոց ձորի մարզ	14.2	2.2	0.6	11.4 (80.3%)


Ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսության, ձկնաբուծության և անտառտնտեսության նպատակով ջրօգտագործումը 2016-2019 թթ. ՀՀ-ում միջինը կազմել է ընդամենը ջրօգտագործման 85.9%-ը, Արարատի մարզում՝ 97.6%-ը, իսկ ահա Վայոց ձորի մարզում՝ 82.0%-ը: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական նպատակներով ջրօգտագործումը 2016-2018 թթ. նվազել է: 2019 թ. ՀՀ-ում և Արարատի մարզում,

¹⁰⁷ <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf> Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, 2020-2030 թթ.

¹⁰⁸ https://www.armstat.am/file/article/marzer_2020_20.pdf


նախորդ տարվա համեմատ, ջրօգտագործումն աճել է համապատասխանաբար 10,2 և 29.4%-ով, իսկ Վայոց ձորի մարզում կրկին նվազել է՝ 14.5%-ով: 2019 թ. Արարատի և Վայոց ձորի մասնաբաժինները ՀՀ ընդհանուր ջրօգտագործման մեջ համապատասխանաբար կազմել են 31,7 և 0.7%, իսկ գյուղատնտեսական նպատակներով ջրօգտագործումը՝ ՀՀ համապատասխան ցուցանիշի 35,7 և 0.6%-ը:

«Խնդրում ենք 1-3 բալանոց սանդղակով գնահատել ոռոգման համակարգը և դրա արդյունավետությունը Ձեր համայնքի համար, որտեղ 3-ը նշանակում է գերազանց և արդյունավետ, իսկ 1-ը՝ անբավարար և ոչ արդյունավետ» հարցի վերաբերյալ հարցվողների արձագանքը հետևյալն է.




Գծապարկեր 27 | Ոռոգման համակարգի արդյունավետությունը

Վայոց ձորի և Արարատի մարզերում ոռոգման համակարգերի ոչ բարվոք վիճակի և ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման մասին են վկայում նաև մեր կողմից իրականացված հարցումների արդյունքները, որոնք ներկայացված են ստորև բերված գծապատկերներում:



Գծապարկեր 28 | Ոռոգման համակարգերի գնահատականը

Ինչպես երևում է գծապատկերից, Վայոց ձորի և Արարատի մարզերում հարցվողների մեծ մասը՝ շուրջ 56%-ը, մարզերում առկա ոռոգման համակարգը գնահատել է *անբավարար* և *վայր*: Դա էլ իր հերթին էական ազդեցություն է ունենում գյուղատնտեսության վրա ու նվազեցնում մրցունակության աստիճանը: Ավելի վատ է ջրային պաշարների կառավարման իրավիճակը: Հարցման մասնակիցներից միայն 23%-ն է *լավ* գնահատական տվել ջրային պաշարների պահեստավորման և բաց թողնման համակարգերի աշխատանքներին, իսկ շուրջ 74%-ն *անբավարար* և *վայր* են գնահատել ջրային ռեսուրսների կառավարումը:



Գծապատկեր 29

Ջրային պաշարների պահեստավորման և բաց թողնման համակարգեր

ՀՀ-ում 2020 թ. իրականացվել են պետական աջակցության մի շարք ծրագրեր՝ ուղղված ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և ջրախնայող տեխնոլոգիաների ներդրմանը: Մասնավորապես, «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի» նպատակը գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումն է, որի շրջանակում կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգերի ներդրման համար պետական աջակցություն է ցուցաբերվում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակութային զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման կամ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով՝ ըստ տնտեսավարողի հայեցողության: Այս ծրագրի շրջանակներում Արարատի մարզում 2020 թ. ներդրվել են արդիական ոռոգման համակարգեր՝ 47.2 հա տարածքով:

Աջակցության ծրագրի շրջանակներում հաշվարկվել են կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման ծախսերը և հնարավոր օգուտները տարբեր մշակաբույսերի համար: Հիմնվելով կաթիլային ոռոգման ներդրման ծախսերի հաշվարկների վրա, որոնք ներկայացված են ստորև, մեր կողմից իրա-

կանացվել են հաշվարկներ, թե Արարատի մարզում կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման դեպքում որքանով կավելանա խաղողի մշակման արդյունավետությունը, որքանով կբարձրանան եկամտաբերությունը և մրցունակության աստիճանը:

Կաթիլային համակարգի ներդրման ծախսերը, կախված մշակաբույսերից և տեղանքից, կարող են տատանվել: Ավելի ցածր գներով ձեռք բերված տեղական նյութերով ներդրման դեպքում 1 հեկտարի հաշվարկով կկազմի շուրջ 750 000 ՀՀ դրամ, թանկ նյութերով և սարքավորումներով՝ կտատանվի 1.8-2.7 մլն ՀՀ դրամի սահմաններում, իսկ օպտիմալ տարբերակով կկազմի 1-1.3 մլն ՀՀ դրամ:

Գները ներառում են պոմպի, պարարտացման համակարգերը, ցանցային բաշխվածությունը և կաթոցիկները: Միջին որակի կաթիլային ոռոգման համակարգի պոմպերը ծառայում են շուրջ 5-6 տարի, համապատասխան խնամքի դեպքում կարող են ծառայել 7-8 տարի և մինչև 10 տարի՝ փականների, բարձր ճնշման մոդիլների դեպքում:

Արարատի մարզում խաղողի տնկարկների կաթիլային ոռոգման տնտեսական արդյունավետությունը գնահատելու նպատակով նախ կատարենք 1 հեկտարի հաշվով ծախսերի համեմատական վերլուծություն կաթիլային և մակերեսային (ակոսային) ոռոգման եղանակների դեպքում:

Տնտեսական արդյունավետությունը խաղողի վազերի կաթիլային և մակերեսային եղանակներով մշակման դեպքում Աղյուսակ 27

N	Տվյալներ	Ոռոգման եղանակը	
		կաթիլային	մակերեսային
1	Տնկման սխեմա (մ)	3.0x1.8	3.0x1.8
2	Ոռոգման համակարգի արժեքը ա) 5 տարվա օգտագործում խողովակների, կաթոցիկների համար և մինչև 10 տարվա օգտ. պոմպերի, ֆիլտրերի համար բ) վերանորոգում և պահպանում	1 300 000 40 000	- -
3	Մշակության ծախսեր (դր./հա)	1 016 000	1 160 000
4	Սեզոնային ծախսեր (3+2բ) , դր./հա	1056 000	1 160 000*
5	Ջրի օգտագործման չափ (լ/վազ/տարի)	150	300
6	Ակնկալվող բերք (տ/հա)	18	15
7	Վաճառքի գին (դր./տ)	149 000	149 000
8	Եկամուտ (6x7)	2 682 000	2 235 000
9	Զուտ եկամուտ (8-4)	1626 000	1 075 000

Աղյուսակից կարելի է եզրակացնել, որ խաղողի վազերի կաթիլային համակարգով մշակության դեպքում տարեկան գոյանում է 464 000 ՀՀ դրամ հավելյալ զուտ եկամուտ՝ 1 հեկտարի հաշվով:

Խաղողի վազերի մշակության կազմակերպման հավելյալ հնարավորություն

N	Տվյալներ	Ոռոգման եղանակը	
		կաթիլային	մակերևային
10	Ջրի խնայողության շտրիիվ լրացուցիչ տարածքի ոռոգման հնարավորություն (հա)	0.4	-
11	Լրացուցիչ մշակության ծախսեր (4 x 10), դր./հա	422 400	-
12	Լրացուցիչ եկամուտ (8 x 10), դր./հա	1 072 800	-
13	Լրացուցիչ շահույթ (12-11), դր./հա	650 400	0
14	Ընդհանուր արտադրական ծախսեր (4+11), դր./հա	1 478 400	1 160 000
15	Համախառն եկամուտ (8+12), դր./հա	3 754 800	2 235 000
16	Եկամտաբերություն (15/14)	2.54	1.93
17	Զուտ հավելյալ եկամուտ կաթիլային համակարգի ներդրման դեպքում, ՀՀ դրամ, (13+9) կաթ.-9 ավանդական	1 201 400	-

Կատարված հաշվարկներից երևում է, որ խաղողի վազերի կաթիլային ոռոգման արդյունավետությունը բավականին բարձր է ավանդական ոռոգման համեմատ, ինչի շտրիիվ 1 հա-ի հաշվով զուտ հավելյալ եկամուտը կազմում է 1 201 400 ՀՀ դրամ:

Այսպիսով, Արարատի մարզում խաղողի վազերի մշակությունը կաթիլային ոռոգման եղանակով բավականին արդյունավետ է և թույլ է տալիս ստանալ 1 201 400 ՀՀ դրամի հավելյալ զուտ եկամուտ՝ 1 հա-ի հաշվով, հետևաբար ոռոգման արդիական համակարգերի աստիճանական ներդրման արդյունքում կբարձրանա ոչ միայն խաղողի, այլև մյուս մշակաբույսերի մշակման արդյունավետությունը:

«Խելացի» ջերմոցներ և ինտենսիվ այգիներ: «Խելացի» ջերմոցները թույլ են տալիս ավելի արդյունավետ օգտագործել պարարտանյութերը, քիմիական նյութերը, ջուրը, ինչպես նաև օպտիմալացնել մշակաբույսերի խնամքի համար պահանջվող անձնակազմի թվաքանակը և նվազեցնել մարդկային գործոնի պատճառով կորուստները: Փորձագետների կարծիքով՝ թեև «խելացի» ջերմոցների համաշխարհային շուկան չի գերազանցում ջերմոցային կառույցների ընդհանուր թվի 3%-ը, այնուհանդերձ, դրանց թիվը տարեկան աճում է 9%-ով¹⁰⁹: «Խելացի» ջերմոցները թույլ են տալիս կառավարել ոռոգման ողջ գործընթացը և վերահսկել միկրոկլիման: Բացի դրանից, հնարավոր է վերահսկել բոլոր համակարգերի աշխատանքի որակը և բերքատվությունը, ինչը բերքատվության աճը կարող է բարձրացնել 20-40%-ով, ընդ որում՝ արտադրանքի որակի բարձրացմամբ և ծախսերի կրճատմամբ:

109 Տե՛ս **Корабашев О.З.**, Инновации и современные технологии в сельском хозяйстве, Вестник науки и образования, № 18(96), часть 2, 2020, էջ 25:

2020 թվականից ՀՀ-ում իրականացվող Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիրը նպատակ է հետապնդում խթանելու արդիական չափորոշիչներով փոքր և միջին ջերմատնային կառուցումը, ինչը հնարավորություն կտա բարձրացնելու ջերմատնային տնտեսությունների արտադրանքի մրցունակության մակարդակը, կնպաստի գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արդիական չափորոշիչներով շուրջ 35.0 հա ընդհանուր մակերեսով ջերմատնային տնտեսությունների կառուցում և ջերմատնային արտադրանքի ծավալների ավելացում՝ տարեկան շուրջ 3600 տոննայով: Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման համար խթանվում է հողային հարստացված գանգվածով կամ հիդրոպոնիկ եղանակներով, թաղանթապատ 300-600 քառ. մ արտադրական տարածքով թունելային և 800-3000 քառ.մ արտադրական տարածքով միաթռիչք (միագագաթ) կամ բազմաթռիչք (բազմագագաթ) ջերմատների կառուցումը:

Ժամանակակից ջերմոցային տնտեսություններ կառուցելու համար ներդրվել է ավելի քան 1.170 մլրդ ՀՀ դրամ: Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2020 թ. Արարատի մարզում ստացվել է 28 հայտ, իսկ Վայոց ձորի մարզում՝ ընդամենը 1¹⁰⁰:

«Խելացի» անասնաֆերմաներ: «Խելացի» անասնաֆերմաները կարող են բարելավել ընտանի կենդանիների արտադրողականությունը և արտադրանքի որակը, ինչպես նաև նվազեցնել ծախսերը: Գիտնականների կարծիքով՝ ավանդական մեթոդների վրա հիմնված անասնաբուծությունն այնքան էլ արդյունավետ չէ: Կենդանիների կերակրման, կթման և առողջության մշտադիտարկման ավտոմատացված համակարգերի կիրառմամբ, մասնագետների կարծիքով, կարելի է կաթնատվությունը բարձրացնել 30-40%-ով և ավելի արդյունավետ օգտագործել առկա կերային բազան: Բացի դրանից, կան անասնաբուծական ծառայությունների արդյունավետությունը բարելավելու տեխնոլոգիական լուծումներ: Օրինակ, չիպի հիման վրա ստեղծվում է կենդանու «էլեկտրոնային անձնագիր», որն ապահովում է մշտական և հուսալի անասնաբուծական հսկողություն:

Կենդանիների պահվածքի պայմանների բարելավմամբ մթերատվության ցուցանիշների բարձրացման նպատակով ՀՀ-ում 2019 թ. հաստատվել և կյանքի է կոչվել փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիրը:

¹⁰⁰ <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf> Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, 2020-2030 թթ., էջ 19:

2020 թ. «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում Արարատի մարզում շահագործման է հանձնվել 2 անասնաշենք, իսկ Վայոց ձորի մարզում ոչ մի ծրագիր կյանքի չի կոչվել¹¹¹: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության 76.8%-ը բաժին է ընկնում անասնաբուծությանը և հատկապես գերակշիռ մասը՝ տավարաբուծությանը, իսկ գյուղատնտեսական համախառն արտադրանքի 60-65%-ը ստացվում է անասնապահությունից, ապա ծրագրի միջոցով հնարավոր կլինի բարձրացնել Վայոց ձորի մարզի անասնապահության մրցունակության աստիճանը:

Հաշվի առնելով ոլորտի կարևորությունը Վայոցի ձորի մարզի համար՝ անասնապահության ոլորտի օրինակով կատարենք մարզի պարենային անվտանգության գործոնային վերլուծություն համաթվային մեթոդով:

Վայոց ձորի մարզի բնակչության կողմից տավարի մսի միջին տարեկան սպառման մակարդակի բազմարկչային մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$Y = \frac{\text{Գյուղատնտեսական նշանակության հողեր (a)} \times \frac{\text{Արտադրանք}}{\text{Գյուղատնտեսական նշանակության հողեր}} (b) \times \frac{\text{Մսի սպառություն}}{\text{Արտադրանք}} (c) \times \frac{\text{Մսի սպառություն}}{\text{Մսի սպառություն}} (d) \times \frac{\text{Մսի սպառություն (անձնական սպառման ֆունկցիոն)}}{\text{Մսի սպառություն}} (e)$$

որտեղ՝

- Y-ը մարզի բնակչության միջին տարեկան շնչային սպառման մակարդակն է,
- a-ն բնութագրում է մեկ բնակչի հաշվով գյուղատնտեսական հողերի չափերը, արտացոլում է գյուղատնտեսական արտադրության էքստենսիվ պարամետրը,
- b-ն արտավայրերի տեսակարար կշիռն է ընդհանուր գյուղատնտեսական հողերում,
- c-ն անասնաբուծության ինտենսիվության (անասունների խտության) ցուցանիշն է,
- d-ն մսատվության ցուցանիշն է, որը բնութագրում է անասնաբուծության ինտենսիվությունը,
- e-ն արտացոլում է գյուղատնտեսական արտադրանքի պահանջարկը, այդ թվում՝ գյուղատնտեսությունում մսի և մսատվության ապրանքայնության գործակիցը:

¹¹¹ <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf> Ռ-ագմավարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, 2020-2030 թթ., էջ 23:

Գործոնային վերլուծության ժամանակ յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը (հաշվի առնելով յուրաքանչյուր գործոնի քանակական և որակական հատկությունը) բացարձակ մեծություններով որոշվել է ստորև ներկայացված բանաձևերի օգնությամբ, որոնց հաշվարկային տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում¹¹²:

$$\begin{aligned} \pm \Delta_{y(a)} &= (a_1 - a_0) b_0 c_0 d_0 e_0 \\ \pm \Delta_{y(b)} &= a_1 (b_1 - b_0) c_0 d_0 e_0 \\ \pm \Delta_{y(c)} &= a_1 b_1 (c_1 - c_0) d_0 e_0 \\ \pm \Delta_{y(d)} &= a_1 b_1 c_1 (d_1 - d_0) e_0 \\ \pm \Delta_{y(e)} &= a_1 b_1 c_1 d_1 (e_1 - e_0): \end{aligned}$$

Տավարի մսի միջին շնչային տարեկան սպառման մակարդակի վրա գործոնների ազդեցության բացարձակ չափերը 2010-2019 թթ., Վայոց ձորի մարզում

Աղյուսակ 29

Տարիներ	Տավարի մսի միջին շնչային տարեկան սպառման բացարձակ փոփոխությունը	Այդ թվում՝ ըստ գործոնների				
		Ընդամենը	ա	բ	գ	դ
2010-2011	1.6	0.037397898	0.018756641	0.027151	-0.02945	0.092987902
2011-2012	0.4	-0.014368852	0.013260632	0.12176	-0.1362	-0.048533464
2012-2013	1.1	0.000942675	0.001155467	0.085989	0.052595	-0.071661552
2013-2014	1.2	0.008370921	0.000618273	0.030449	0.087962	-0.016291375
2014-2015	1.4	0.013478398	0.002723492	0.045735	0.055126	-0.065739562
2015-2016	-1.7	0.018400521	0	-0.10515	0.200465	-0.014211597
2016-2017	-1.5	0.016394257	0.000762366	-0.16061	0.217913	0.026775674
2017-2018	-1.1	0.020166211	0	-0.0369	-0.00688	0.033634728
2018-2019	-0.8	0.01819092	-0.02040553	0.000597	0.003146	-0.019031008
Ընդամենը	0.51	0.118972949	0.016871338	0.009033	0.444672	-0.082070254

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում (2010-2019 թթ.) Վայոց ձորի մարզում տավարի մսի միջին շնչային տարեկան մակարդակը, ըստ առանձին գործոնների, կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

ա - բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողերի ավելացումը պայմանավորել է տավարի մսի տարեկան շնչային սպառման ավելացում 0.12 կգ-ով,

բ - գյուղատնտեսական հողերի մեջ արոտավայրերի մասնաբաժնի չնչին ավելացումը բերել է տավարի մսի տարեկան շնչային սպառման 0.017 կգ ավելացման,

գ - 100 հա հողատարածությանն ընկնող անասունների գլխաքանակի ավելացումը, այլ հավասար պայմաններում, ընդհանուր առմամբ հանգեցրել է տավարի մսի տարեկան շնչային սպառման ավելացմանը 0,009 կգ-ով,

¹¹² Ցուցանիշների 2010-2019 թթ. ելակետային տվյալները ներկայացված են հավելվածում:

ձ - նշված ժամանակաշրջանում մաստվության ցուցանիշի նվազման միտման դրսևորումը բերել է տավարի մսի տարեկան շնչային սպառման 0,44 կգ նվազման,

բ – չնայած նշված ժամանակահատվածում մսի արտադրության նկատմամբ անձնական սպառման բաժնի ոչ կայուն միտման դրսևորմանը՝ այդուհանդերձ, այն բերել է տավարի մսի տարեկան շնչային սպառման 0.08 կգ նվազման:

Հետևաբար, 2010-2019 թթ. ընկած ժամանակահատվածում տավարի մսի տարեկան շնչային սպառման ընդհանուր բացարձակ հավելածը կկազմի՝

$$0.119 + 0.017 + 0.009 + 0.444 + (-0.082) = 0.507 \text{ կգ:}$$

Գյուղատնտեսության և մասնավորապես անասնապահության էքստենսիվ աճի դրսևորումներից է այն իրողությունը, որ անասնապահական մթերքի արտադրության ծավալների աճն ուղղակի կոռելացվում է գլխաքանակի փոփոխության հետ: Մարզի պարենային անվտանգության ապահովման համատեքստում ագրոպարենային համակարգի հիմնական նպատակը առկա բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման, ագրարային բարեփոխումների խորացման, տնտեսավարման ձևերի կատարելագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և գյուղատնտեսության ոլորտում ենթակառուցվածքների գործունեության բարելավման արդյունքում մարզի բնակչության կայուն պարենապահովման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում:

Դրոններ, ռոբոտներ և գյուղատնտեսական մեքենասարքավորումներ: Գյուղատնտեսական ձեռնարկություններում մարդկային աշխատուժի օգտագործումն աստիճանաբար դառնում է ոչ շահութաբեր, և այս ոլորտում արդեն լայնորեն կիրառվում են այնպիսի ռոբոտային մեքենաներ և անօդաչու թռչող սարքեր, ինչպիսիք են կվադրոկոպտերները, կթման համակարգերը, ագրոբոտները, գյուղատնտեսական ռոբոտները, ինքնավար տրակտորները և այլն:

Գյուղատնտեսության ոլորտում կվադրոկոպտերների կիրառման առավել ակնհայտ սցենարը դաշտային մշտադիտարկումն է: Խոսքը աշխատակիցների և աշխատանքային սարքավորումների գտնվելու վայրին հետևելու, վնասակար կենդանիների ներթափանցումից պաշտպանվելու, արոտավայրերի պարբերաբար թարմացվող ճշգրիտ քարտեզների ստեղծման և որոշակի տարածքում բերքի ծավալը կանխատեսելու մասին է:


Բնականաբար, ինչպես ցանկացած տեխնոլոգիա, անօդաչու սարքերը նույնպես զերծ չեն թերություններից. առաջին հերթին բարձր գինն է, եղանակային բարդ պայմանների նկատմամբ խոցելիությունը և պտուղներ հավաքելու և մշակելու անկարողությունը:

ՀՀ-ում լիզինգով ձեռք բերվող նոր գյուղատնտեսական տեխնիկայի համար պետության կողմից գյուղատնտեսական կոոպերատիվներին կարող է տրամադրվել 10% համաֆինանսավորում, իսկ այլ տնտեսավարողներին՝ 10% կանխավճարի համաֆինանսավորում, բայց ոչ ավելի, քան 10 մլն ՀՀ դրամը:

Լիզինգի պետական աջակցության ծրագրով 2020 թ. հաստատվել է 186 հայտ՝ 6,3 մլրդ ՀՀ դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 217,9 մլն ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 377 միավոր սարքավորում:

«ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» և «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրերով Արարատի մարզ ներկրվել է 72 միավոր գյուղտեխնիկա և սարքավորումներ՝ շուրջ 500 մլն ՀՀ դրամի: Իսկ ահա Վայոց ձորի մարզ, 2020 թ. ծրագրի շրջանակներում, ներկրվել է ընդամենը 5 միավոր տեխնիկա¹³:


Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության հիմնախնդրի ուսումնասիրության նպատակով կատարվել է հետևյալ հարցադրումը՝ «Գյուղտեխնիկայի օգտագործման ի՞նչ ձևեր կարելի է ներդնել Ձեր համայնքում, որո՞նք են ներդրման խոչընդոտները»: Հարցի վերաբերյալ փորձագիտական խմբերի պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ՝



Գծապարկեր 30 | Գյուղտեխնիկայի օգտագործման հնարավորությունները

Հարցվողները երբեմն մանրամասնել են կոնկրետ տեխնիկական միջոցի անհրաժեշտությունը, օրինակ՝ նյութերի վերամշակման սարքեր, հատիկահավաք մեքենաներ և այլն: Առաջարկներ են եղել ՀՈԱԿ-ներ և այլ տնտեսական միավորներ ստեղծելու վերաբերյալ: Հետաքրքրական է հետևյալ պատասխանը՝ «Գյուղտեխնիկայի ծախսերը շատ են, իսկ եկամուտները՝ քիչ»:

¹³ Տե՛ս Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, Տարեկան հաշվետվություն–2020, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Եր., 2021, էջ 10:



Գծապարկեր 31 | Գյուղտեխնիկայի ներդրման խոչընդոտներ

Այս հարցումների վերլուծությունը հնարավորություն է տալիս արձանագրելու, որ գյուղատնտեսության ոլորտի տեխնիկատնտեսական ցուցանիշների և կենտրոնացված նորմատիվային տվյալների բազայի ձևավորումն անհրաժեշտություն է: Դրա առկայությունը կայանանավորի գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականություն մշակող մարմինների գործունեության և որոշումների ընդունման գործընթացում օպերատիվ, համակարգված և արժանահավատ տեղեկատվության ու տվյալների կիրառումը: Հետագա հարցումներում նույնպես նկատվում է տեղեկատվության վերաբերյալ հասցեականության ապահովման հիմնախնդրի ձևակերպումը փորձագետների կողմից, ինչը կարևոր է դարձնում տեղեկատվական բազայի ձևավորման առկայությունը: Այն հնարավորություն կտա առավել ճշգրիտ, օպերատիվ և հասցեական դարձնելու պետական և տեղական համապատասխան մարմինների, ինչպես նաև հետազոտական աշխատանքների կազմակերպումը: Նաև օգտակար կլինի գյուղատնտեսության ոլորտի մյուս մասնակիցներին՝ իրենց գործունեության պլանավորման ընթացքում առավել վստահելի տեղեկություն ստանալու տեսանկյունից:

GIS և GPS համակարգեր: Նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաներն ակտիվորեն ներդրվում են մարդկային գործունեության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ գյուղատնտեսության մեջ: Չնայած բավականին արխայիկ կարծրատիպերին՝ գյուղատնտեսությունն այսօր գրեթե առաջատար դիրք է զբաղեցնում առաջադեմ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ՝ վերածվելով տվյալների ինտենսիվ հոսքով ոլորտի: Տեղեկատվությունը հասանելի է դաշտում, այգիներում, ֆերմայում տեղակայված տարբեր սարքերից, սենսորներից, գյուղատնտեսական մեքենաներից, եղանակային կայաններից, դրոններից, արբանյակներից, արտաքին համակարգերից, գործընկեր հարթակներից, մատակարարներից: Արտադրական

շղթայի տարբեր մասնակիցների ընդհանուր տվյալները՝ հավաքված մեկ տեղում, թույլ են տալիս ստանալ նոր որակի տեղեկություն, գտնել օրինաչափություններ, ներգրավված բոլոր մասնակիցների համար ստեղծել հավելյալ արժեք, կիրառել ժամանակակից գիտական մշակման մեթոդներ (data science՝ տվյալագիտություն) և դրանց հիման վրա ընդունել ճիշտ որոշումներ, որոնք նվազագույնի են հասցնում ռիսկերը, բարելավում են արտադրողների բիզնես գործունեությունը և հաճախորդների փորձը: Բջջային կամ առցանց հավելվածները հասանելի են դառնում ֆերմերներին, գյուղատնտեսներին, խորհրդատուներին, որոնք իրենց ոլորտի վերաբերյալ տվյալները (կոորդինատներ, տարածք, բերքի տեսակ, անցյալ բերքատվություն) վերբեռնելիս ներմուծում են ճշգրիտ առաջարկություններ և գործողությունների հաջորդականություն՝ հաշվի առնելով բազմաթիվ պատմական և ընթացիկ գործոնների վերլուծությունը, ինչպես իրենց հողատարածքում, այնպես էլ արտաքին միջավայրում, համատեղելով սարքավորումների, սենսորների, անօդաչու թռչող սարքերի, արբանյակների և այլ արտաքին հավելվածների տվյալները:

Այժմ համակարգչային ծրագրերն օգնում են.


- որոշել սերմերի տնկման, պարարտացման, խոնավացման կամ բերքահավաքի լավագույն ժամանակը, հաշվարկել բեռնման և գնորդին բեռների առաքման ժամանակը,
- վերահսկել պահեստավորման և փոխադրման տարածքի ջերմաստիճանը՝ փչացումից խուսափելու և թարմ արտադրանք մատակարարելու համար,
- կանխատեսել բերքատվությունն ու եկամուտը և ստանալ խորհրդատվություն բերքի մշակման բարելավման վերաբերյալ՝ նախորդ ցուցանիշների համեմատ,
- ճշգրիտ որոշել մշակաբույսերի կենսազանգվածը, բույսերի բարձրությունը, մոլախոտերի առկայությունը և դաշտի առանձին հատվածներում ջրային հագեցվածությունը,
- պայքարել վնասատուների դեմ՝ անօդաչու տեխնոլոգիաների (անօդաչու թռչող սարքերի) միջոցով անմիջապես վտանգավոր տարածքներում միջատասպան նյութերի կիրառմամբ կանխարգելելով միջատների ներխուժումը: Դա իր հերթին նվազեցնում է քիմիական թունավորման և ավելի մեծ տարածքների ախտահարման հավանականությունը:

Հայաստանում նորարարական տեխնոլոգիաների ներդրումը դեռևս սաղմնային փուլում է: Ժամանակակից տեխնոլոգիաները և նորարարական լուծումները հիմնականում հատվածաբար են կիրառվում: Դրանց առավել արդյունավետ և լայնամասշտաբ կազմակերպման էական խոչընդոտներն են ֆինանսավորման միջոցների բացակայությունը, գյուղացիական տնտե-

սավարողների գիտելիքների ցածր մակարդակը, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, ինչպես նաև նորարարական տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման փորձի պակասը, լավագույն փորձի տարածման ու հանրայնացման ցածր մակարդակը:

Այսօր բարձրորակ, ժամանակին և օգտագործողի համար մատչելի տվյալների պակաս կա ինչպես ՀՀ-ում քաղաքականություն մշակողների, այնպես էլ Վայոց ձորի և Արարատի մարզերում խորհրդատվական ծառայություններ մատուցողների, գյուղատնտեսական խորհրդատուների և ֆերմերների համար: Մասնավորապես, բացակայում է ըստ ռոտզման եղանակների ռոտզելի տարածքների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև մինչ այժմ չի իրականացվել հողերի գոտիականացում և քարտեզագրում, որը հավանական ներդրողներին հնարավորություն կընձեռի հստակ պատկերացում կազմելու ըստ գոտիների առկա հողային ռեսուրսների, այդ հողատարածքներում ռոտզման ցանցի, մշակաբույսերի մշակման տեսակների հնարավորությունների ու ակնկալվող բերքատվության մասին: Սա կարևոր նշանակություն ունի պետական և մասնավոր շահառուների կողմից գյուղատնտեսության արդյունավետ պլանավորման և որոշումների ընդունման, մշտադիտարկման և վերահսկման տեսանկյունից:

Տվյալների և գյուղատնտեսական նշանակության քարտեզների բացակայությունը կամ դրանց ճշգրտության ցածր մակարդակը նույնպես էական խոչընդոտ են ինչպես հավանական ներդրողների ներգրավման, այնպես էլ ոլորտի եկամտաբերության բարձրացման համար: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի քարտեզներն ունեն թարմացման կարիք և հիմնականում չեն արտացոլում իրական պատկերը:



Գծապարկեր 32 | Գյուղատնտեսական նշանակության հողերի քարտեզներ

Կարևոր է գյուղատնտեսական նշանակության հողերի գոտիավորման քարտեզների թարմացումը, որը հավանական ներդրողներին կօժանդակի մշակաբույսերի, տեխնոլոգիաների, հնարավոր հիվանդությունների, վնաս-

սատուների վերաբերյալ համապատասխան հաշվարկներ իրականացնելու և որոշումներ ընդունելու գործում: Վերը նշված թվային տեխնոլոգիաների ներդրումը և միասնական տեղեկատվական կենտրոնի ստեղծումը կարող է էապես բարելավել Վայոց ձորի և Արարատի մարզերում տեղեկատվության հավաքագրումը, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, որն էլ իր հերթին կնպաստի մարզերում ոլորտի մրցունակության բարձրացմանը: Նմանօրինակ կենտրոնին որպես տեխնիկական բազա կարող է ծառայել Վայոց ձորի մարզում ագրոգրոսաշրջության զարգացման համար ստեղծված GIS կենտրոնը, որն ապահովված է համապատասխան համակարգչային սարքավորումներով և ESRI ընկերության ArcGIS ծրագրային փաթեթներով: Մասնագետների վերապատրաստումից հետո առկա տեխնիկական և ծրագրային հենքի վրա կարող է ընդլայնվել կենտրոնի գործունեությունը և ներդրվել GIS-ի հիման վրա իրականացվող կոոպերացիայի համակարգ:

Գյուղացիական տնտեսությունների ծախսերի կրճատումը, բնական ռեսուրսների պահպանումը, օդի և ջրի աղտոտվածության նվազեցումը համոզիչ փաստարկներ են ճշգրիտ և կայուն գյուղատնտեսության համար բազմաթիվ առավելություններով գործիքներ օգտագործելու տեսանկյունից: Նորարարական առանձնահատկությունները թույլ են տալիս կողմնորոշվել, թե նվազագույն ջանքերով և ծախսերով որտեղ, ինչ, երբ և ինչպես տնկել ու առավելագույնի հասցնել շահույթը: Դաշտերի և հատկապես արբանյակային մշտադիտարկումը արդյունավետ մեթոդ է, որը հաջողությամբ կիրառվում է գյուղատնտեսական առաջատար ձեռնարկությունների կողմից: Նման արդյունավետ գործիք է Crop Monitoring առցանց հարթակը, որը թույլ է տալիս խելամտորեն բարձրացնել տարբեր մշակաբույսերի աճեցման արտադրողականությունը: Crop Monitoring առցանց հարթակի ծառայություններից օգտվում են ավելի քան 6500 ֆերմերներ՝ ծածկելով 4,000,000 հեկտար դաշտեր ամբողջ աշխարհում: Crop Monitoring-ը հեշտացնում է գրառումների պահպանումը դաշտային մատյանի միջոցով, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունները և համապատասխան մասնագետները նախապես ծանուցվում են հնարավոր ռիսկերի մասին և կարող են համարժեք արձագանքել դրանց: Տարբեր գնահատականներով՝ Crop Monitoring ծրագիրը, որի տարեկան սպասարկման արժեքը՝ նախնական տարբերակով, 1000 հա-ի համար կազմում է շուրջ 460 ԱՄՆ դոլար, իսկ պրոֆեսիոնալ տարբերակը 1500 հա-ի համար՝ 1.39 ԱՄՆ դոլար/հա (նվազագույնը 10 հա), 87% ներդրողներին հնարավորություն է տվել ապահովել ներդրումներից եկամտաբերության (ROI) մինչև 106 ԱՄՆ դոլար/հեկտար ցուցանիշ: Այն ներառում է.

- եղանակի հուսալի կանխատեսումների վրա հիմնված ճշգրիտ պլանավորման միջոցով՝ ROI մինչև 2,89 ԱՄՆ դոլար/հեկտար,

- սերմերի տնկման և պարարտացման համար տարբեր քարտեզների օգտագործման միջոցով ծախսերի նվազեցում՝ ROI մինչև 66,4 ԱՄՆ դոլար/հեկտար,
- մշակաբույսերի սթրեսի վաղ հայտնաբերման շնորհիվ՝ ROI մինչև 24,2 ԱՄՆ դոլար/հեկտար,
- սկաուտինգի բջջային հետախուզական հավելվածի օգտագործման շնորհիվ՝ ROI մինչև 8,4 ԱՄՆ դոլար/հեկտար¹¹⁴:

Նմանօրինակ նորարարական տեխնոլոգիական ծրագրային լուծումներ է ներկայացնում հայկական IntelinAir ստարտափը՝ արբանյակային լուսանկարների փոխարեն առաջարկելով դաշտերի տոմոգրաֆիկ լուսանկարում: IntelinAir-ը իր մշակած նոր ծրագրային հավելվածների և տեխնոլոգիաների շնորհիվ ֆերմերներին առաջարկում է իրենց դաշտերի մասին կարևոր տվյալներ՝ ընթացիկ ճիշտ որոշումներ ընդունելու, դաշտերը համապատասխանաբար խնամելու, բերքը կանխատեսելու և, իհարկե, եկամուտը մեծացնելու համար:

Ստարտափի առաջարկած լուծումը՝ Ag-MRI-ը, դաշտի «ստող» լինել կամ չլինելը վերահսկող ու խնդիրների մասին նախապես ծանուցող ծրագիր է: Պրոդուկտի անվանումը հապավում է՝ Ag-agriculture՝ գյուղատնտեսություն և MRI՝ մագնիսառեզոնանսային շերտագրություն (ՄՌՇ): Ինչպես բժշկության մեջ ՄՌՇ-ն օգնում է հայտնաբերել հնարավոր խնդիրները, այնպես էլ IntelinAir-ի Ag-MRI-ը դառնում է ուղեցույց դաշտերի խնդիրները բացահայտելու և համապատասխան լուծում տալու համար:

IntelinAir-ը շարաթը մեկ անգամ կազմակերպում է ինքնաթիռի թռիչք ֆերմերի դաշտերի վրայով: Շուրջ 1000 մ բարձրությամբ թռչող ինքնաթիռները նկարահանող սարքերով դաշտերը նկարում են այնպես, որ նկարի կետայնությունը (resolution) լինի 10 սմ: Դա նշանակում է, որ նկարի մեջ 1 պիքսելը (pixel) համապատասխանում է գետնի վրա 10 սմ-ի: Ստարտափի հիմնական մրցակիցներն արբանյակներից նկարող ընկերություններն են, որոնք չեն կարողանում ապահովել նման որակ: Նկարելուց հետո 48 ժամվա ընթացքում ստարտափը ֆերմերին է տրամադրում նկարներն ու դրանց վերլուծությունները:

Ստարտափի առաջարկած լուծումը կիրառելի է գյուղատնտեսական բոլոր մշակաբույսերի համար: Ag-MRI ծրագիրը համակարգչային տեսողության ալգորիթմներով կարողանում է ճանաչել կանոնավոր աճող բուսակապությունը և տարբերակել մոլախոտերը: Դա ֆերմերին հնարավորություն է տալիս արագ հայտնաբերելու մոլախոտերի տարածման օջախներն ու հատուկ միջոցներ ձեռնարկելու: Ag-MRI-ը նաև թույլ է տալիս դաշտերը դասավորել ըստ դաշտում առկա խնդիրների քանակի, ինչի շնորհիվ ֆերմերները կարողանում են հստակեցնել իրենց առաջնահերթությունները: Ստարտափը

¹¹⁴ <https://eos.com/ru/products/crop-monitoring/>

դաշտերի մասին տվյալներ է ապահովում ցանքսի փուլից մինչև բերքատվություն:

IntelinAir-ը իր ծրագրերի ներդրման միջոցով ֆերմերներին ապահովում է իրականացված ներդրումների տեսանելի վերադարձ (ROI)¹¹⁵ շուրջ 84 ԱՄՆ դոլար/հեկտար ցուցանիշ¹¹⁵, այդ թվում.

- սեզոնային պրոակտիվ որոշումներ. ֆունգիցիդների կիրառման ծրագրեր, բերքահավաքի ժամանակային կառավարում, թունաքիմիկատների կիրառում, սննդանյութերի կիրառում, վերատնկում՝ ROI մինչև 11,1 ԱՄՆ դոլար/հեկտար,
- կառավարման պրակտիկա. ֆունգիցիդ VRT¹¹⁶ (փոփոխական հոսքի տեխնոլոգիա), թունաքիմիկատների VRT, հիբրիդային, ոռոգման կարգավորում, հողի մշակում՝ ROI մինչև 13,3 ԱՄՆ դոլար/հեկտար,
- ամբողջ ֆերմայի հետազոտում. քիմիական վնաս, քիմիական արդյունավետություն, աշխատակիցների պրակտիկա, գործառնությունների արդյունավետություն, ներածման կարիքների բազմազանություն, բնութագրերի բազմազանություն՝ ROI մինչև 13,2 ԱՄՆ դոլար/հեկտար,
- սարքավորումների օպտիմալացում. սարքավորումների չափաբերում, սարքավորումների ֆիքսում, սարքավորումների գնում, ոռոգիչի ամրացում՝ ROI մինչև 18,5 ԱՄՆ դոլար/հեկտար,
- այլ ծառայություններից՝ ROI մինչև 28,0 ԱՄՆ դոլար/հեկտար:

Այսպիսով, կարող ենք ասել, որ օգտագործելով առկա միջոցները և ձեռք բերելով լրացուցիչ գյուղատնտեսական ծրագրեր՝ հնարավոր է ավելացնել Վայոց ձորի և Արարատի մարզերի գյուղատնտեսության մրցունակությունը և բարձրացնել ֆերմերների եկամուտները:


Կարևորելով ինովացիոն զարգացման ուղին՝ հարցման մասնակիցներից փորձ է արվել պարզելու, թե ՏԻՄ-երը որքանով են պատրաստ գյուղատնտեսության զարգացման նորարարական մտտեցումների մասին որոշումներ ընդունել¹¹⁷:

Նորարարական զարգացման վերաբերյալ հարցվողների կեսից ավելին կարծում է, որ համայնքները մասամբ պատրաստ են նորարարական մտտեցումների մասին որոշումներ ընդունել:

¹¹⁵ <https://www.intelinair.com/>

¹¹⁶ Variable-rate fungicide application - սենսորների վրա հիմնված փոփոխական հոսքով ֆունգիցիդների կիրառում:

¹¹⁷ Q9. 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 5 նշանակում է լիովին պատրաստ է, իսկ 1՝ բոլորովին պատրաստ չէ:



Գծապատկեր 33

Գյուղատնտեսության զարգացման նորարարական մոտեցումների մասին որոշումներ ընդունելու ՏԻՄ-երի պատրաստվածությունը

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը կախված է նյութական ծախսերի մակարդակից, արտադրության ծավալից, աշխատանքի վերջնական արդյունքների նկատմամբ աշխատողների նյութական շահագրգռվածությունից: Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսության մեջ ռեսուրսների բարձր արժեքը կարելի է բացատրել բազմաթիվ պատճառներով. հողի ցածր բերրիություն և դեգրադացիա, արտադրանքի մեծ կորուստներ, էներգիայի պաշարների անհամապատասխան հաշվառում, ցածրորակ և ֆիզիկապես ու բարոյապես մաշված սարքավորումներ, ագրոտեխնոլոգիական պահանջների ոչ լիարժեք կատարում, դրանց ոչ ամբողջական կիրառություն արտադրության և հումքի վերամշակման վայրերում, այլընտրանքային տեխնոլոգիաների բացակայություն և այլն: Մեր կողմից իրականացված վերլուծությունները և հաշվարկները ցույց են տալիս, որ իրավիճակի բարելավմանը, հետևաբար Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանը հնարավոր է հասնել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ու ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հաշվին: Վերջինս, իր հերթին, պահանջում է մարզերում էական կապիտալ ներդրումների իրականացում, որը չի կարող կյանքի կոչվել առանց պետության աջակցության, ինչի մասին վկայում է նաև միջազգային փորձը:

Հետազոտական թիմի ուսումնասիրությունները, փաստական և տեղեկատվական նյութի ամփոփումը, ընդհանրացումն ու վերլուծությունը հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները և առաջարկությունները.

- Վայոց ձորի մարզում առավել բարձր արդյունավետություն են ապահովում խաղողագործությունը, պտղաբուծությունը և հատապտղի արտադրությունը, Արարատի մարզում բերքատվության և զուտ շահույթի ցուցանիշներով առավել բարձր արդյունավետություն են ապահովում բանջարաբուծությունը, մշակաբույսերը և խաղողագործությունը:
- Հետազոտության ընթացքում գյուղատնտեսական արտադրության մրցունակությունը բնութագրվել է ցուցանիշների համակարգով, որոնցից առավել կարևոր են համարվել միավոր տարածությունից ստացվող համախառն բերքը և զուտ շահույթը: Նշվել է նաև, որ գյուղատնտեսական մշակաբույսերի մրցունակությունը գնահատող միասնական ընդհանրական ցուցանիշ գոյություն չունի: Այս նկատառումով, առաջարկվել է գյուղատնտեսական մշակաբույսերի մրցունակությունը գնահատել ընդհանուր ինտեգրալ ցուցանիշի հիման վրա՝ դրանց աստիճանակարգման միջոցով՝ նպատակ ունենալով դիտարկվող մարզերում թիրախավորել գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը՝ առավել նպատակային ու արդյունավետ դարձնելով գյուղատնտեսության պետական աջակցության և բյուջետային ծախսերի իրացման գործընթացը:
- Թեպետ Արարատի մարզում ընդհանուր ցանքատարածությունների 11,3%-ն օգտագործվում է հացահատիկային և հատիկարնդեղենային մշակաբույսերի մշակման համար, այնուամենայնիվ, գյուղատնտեսական այդ արտադրության արդյունավետությունը բավականին ցածր է:
- Ըստ կատարված հետազոտության արդյունքների գնահատման՝ կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսության մրցունակությունը կախված է նաև ցանքաշրջանառության, ցանքատարածությունների կառուցվածքի ժամանակակից համակարգեր կամ որակապես տարբերվող գյուղատնտեսական գործունեության միջավայր ստեղծելու ունակությունից, ինչը տվյալ մարզի գյուղացիական տնտեսություն-ների թույլ կտա արդյունավետորեն օգտագործել համայնքի գյուղատնտեսական պաշարներն ու հնարավորությունները: Հետազոտության շրջանակներում Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական մշակաբույսերի աստիճանակարգման հաշվարկի առաջարկվող մեթոդիկայի օգտագործումը կարող է դառնալ վերը նշվածի իրականացման գործիքներից՝ մրցունակությունն ընդունելով որպես գյու-

դատնտեսական ոլորտի արտադրողների արդյունավետության և արտադրողականության կարողություն:

- Հետազոտության արդյունքներից ելնելով հիմնավորվել է, որ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է գնահատել ագրոպարենային համակարգի զարգացման ներուժը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները և այն գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են վերջինիս զարգացմանը: Մարզերի վարկանշավորման և կատարված հաշվարկների արդյունքում, ըստ առանձնացված ներուժային ցուցանիշների վեց խմբերի, դիտարկվել է Վայոց ձորի և Արարատի մարզերի մրցակցային ներուժի դիրքը՝ հստակ գնահատելով յուրաքանչյուր մարզի ներուժային ցուցանիշները:
- Հետազոտության շրջանակներում գյուղատնտեսական ապահովագրության ոլորտում իրականացված վերլուծությունները և ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս փաստելու, որ թեև ապահովագրության տարածքը ընդլայնվել է ՀՀ բոլոր մարզերով, և բոլոր համայնքները հնարավորություն ունեն ապահովագրելու իրենց այգիներն ու ցանքատարածությունները, այնուամենայնիվ, Վայոց ձորի և Արարատի մարզերում հարցումներով պարզվել է, որ հարցվողների միայն 21%-ն է տեղյակ գյուղատնտեսության ոլորտի ապահովագրական համակարգի ներդրման պետական ծրագրի իրականացման մասին:
- Մարզային մակարդակով կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ արտադրական ծախսերի մեթոդը դրական ազդեցություն ունի ցածր բերքատվությամբ մարզերում և բացասական ազդեցություն՝ բարձր բերքատվությամբ մարզերում: Առավել արդյունավետ կարող է լինել ապահովագրական գումարի բաշխումը՝ ըստ մարզերի բերքատվության և եկամտաբերության: Մասնավորապես, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա գարնանը սահմանել այդ տարվա ապահովագրական գումարների չափերը՝ հիմնված նախորդ տարվա խաղողի մթերման միջին գնի և 1 հա միջին բերքատվության վրա: Արդյունքում, օրինակ, Արարատի և Վայոց ձորի մարզերում խաղողի բերքի ապահովագրական գումարների ուղենշային հաշվարկներից ելնելով, 2022 թվականի համար կարող ենք ունենալ 500,000 – 3,000,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարի սահման:
- Այսօր բարձրորակ, ժամանակին և օգտագործողի համար մատչելի տվյալների պակաս է առկա ինչպես ՀՀ-ում քաղաքականություն մշակողների, այնպես էլ Վայոց ձորի և Արարատի մարզերում խորհրդատվական ծառայություններ մատուցողների, գյուղատնտեսական խորհրդատուների և ֆերմերների համար: Մասնավորապես, բացակայում է ըստ ոռոգման եղանակների ոռոգելի տարածքների մասին տե-

ղեկատվությունը, ինչպես նաև մինչ այժմ չի իրականացվել հողերի գոտիականացում և քարտեզագրում, որը հավանական ներդրողներին հնարավորություն կընձեռի հստակ պատկերացնում կազմելու ըստ գոտիների առկա հողային ռեսուրսների, այդ հողատարածքներում առկա ռոտզման ցանցի, մշակաբույսերի մշակման տեսակների ու ակնկալվող բերքատվության մասին: Սա կարևոր նշանակություն ունի պետական և մասնավոր շահառուների կողմից գյուղատնտեսության արդյունավետ պլանավորման և որոշումների ընդունման, մշտադիտարկման և վերահսկման տեսանկյունից: Տվյալների և գյուղատնտեսական նշանակության քարտեզների բացակայությունը կամ դրանց ճշգրտության ցածր մակարդակը նույնպես էական խոչընդոտ են հավանական ներդրողների ներգրավման, ոլորտի եկամտաբերության բարձրացման համար: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի քարտեզներն ունեն թարմացման կարիք և հիմնականում չեն արտացոլում իրական պատկերը:

- Հայաստանի Հանրապետությունում ընդհանրապես և Վայոց ձորի ու Արարատի մարզերում մասնավորապես, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը դեռևս սաղմնային փուլում է: Ժամանակակից տեխնոլոգիաները և նորարարական լուծումները հիմնականում հատվածաբար են կիրառվում: Դրանց առավել արդյունավետ և լայնամասշտաբ կազմակերպման էական խոչընդոտներն են անհրաժեշտ ֆինանսավորման միջոցների բացակայությունը, գյուղացիական տնտեսավարողների գիտելիքների ցածր մակարդակը, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, ինչպես նաև նորարարական տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման փորձի պակասը և գոյություն ունեցող լավագույն փորձի տարածման ու հանրայնացման ցածր մակարդակը:
- Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսության զարգացման ապագա քաղաքականությունը Վայոց ձորի և Արարատի մարզերում պետք է ուղղված լինի պետական աջակցության ծրագրերի իրականացմանը, ապահովագրական համակարգի ներդրման գործընթացի տեղեկատվական դաշտի ընդլայնմանն ու լուսաբանմանը, դրանցում մասնակցության մատչելի կառուցակարգերի մեկնաբանմանը, գյուղատնտեսական կոոպերատիվների նկատմամբ արտոնյալ մոտեցման հնարավորությունների բացահայտմանը, գիտելիքների ու հմտությունների առաջնայնության հիմնավորմանը և դրանցով էլ գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների համար գործունեության նպաստավոր պայմանների ստեղծմանն և մրցունակության բարձրացման հնարավորությունների ձևավորմանը:

Անփոփելով կարող ենք փաստել, որ դիտարկվող մարզերում գյուղական բնակավայրերի բարեկեցության բարձրացման և ոլորտի զարգացման պահանջների բավարարման նպատակով պետք է ներդրումներ կատարել եկամտաբեր գործունեության բազմազանեցման և զարգացման ուղղությամբ: Դա նշանակում է, որ Վայոց ձորի և Արարատի մարզերում ցանքատարածությունների կառուցվածքի փոփոխման արդյունքում կարելի է ապահովել գյուղատնտեսության ոլորտի առավել բարձր արդյունավետություն և պետական միջոցները հատկացնել հատկապես այն մշակաբույսերի մշակմանը, որոնք մրցակցային առավելություններ ունեն հենց այդ մարզերում:

Վայոց ձորի և Արարատի մարզերի աշխարհաքաղաքական դիրքը և տնտեսական անվտանգության շահերը պահանջում են գյուղական բնակավայրերի ամրապնդման, ժողովրդագրական գործընթացների արդյունավետ կառավարման և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով խելամիտ ագրարային քաղաքականության մշակում և իրականացում:

1. Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Ա.Վ., Պարենային և առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների շուկաների բնորոշ գծերը և կարգավորման կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Տնտեսագետ», 2015, 60 էջ:
2. Ավետիսյան Ս., Հայաստանի գյուղատնտեսությունը և ազրովերամշակումը, Եր., 2010:
3. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թ. բյուջետային ուղերձ, 241 էջ:
4. Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, 2020-2030 թվականների,
<https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>
5. Տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, 2020, Եր., 2021,
https://mineconomy.am/media/14702/%21Programs_Arm4.pdf
6. Анищенко А.Н., «Умное» сельское хозяйство как перспективный вектор роста аграрного сектора экономики России, Продовольственная политика и безопасность, том 6, № 2, Апрель-июнь 2019.
7. Беркович М. И., Актуальность и проблемы применения мер нетарифного регулирования внешней торговли России при вступлении в ВТО / М. И. Беркович, А. А. Черногорова // Многоуровневое общественное воспроизводство: вопросы теории и практики, 201, № 2.
8. Борнякова Е. В., Международный опыт государственной помощи сельскому хозяйству / Е. В. Борнякова // Вестн. Удмурт. ун-та, 2011, Вып. 2.
9. Бубен С.Б., Основные тенденции государственной поддержки сельского хозяйства в мире и Евразийском экономическом союзе, Tradepolicy 2018, 2.
10. Воронин Б. А., Внутренняя продовольственная помощь – реальная поддержка сельскохозяйственных товаропроизводителей в условиях ВТО / Б. А. Воронин // Аграр. вестн. Урала, 2013, № 8 (114).
11. Гусаков В. Г., Новейшая экономика и организация сельского хозяйства в условиях становления рынка: научный поиск, проблемы, решения / В. Г. Гусаков, Минск: Ин-т системных исследований в АПК, 2008, 431 с.
12. Договор о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 г. М., 2014.
13. Колесняк И.А., Колесняк А.А., Система продовольственного обеспечения региона: проблемы и перспективы её развития. / Монография, Красноярск: Краснояр.гос. ун-т, 2014.
14. Корабошев О.З., Инновации и современные технологии в сельском хозяйстве, Вестник науки и образования, № 18(96). часть 2. 2020.
15. Кубанов А., Экономический механизм регулирования АПК в условиях рынка / А. Кубанов, А. Байчорова // АПК: экономика, управление, 2007, № 8.
16. Ленская Т. И., Организационно-экономические факторы повышения конкурентоспособности продукции АПК: дис. ... канд. экон. наук: 08.00.05 / Т. И. Ленская, Минск, 2013, 152 с.

17. Мальшева Н. В., Факторы, влияющие на развитие сельского хозяйства с учетом особенностей деятельности сельхозтоваропроизводителей / [СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ НАУКИ И ОБРАЗОВАНИЯ](#), 2013.
18. Магомедов А. Н., Государственное субсидирование как фактор повышения конкурентоспособности сельского хозяйства США / А. Н. Магомедов, Л. Оверчук, А. Оверчук // АПК: экономика, управление, 2007, № 8.
19. Мозиас П., Внешнеторговая политика Китая после присоединения к ВТО / П. Мозиас, В. Яковлева // Мировая экономика и международные отношения, 2009, № 12.
20. Овчинников О.Г., Эволюция мер аграрной политики США в начале XXI века // США и Канада: экономика, политика, культура, 2018, № 3(579).
21. Пелих С. А., Инновационно-инвестиционная среда в агропромышленном комплексе Китая и Беларуси: анализ, проблемы, решения / С. А. Пелих, Ван Яотянь, Минск: Право и экономика, 2012, 176 с.
22. Петриков А. В., Личные подсобные хозяйства России: проблемы и перспективы развития / А. В. Петриков // Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий, 2007, № 5.
23. Портер М., Конкуренция: пер. с англ. / М. Портер, М.: Изд. дом «Вильямс», 2005, 608 с.
24. Смит А., Исследование о природе и причинах богатства народов /А. Смит, М.: Эконом, Ключ, 1993, 475 с.
25. Полянская Н.М., Колесняк А.А., Колесняк И.А., Государственная финансовая поддержка развития агропродовольственного сектора: опыт ведущих зарубежных стран // Экономические отношения, 2020, Том 10, № 3.
26. Саубанов К. Р., Конкурентоспособность регионального сельского хозяйства в приволжском федеральном округе: дис. ... канд. экон. наук: 08.00.05 / К. Р. Саубанов, Казань, 2010, 176 с.
27. Сладкова Т. В., Государственная поддержка сельского хозяйства как фактор повышения конкурентоспособности АПК в условиях ВТО, монография, Красноярск : СФУ, 2016.
28. Сидорук А. С., Совершенствование правил регулирования внутренней поддержки сельского хозяйства в рамках ВТО: автореф. дисс. ... канд. экон. наук., М., 2009.
29. Султанова Г.Т., Государственная поддержка АПК в зарубежных странах // Проблемы агробизнеса, 2017, № 3.
30. Токтомаматов К.Ш., М.Ж.Абдиев, К.К. Токторов, Зарубежная практика повышения конкурентоспособности аграрного сектора, Экономика и бизнес: теория и практика, 2017, Т. 1, №4.
31. Юркова Е. А., Конкурентоспособность сельскохозяйственных предприятий и влияние инновационного потенциала АПК на ее повышение: дис. ... канд. экон. наук: 08.00.05 / Е. А. Юркова, М., 2013, 159 с.
32. Ядгаров Я. С., История экономических учений: учеб. для вузов. 3-е изд. / Я. С. Ядгаров, М.: ИНФРА-М, 2000, 567 с.
33. "Agriculture, forestry and fishery statistics" European Union, 2019, <https://ec.europa.eu/eurostat/documents/3217494/10317767/KS-FK-19-001-EN-N.pdf/742d3fd2-961e-68c1-47d0-11cf30b11489?t=1576657490000>

34. Agricultural Policy Monitoring and Evaluation 2021 Addressing the Challenges Facing Food Systems, OECD, 2021.
35. Alexandros N., World agriculture towards 2030/2050: the 2012 Revision/N. Alexandros, J. Bruinsma [Electronic resource] // Food and Agriculture Organization of the United Nations. p.- 10, <http://www.fao.org/docrep/016/ap106e/ap106e.pdf>
36. Alston J. M., Agricultural Research, Productivity, and Food Commodity Prices / J. M. Alston, J. M. Beddow, P. G. Pardey [Electronic resource] // Giannini Foundation, Mode of access: <http://giannini.ucop.edu/media/are-update/files/articles/v12n2_5.pdf>
37. Balassa B., Comparative Advantage, Trade Policy and Economic Development, Harvester Wheatsheaf, 1987, New York, NY.
38. Da Huo, Impact of country-level factors on export competitiveness of agriculture industry from emerging markets.
39. Fostering Productivity and Competitiveness in Agriculture OECD [Electronic resource] // Organisation for Economic Cooperation and Development, 2011, Mode of access: <<http://browse.oecdbookshop.org/oecd/pdfs/product/5111131e.pdf>>
40. Hair J.F. Jr., Black W.C., Babin B.J. and Anderson R.E., Data transformations Chapter 2, *Multivariate Data Analysis* 7th ed., Prentic Hall, Upper Saddle River, NJ, 2010.
41. Latruffe L., Competitiveness, Productivity and Efficiency in the Agricultural and AgriFood Sectors: OECD Food, Agriculture and Fisheries Papers N 30 / L. Latruffe [Electronic resource] // OECD iLibrary. — Mode of access: <http://www.oecd-ilibrary.org/agriculture-and-food/competitiveness-productivity-and-efficiency-in-the-agricultural-and-agri-food-sectors_5km9lnkdt6d6-en?crawler=true>
42. Notifications of domestic support commitments (for EU, US, China, India, Australia, Brazil, Argentina, Japan and etc) www.wto.org
43. Population Projection Tables by Country and Group [Electronic resource] // The World Bank, Mode of access: <<http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTHEALTHNUTRITIONANDPOPULATION/EXTDATA/STATISTICSHNP/EXTHNPSTATS/0,,contentMDK:21737699~menuPK:3385623~pagePK:64168445~piPK:64168309~theSitePK:3237118,00.html>>
44. Schwab K., The Global Competitiveness Report 2013—2014 / K. Schwab [Electronic resource] // World Economic Forum. — Mode of access: <http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2013-14.pdf>
45. Statistical Pocketbook "World Food and Agriculture -2020", Food and Agriculture Organization of the United Nations Rome, 2020.
46. https://www.armstat.am/file/article/sv_01_21a_112.pdf
47. <https://www.armstat.am/file/doc/99520928.pdf>
48. <https://www.armstat.am/am/?nid=12&id=03001>
49. <https://www.armstat.am/am/?nid=81&id=2368>
50. https://www.armstat.am/file/article/sv_12_20a_520.pdf
51. http://www.eurasiancommission.org/ru/act/prom_i_agroprom/dep_agroprom/sxs/Pages/default.aspx
52. <https://smebanking.news/ru/18320-mezhdunarodnyj-obzor-gosdotaciy-agrari>
53. <https://eos.com/ru/products/crop-monitoring/>
54. <https://www.intelinair.com/> Եվրոպական երկրներում:

Q1. Նշե՛ք Ձեր կրթական ամենավերջին մակարդակը:

1. Տարրական
2. Միջնակարգ
3. Միջնակարգ մասնագիտական
4. Բարձրագույն
5. Հետբուհական

Q2. Նշե՛ք համայնքի կամ մարզպետարանի հետ Ձեր կապը:

1. Համայնքապետարանի աշխատակից (նշել ոլորտը) _____
2. Ավագանու անդամ
3. Համայնքային ենթակայության տակ գործող կազմակերպության աշխատակից (նշել կազմակերպությունը և պաշտոնը) _____
4. Մարզպետարանի աշխատակից
5. Այլ (մանրամասնե՛ք)

Q3. Ձեր համայնքն ունի՞ արդյոք չօգտագործվող հողատարածքներ:

1. Այո
2. Ոչ
3. Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել

Q4. Զբաղվո՞ւմ եք արդյոք գյուղատնտեսական արտադրությամբ:

1. Այո
2. Ոչ

Q5. Խնդրում ենք 1-3 բալանոց սանդղակով գնահատել ոռոգման համակարգը և դրա արդյունավետությունը Ձեր համայնքի համար, որտեղ 3-ը նշանակում է գերազանց և արդյունավետ, իսկ 1-ը՝ անբավարար և ոչ արդյունավետ:

3. Գերազանց և լիովին արդյունավետ
2. Լավ և մասամբ արդյունավետ
1. Անբավարար և ոչ արդյունավետ

Q6. Տեղեկացվա՞ծ եք արդյոք գյուղատնտեսության ապահովագրության համակարգի մասին:

1. Այո
2. Ոչ

Q7. Ձեր կարծիքով՝ ինչի՞ց է կախված գյուղմթերքի արտադրության կոնկրետ ուղղության ընտրությունը:

Q8. Գյուղտեխնիկայի օգտագործման ի՞նչ ձևեր կարելի է ներդնել Ձեր համայնքում, որո՞նք են ներդրման խոչընդոտները:

<i>Օգտագործման ձևեր</i>	<i>Ներդրման խոչընդոտներ</i>
1.	
2.	
3.	

Q9. 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 5-ը նշանակում է լիովին պատրաստ է, իսկ 1-ը՝ բոլորովին պատրաստ չէ, գնահատե՛ք, թե ըստ Ձեզ՝ ՏԻՄ-երը որքանով են պատրաստ գյուղատնտեսության զարգացման նորարարական մոտեցումների մասին որոշումներ ընդունելու:

5. Լիովին պատրաստ են
4. Մասամբ պատրաստ են
3. Ոչ պատրաստ են, ոչ էլ պատրաստ չեն
2. Ավելի շուտ պատրաստ չեն
1. Բոլորովին պատրաստ չեն

Q10. 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 5-ը նշանակում է լիովին տեղեկացված են, իսկ 1-ը՝ բոլորովին տեղեկացված չեն, գնահատե՛ք գյուղատնտեսության աջակցման պետական ծրագրերի մասին համայնքների տեղեկացվածության աստիճանը:

5. Լիովին տեղեկացված են
4. Գրեթե տեղեկացված են
3. Ոչ տեղեկացված են, ոչ տեղեկացված չեն
2. Մասնակի տեղեկացված են
1. Բոլորովին տեղեկացված չեն

Q11. Դուք այս պահին կհամարեի՞ք Ձեր մարզը՝ որպես մրցունակ գյուղատնտեսություն ունեցող:

1. Հաստատապես այո
2. Ավելի շուտ այո, քան ոչ
3. Ավելի շուտ ոչ, քան այո
4. Հաստատապես ոչ

Q12. Ո՞րն է համայնքի բնակչի՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու կարևորագույն մոտիվացիան:

- Նյութական (ֆինանսական, գույքային)
- Բարոյական
- Վարչական
- Օրենսդրական
- Այլ (մանրամասնե՛ք) _____

Ծրագիր	Այո	Ոչ
1. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	1	0
2. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր	1	0
3. Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր	1	0
4. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	1	0
5. Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր	1	0
6. Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագիր	1	0
7. Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիր	1	0
8. Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր	1	0
9. Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր	1	0
10. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	1	0
11. Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր	1	0
12. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր	1	0

Q13. Առավելապես ինչի՞ց են կախված գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հնարավորությունները Ձեր մարզում:

1. Ագրարային ոսպնավարություն և քաղաքականություն
2. Պետական ընդհանուր տնտեսական միջոցառումներ
3. Ագրոարդյունաբերական համալիրի իրավական օրենսդրական կարգավորում
4. Մթերման վաճառահանման գործունեությունն ապահովող գործոններ
5. Ընդհանուր տնտեսական համակարգի մրցունակությունն ապահովող միջոցառումներ
6. Այլ (մանրամասնե՛ք) _____

Q14. Ձեր մարզում գյուղատնտեսական ո՞ր արտադրանքն էք համարում առավել մրցունակ:

Q15. Գյուղատնտեսության պետական աջակցման հետևյալ ծրագրերից ո՞րն է Ձեզ ծանոթ (յուրաքանչյուր տողում այո կամ ոչ պատասխանը վերցրեք շրջանակի մեջ):

Q16. Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հարցում ի՞նչ խնդիրներ էք պատկերացնում, նկատում (ինսպավոր է մի քանիսի պարասխան):

- Հանրապետական կառավարման մարմինների կողմից կոնկրետ ծրագրերի անհրաժեշտություն
- Ֆինանսական աջակցության պակաս
- Համայնքի բնակչությանն աջակցության ցածր մակարդակ
- Օրենսդրական անկատարություն
- Այլ (նշե՛ք՝ կոնկրետ ինչ) _____

Q17. Որքանո՞վ էք պատրաստ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման խնդիրները լուծելու նորարարական եղանակներով:

1. Լիովին
2. Մասամբ
3. Պատրաստ չենք
4. Այլ (նշե՛ք՝ կոնկրետ ինչ) _____

Q18. Գյուղատնտեսության զարգացման խնդիրների առավել արդյունավետ լուծման համար տեսնո՞ւմ եք արդյոք մասնագետների վերապատրաստման անհրաժեշտություն:

1. Այո, խիստ օգտակար կլինի
2. Այո, հնարավոր է օգտակար լինի
3. Ավելի շուտ անօգուտ կլինի
4. Լիովին անօգուտ է

Q19. Ինչպե՞ս կզնահատեիք Ձեր համայնքի գյուղատնտեսական ենթակառուցվածքների վիճակը (ընդգծել):

1. Գյուղամիջյան ճանապարհներ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
2. Մեքենասարքավորումների պարկ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
3. Ոռոգման համակարգ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
4. Սերմերի և տնկանյութերի կայաններ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
5. Անասնազոմեր, սպանդանոցներ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար

6. Հակակարկտային կայաններ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
7. Ջրային պաշարների պահեստավորման և բաց թողնման համակարգ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
8. Գյուղատնտեսական նշանակության հողերի քարտեզներ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
9. Գյուղատնտեսության հավաքման, մթերման կայաններ և շուկաներ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
10. Մասնագիտական, տեխնիկական սպասարկման, խորհրդատվական ծառայություններ	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար
11. Այլ (նշել)	5. գերազանց, 4. լավ, 3. վատ, 2. շատ վատ, 1. անբավարար

Q20. Ձեր կարծիքով՝ որո՞նք են գյուղատնտեսության զարգացման երեք կարևոր հիմնախնդիրները Ձեր մարզում:

1. _____
2. _____
3. _____

Q21. Հայտ ներկայացրե՛լ եք արդյոք ՀՀ Կառավարության կողմից գյուղատնտեսության աջակցության ծրագրերում ընդգրկվելու համար:

1. Այո (շարունակել, անցնել հաջորդ հարցին)
2. Ոչ (անցնել Q23 հարցին)

Q22. Ներկայացված հայտի/հայտերի մասով ֆինանսավորում ստացե՛լ եք:

1. Այո, ներկայացրել ենք մեկից ավել հայտ, և բոլորն էլ ֆինանսավորվել են:
2. Ներկայացրել ենք մեկից ավելի հայտ, և մի մասը ֆինանսավորվել է:
3. Այո, ներկայացրել ենք մեկ հայտ, և այն ֆինանսավորվել է:
4. Ոչ, մեր միակ հայտը չի ֆինանսավորվել:
5. Ոչ, մեկից ավելի ներկայացված մեր հայտերից և ոչ մեկը չի ֆինանսավորվել:

Q23. Խնդրում ենք նշել ՀՀ Կառավարության կողմից հայտարարված գյուղատնտեսության աջակցության ծրագրերին չմասնակցելու պատճառները:

1. Տեղեկատվության պակաս. տեղյակ չենք եղել նման հնարավորության մասին:
2. Մասնագիտական ռեսուրսների պակաս. չենք ունեցել համապատասխան մասնագետներ՝ հայտը կազմելու համար:

3. Ժամանակի պակաս. ունեցել ենք համապատասխան մասնագետ, ցանկություն, բայց ժամանակային սահմանափակման պատճառով չենք կարողացել ծրագիր ներկայացնել:
4. Մեփական ֆինանսական ռեսուրսների պակաս. չենք ունեցել ծրագրով պահանջվող նվազագույն միջոցներ:
5. Այլ պատճառ (խնդրում ենք մանրամասն նկարագրել խնդիրը):

Q24. Ձեր կարծիքով՝ որո՞նք են գյուղատնտեսության զարգացմանը խանգարող հիմնական պատճառները (հնարավոր է մի քանի պատասխան):

Q25. Գյուղատնտեսության ոլորտի նշված գերակայություններից ո՞րն եք համարում Ձեր մարզի համար կարևոր (ընտրե՛ք 3 ամենակարևորները՝ ըստ առաջնահերթության):

1. **Հողային բարեփոխումներ/**հասանելիություն արտադրողների և գործարարների համար, ինտենսիվացում, հողի արտադրողականության բարձրացում՝ հողերի կոնսոլիդացիայի միջոցով, հողի շուկայի զարգացում...
2. **Արտահանման բազմազանեցում/**հավաստագրման արդիականացված համակարգեր ...
3. **Առևտրայնացում և ավելացված արժեք.** արտահանման բազմազանեցումը և ներմուծման փոխարինումը պետք է իրականացվեն պետական աջակցության և ներդրումային ու դրամաշնորհային ծրագրերի միջոցով:
4. **Տեխնոլոգիական արդիականացում և նորարարություն**
5. **Մարդկային կարողությունների և հմտությունների զարգացում**
6. **Գյուղական զարգացում**
7. **Ինստիտուցիոնալ կարողություններ, վճարման համակարգեր, գյուղացիական տնտեսությունների ռեգիստրներ և այլն**

Q26. Նշե՛ք կոնտակտային հեռախոսահամար կամ Ձեր էլիասցեն:


Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

ՀՀ մարզերի վարկանշավորումը՝ ըստ գյուղատնտեսական ներուժի
ամփոփ ցուցանիշի

Մարզեր	Կ _{բնագ}	Ջրա- ղեցրած դիրքը	Կ _{դադր.}	Ջրա- ղեցրած դիրքը	Կ _{բնիս}	Ջրա- ղեցրած դիրքը	Կ _{տր}	Ջրա- ղեցրած դիրքը	Կ _{նսբ}	Ջրա- ղեցրած դիրքը	Կ _{նող.}	Ջրա- ղեցրած դիրքը	Մարզի գյուղ. մրցակցային 'ներուժի ամ- փոփ ցուցա- նիշը	Մարզի վարկա- նիշը
Արագածոտն	0.264056	5	1.29106	2	0.0319	5	0.0000	4	0.0643	4	0.5903	6	26	4
Արարատ	0.267141	3	1.28573	3	0.0540	2	0.0884	3	0.2218	2	0.5515	9	22	2
Արմավիր	0.264116	4	1.37333	1	0.0569	1	0.1939	1	0.3673	1	0.6140	4	12	1
Գեղարքունիք	0.335337	1	1.18460	5	0.0355	3	0.0000	4	0.0982	3	0.5553	8	24	3
Լոռի	0.240337	6	0.97726	7	0.0280	6	0.0000	4	0.0640	5	0.5891	7	35	7
Կոտայք	0.185025	7	0.91033	10	0.0335	4	0.1144	2	0.0488	6	0.6047	5	34	6
Շիրակ	0.073907	10	0.94242	8	0.0258	7	0.0000	4	0.0293	9	0.3909	10	48	10
Սյունիք	0.325890	2	0.98206	6	0.0185	9	0.0000	4	0.0335	7	0.6410	3	31	5
Վայոց ձոր	0.171367	8	1.23635	4	0.0178	10	0.0000	4	0.0311	8	0.6506	2	36	8
Տավուշ	0.156568	9	0.91550	9	0.0250	8	0.0000	4	0.0276	10	0.6832	1	41	9

Հավելված 3

ՀՀ մարզերի գյուղատնտեսության մրցակցային ներուժի գնահատման բազմանկյուն



Руководитель исследовательской группы

АРПИНЕ ОВАКИМЯН

Кандидат экономических наук, доцент

Члены исследовательской группы

ЦОВИНАР КАРАПЕТЯН

Кандидат экономических наук, доцент

ГАРИК СИРОЯН

Кандидат экономических наук, доцент

ЛИАНА ФИДАНЯН

Кандидат экономических наук, доцент

МАРИАМ ХАЧАТРЯН

Аспирант кафедры макроэкономики

АСМИК КАРАМЯН

Студентка Ехегнадзорского филиала АГЭУ

ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В РЕГИОНАХ РА ВАЙОЦ ДЗОР И АРАРАТ

DOI: 10.52174/978-9939-61-252-2

Аграрный сектор Республики Армения традиционно был и остается одной из ведущих отраслей экономики страны. Принимая во внимание проблему продовольственной безопасности и приоритетности развития села, а также существующие вызовы в сфере сельского хозяйства, важно выявить проблемы в сфере повышения конкурентоспособности аграрного сектора и принять соответствующие меры. Указанные меры должны быть направлены на формирование соответствующей правовой базы в области сельского хозяйства, обеспечение благоприятных условий для инвестиций в эту область, развитие сельского хозяйства и сельской инфраструктуры, продвижение экспортно ориентированного производства, внедрение новых достижений науки и техники.

Особенно важно повышение конкурентоспособности аграрного сектора на внутреннем и внешнем рынках, что обусловило решение важнейшей проблемы сельского хозяйства и развития села, то есть решение проблемы сбыта, который заменит импорт жизненно важных продуктов местного производства. Вопрос повышения конкурентоспособности сельскохозяйственной продукции является актуальным для Республики Армения, особенно для областей Вайоц Дзор и Арарат, поскольку сельскохозяйственные компании в условиях нестабильности и отсутствия опыта управления рынком вынуждены конкурировать с крупными иностранными компаниями, выходящими на внутренний рынок.

В современной экономической литературе нет единого подхода к оценке конкурентоспособности сельского хозяйства. Западные исследователи более склонны давать количественную оценку этой категории. Их цель - выявить ряд факторов, влияющих на эффективность сельскохозяйственного сектора, количественно оценить эти факторы и рассчитать сводный индекс конкурентоспособности. В то же время конкурентоспособность отдельных компаний часто используется как объект анализа. В отечественной литературе больше внимания уделяется анализу факторов, влияющих на конкурентоспособность сельского хозяйства. При этом не упускается из виду важность статистических методов оценки конкурентоспособности. Предлагаются различные индексы и методы оценки этого показателя.

Количество факторов, влияющих на конкурентоспособность сельского хозяйства, велико, их доля в общем индексе конкурентоспособности сильно варьируется в зависимости от региона, страны или других критериев. Поэтому сложно дать точную количественную оценку конкурентоспособности. Однако существует ряд критериев конкурентоспособности, которые играют чрезвычайно важную роль в сельском хозяйстве почти во всех странах мира. Отсутствие единого подхода в сфере сельского хозяйства и наличие множества факторов приводят к необходимости более детального обсуждения этого вопроса, составления классификации, которая будет учитывать современные тенденции развития аграрного сектора.

В исследовании использовались систематические подходы, а также методы сравнительного анализа, статистического анализа баз данных и изучения причинно-следственных связей. Информационной и методологической базой исследования также послужили камеральные исследования, которые, в частности, включали изучение и анализ программных документов, стратегий, изучение соответствующих исследовательских, аналитических материалов и литературы, сравнение и обобщение результатов.

Использовался также метод анализа и прогнозирования временных рядов, с помощью которого в рамках исследования были проанализированы ряд показателей социально-экономического развития Вайоц Дзора и Арарата. Благодаря описательному методу статистического анализа были оценены и проанализированы ряд средних, относительных показателей, а также исследование структуры набора показателей и структурных сдвигов. В частности, анализ проводился по типам сельскохозяйственных угодий, посевным площадям основных сельскохозяйственных культур, валовой продукции и урожайности сельского хозяйства, производственным показателям основных продуктов животноводства.

Проведенные исследовательской группой изучение, обобщение информации и анализ дают возможность сделать следующие выводы и рекомендации:

- В области Вайоц Дзор виноградные, плодово-ягодные плантации обеспечивают более высокую эффективность, в то время как значительная часть нынешних субсидий на урожай направляется на развитие производства зерновых культур. В Араратской области овощные культуры и виноградные плантации обеспечивают более высокую урожайность и чистую прибыль.
- Хотя 11,3% всех посевных площадей в Араратской области используются для выращивания зерновых и зернобобовых культур, эффективность этого сельскохозяйственного производства довольно низкая.

- Оценивая результаты опроса, можно сделать вывод, что конкурентоспособность сельского хозяйства также зависит от способности создать севооборот, современных систем землеустройства или качественно иной сельскохозяйственной среды, что позволит хозяйствам региона использовать возможности сообщества, сельскохозяйственные ресурсы и возможности. В рамках исследования использование предложенной методики расчета классификации сельскохозяйственных культур в областях Вайоц Дзор и Арарат может стать одним из инструментов реализации вышеизложенного, признавая конкурентоспособность как способность сельхозпроизводителей быть эффективными.
- Анализ и исследования, проведенные в сфере агрострахования в рамках исследования, свидетельствуют о том, что, хотя зона страхования расширилась на все регионы Армении, и все общины имеют возможность застраховать свои сады и поля, 21% осведомлены о реализации Госпрограммы по внедрению системы страхования в аграрном секторе.
- Внедрение системы агрострахования затруднено тем, что не проводится надлежащее измерение сельского хозяйства, поэтому на этапе заключения договора довольно сложно определить застрахованную посевную площадь и ее размер, а также виды.
- Анализ на региональном уровне показывает, что метод стоимости производства положительно влияет на регионы с низкой урожайностью и отрицательно на регионы с высокой урожайностью. Эффективнее будет распределить страховую сумму по доходности и рентабельности регионов. В частности, весной каждого года нужно устанавливать размер страховки на этот год, исходя из средней закупочной цены винограда предыдущего года и средней урожайности с гектара. В результате, например, в 2022 году может быть определен лимит страховой суммы от 500 000 до 3 000 000 драмов РА в областях Арарат и Вайоц Дзор, исходя из ориентировочных расчетов сумм страхования урожая винограда.
- Сегодня не хватает качественных, своевременных данных для сельскохозяйственных консультантов и фермеров в марзах Вайоц Дзор и Арарат. В частности, отсутствует информация об орошаемых площадях по способам орошения, а также не проведено зонирование земель и картографирование.
- Внедрение инновационных технологий в Республике Армения в целом и в областях Вайоц Дзор и Арарат в частности все еще находится на начальной стадии. Существенными препятствиями для их более эффективной и крупномасштабной организации являются отсутствие необходимого финансирования, низкий уровень знаний фермеров, небольшой размер хозяйств, а также отсутствие опыта внедрения и применения инновационных технологий и низкий уровень распространения существующей передовой практики.

Изучая климатические сельскохозяйственные риски Республики Армения, можно сделать вывод, что внедрение страхования сельскохозяйственных рисков в нашей стране - сложный и долгосрочный процесс, учитывая частоту рисков, климатическое разнообразие, большие убытки, недоверие страховых компаний, отсутствие статистики и неточности.

Исследования международного опыта страхования сельскохозяйственных рисков показывают, что по сравнению с другими формами и видами страхования, агрострахование требует большей государственной поддержки и необходимого внимания со стороны государства, при котором происходит только эффективное развитие этой формы страхования. Активизация и полная реализация программ государственной поддержки в сфере сельского хозяйства приведет к улучшению условий реализации сельхозпродукции, улучшению отношений между сельхозпроизводителями и переработчиками, внедрению современных методов и технологий в сельскохозяйственное производство и процессы обслуживания.

Политика развития сельского хозяйства в этих регионах должна быть направлена на:

- эффективное использование ресурсного потенциала сельского хозяйства;
- внедрение передовых технологий, повышение уровня интенсификации сельского хозяйства;
- снижение климатических рисков и увеличение доходов хозяйствующих субъектов.

В заключение можно констатировать, что для повышения благосостояния сельских районов и удовлетворения потребностей развития сектора в наблюдаемых регионах необходимо инвестировать в диверсификацию и развитие прибыльной деятельности. Это означает, что в результате изменения структуры пахотных земель в областях Вайоц Дзор и Арарат можно обеспечить более высокую эффективность в сельскохозяйственном секторе и выделить государственные средства, особенно на выращивание культур, которые имеют конкурентные преимущества в этих марзах.

Геополитическое положение и интересы экономической безопасности Вайоц Дзорской и Араратской областей требуют разработки и реализации разумной аграрной политики для укрепления сельских территорий, эффективного управления демографическими процессами и повышения продовольственной безопасности.

Head of research team

ARPINE HOVAKIMYAN

PhD in Economics, Associate Professor

Members of research team

TSOVINAR KARAPETYAN

PhD in Economics, Associate Professor

GARIK SIROYAN

PhD in Economics, Associate Professor

LIANA FIDANYAN

PhD in Economics, Assistant Professor

MARIAM KHACHATRYAN

*PhD student of the Department of
Macroeconomics*

HASMIK QARAMYAN

ASUE Yeghegnadzor branch student

***PROBLEMS OF INCREASING AGRICULTURAL COMPETITIVENESS
IN THE REGIONS OF RA VAYOTS DZOR AND ARARAT***

DOI: 10.52174/978-9939-61-252-2

The agricultural sector of the Republic of Armenia has traditionally been and remains one of the leading sectors of the country's economy. Taking into account the problem of food security and the priority of rural development, as well as the existing challenges in the field of agriculture, it is important to identify problems in the field of increasing the competitiveness of the agricultural sector and take appropriate measures. These measures should be aimed at creating an appropriate legal framework in the field of agriculture, ensuring favorable conditions for investment in this area, developing agriculture and rural infrastructure, promoting export-oriented production, and introducing new achievements in science and technology.

The increase of competitiveness of the agricultural sector in the domestic and foreign markets is particularly highlighted, which is conditioned by the solution of the most important issue of agriculture and rural development, that is, the solution of the realization issue, which will enable the import of vital food to be replaced with the local production. The issue of increasing the competitiveness of agricultural products is topical for the Republic of Armenia and in particular for Vayots Dzor and Ararat regions, as agricultural companies, that are in an unstable situation and are with a lack of market management experience, will have to compete with large foreign companies entering the domestic market.

In modern economic literature, there is no unified approach to assessing the competitiveness of agriculture. Western researchers are more inclined to quantify this

category. Their goal is to identify a number of factors affecting the efficiency of the agricultural sector, quantify these factors and calculate a composite competitiveness index. At the same time, the competitiveness of individual companies is often used as an object of analysis. In the domestic literature, more attention is paid to the analysis of factors affecting the competitiveness of agriculture. At the same time, the importance of statistical methods for assessing competitiveness is not overlooked. Various indices and methods for assessing this indicator are proposed.

The number of factors affecting the competitiveness of agriculture is large and their share in the overall competitiveness index varies greatly depending on the region, country or other criteria. Therefore, it is difficult to give an accurate quantitative assessment of competitiveness. However, there are a number of competitiveness criteria that play an extremely important role in agriculture in almost all countries of the world. The absence of a unified approach in the field of agriculture and the presence of many factors lead to the need for a more detailed discussion of this issue, drawing up a classification that will take into account modern trends in the development of the agricultural sector.

The study used systematic approaches, as well as methods of comparative analysis, statistical analysis of databases and the study of cause and effect relationships. Desk studies also served as information and methodological basis for the study, which, in particular, included: study and analysis of policy documents, strategies, study of relevant researches, analytical materials and literature, comparison and synthesis of results.

Within the framework of the presented study, the method of analysis and forecasting of time series was also used, with the help of which, within the framework of the study, a number of indicators of the socio-economic development of Vayots Dzor and Ararat were analyzed. Thanks to the method of descriptive statistical analysis, a number of averages, relative indicators, as well as a study of the structure of a set of indicators and structural breaks were evaluated and analyzed. In particular, the analysis was carried out by types of agricultural land, sown areas of major agricultural crops, gross output and agricultural productivity, production indicators of the main livestock products.

The research team's studies, summary, generalization and the analysis of the factual and informative material make it possible to draw the following conclusions and recommendations:

- In Vayots Dzor region grape, fruit and berry plantings are providing higher efficiency, while now most of the current crop subsidies are directed to the production development of grain crops. In Ararat region grape plantings also provide higher efficiency both in terms of yield and net profit.
- Although 11.3% of the total sown areas in Ararat region are used for cultivation of grain and leguminous crops, the efficiency of this agricultural production is quite low.
- From the assessment of the results of the research, it can be concluded that the competitiveness of the agriculture also depends on the ability to create modern systems or qualitatively differentiated agricultural environment for crop rotation and structure of sown areas, which will allow the rural households of the region to use the community's agricultural resources and opportunities effectively. Our use of the proposed method of calculating the ranking of agricultural crops in Vayots Dzor and Ararat regions can become one of the tools for implementation of the above

mentioned, recognizing the competitiveness as the ability of the agriculture sector producers to be efficient and productive.

- Analysis and research carried out in the field of agricultural insurance within the framework of the study indicate that although the insurance zone has expanded to all regions of Armenia and all communities have the opportunity to insure their plantings and fields, 21% are aware of the implementation of the State Program for the introduction of the insurance system in the agricultural sector.
- The introduction of the agricultural insurance system is complicated by the fact that a proper measurement of agriculture is not carried out, therefore, at the stage of concluding a contract, it is rather difficult to determine the insured sown area and its size, as well as types.
- Analysis at the regional level shows that the cost of production method has a positive effect on regions with low yields and negatively on regions with high yields. It will be more efficient to distribute the insured amount according to the yield and profitability of the regions. In particular, it is necessary to establish the amount of insurance for each year in the spring, based on the average purchase price of grapes of the previous year and the average yield per hectare. As a result, for example the limit of the sum insured from AMD 500,000 to AMD 3,000,000 may be determined based on approximate calculations of the amount of insurance for the grape harvest, in the regions of Ararat and Vayots Dzor in 2022.
- There is a lack of quality and timely data for agricultural consultants and farmers in Vayots Dzor and Ararat regions. In particular, there is no information on irrigated areas by irrigation methods, as well as land zoning and mapping have not been carried out.
- The introduction of innovative technologies in the Republic of Armenia in general and in the regions of Vayots Dzor and Ararat in particular is still at an early stage. Significant obstacles to their more efficient and large-scale implementation are the lack of necessary funding, the low level of knowledge and awareness among farmers, the small size of farms, as well as the lack of experience in the introduction and use of innovative technologies and the low level of dissemination of existing best practices.

Studying the climatic agricultural risks of the Republic of Armenia, it can be concluded that the introduction of agricultural risk insurance in our country is a complex and long-term process, given the frequency of risks, climatic diversity, large losses, mistrust of insurance companies, lack of statistics and inaccuracies.

Studies of international experience in agricultural risks insurance show that, in comparison with other forms and types of insurance, agricultural insurance requires more government support and the necessary attention from the state, in which only the effective development of this form of insurance takes place. The intensification and full implementation of state support programs in the field of agriculture will lead to an improvement in the conditions for the sale of agricultural products, an improvement in relations between agricultural producers and processors, the introduction of modern methods and technologies in agricultural production and service processes.

Agricultural development policy in these regions should be aimed at:

- Effective use of the resource potential of agriculture;

- Introduction of advanced technologies, increasing the level of agricultural intensification;
- Reducing climate risks and increasing the income of business entities.

Summing up, we can state that it is necessary to invest in the diversification and development of profitable activities in order to increase the welfare of rural areas in the observed regions and meet the development requirements of the industry. It means that as a result of changes in the structure of sown areas in Vayots Dzor and Ararat regions, it is possible to ensure higher efficiency in the agricultural sector and allocate public funds specifically for the cultivation of crops that have a competitive advantage in those regions.

The geopolitical position and economic security interests of Vayots Dzor and Ararat regions require the development and implementation of a reasonable agricultural policy to strengthen rural areas, effectively manage demographic processes and improve food security.

Հնրագորական խմբի ղեկավար՝
ԱՐՓԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
յնրենսագիրության թեկնածու, դոցենտ

Հնրագորական խմբի անդամներ՝
ԾՈՎԻՆԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
յնրենսագիրության թեկնածու, դոցենտ
ԳԱՐԻԿ ՄԻՐՈՅԱՆ
յնրենսագիրության թեկնածու, դոցենտ
ԼԻԱՆԱ ՖԻԴԱՆՅԱՆ
յնրենսագիրության թեկնածու, դոցենտ
ՄԱՐԻԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ
ՀԱՄՄԻԿ ՔԱՐԱՄՅԱՆ
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի ուսանող

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ**

Խմբագիր՝ *Արմինե Վարդանյան*
Տեխնիկական խմբագիր
և ձևավորող՝ *Նաիրա Խչեյան*
Էջադրող և սրբագրող՝ *Ռուզաննա Պետրոսյան*

Չափա՝ 70×108¹/₁₆:

8,25 տպ. մամուլ:

Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37